

ԷՋՄԻԱԾԻՆ

1977

Բ

Ամ146



ԼԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վիեննա

1977





ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԼՈՆԴՈՆՈՒՄ «ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ԼՈՆՏՈՆԻ «ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»-Ի ՅԱՐԳԱՐԺԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՆ ԵՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայ ժողովրդի ոգեկանության վաւերական արտայայտութիւններից մեկն է հանդիսանում ազգային երաժշտութիւնը, որի գանձարանը բազում դարերի ընթացքում հարստացել է կրօնական և ժողովրդական ինքնատիպ ստեղծագործութիւններով, իսկ վերջին հարիւրամեակին՝ նաև հայ տաղանդաշատ երգահանների աշխարհին ծանօթ գործերով, որոնց մէջ լուսաւոր կատարների են հասել՝ մեր անմահ վարդապետը Կոմիտաս և մեր օրերի շնորհաշատ Արամ Խաչատրեանը, իրենց անկորնչելի վաստակով:

Մենք անհուն ուրախութեամբ ողջունում ենք՝ Լոնտոնում հիմնադրումը ձեր «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի և Մեր օրհնութիւնն ենք առաքում ձեր հայրենանուէր առաքելութեանը՝ մաղթելով, որ փայլուն յաջողութեամբ պսակուեն ձեր բոլոր ծրագրերն ու աշխատանքները՝ նուիրուած հայ երաժշտութեան և առաջին հերթին հայ հոգևոր երաժշտութեան վերարժևորմանն ու տարածմանը աշխարհով մէկ:

Թող հայ երգի լոյսը աւելի ու աւելի տարածուի ու բաշխուի աշխարհին և մշտապէս ճառագայթի քաղաքակիրթ ազգերի երաժշտութեան տիեզերական համանուագի մէջ:

Շատ սիրով ընդառաջում ենք ձեր 24 յունուար 1977 թուակիր խնդրանքին և Մեր անվերապահ համաձայնությունը յայտնում Մեր հայրապետական օրհնությամբ հովանաւորելու ձեր ինստիտուտը և միշտ նեցուկ կանգնելու ձեր ազնիւ իրագործումներին:

Հաւատում ենք ձեր ստեղծարար ոգուն, հաւատում ենք ձեր երիտասարդական սուրբ եռանդին, հաւատում ենք ձեր ազգանուէր երազանքներին:

«Ողջ լերուք զօրացեալ շնորհօք սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20-ը փետրուարի
1977 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԶ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 873



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1977 թ. փետրվարի 7)

Հարգարժան և բարեջան պատգամավորներ,

Հայաստանյայց եկեղեցին հայ ժողովուրդի եկեղեցին է: Հայ ժողովուրդը ինքը հայ եկեղեցին է, իբրև ինքնուրույն և անբաժան մեկ մասը Աստուծո ժողովուրդի: Եվ հայ եկեղեցին հավասարապես եկեղեցին է մեր ժողովուրդի հոգևորական և աշխարհական զավակներուն, որոնք հավասար իրավունք-ներով և պարտականություններով, աշխատանքի բաժին կստանձնեն պատասխանատվության տարբեր աստիճանավորումներով: Ահա այս ոգիով է որ, կիսորհինք, հավաքված եք դուք այսօր իբրև պատգամավորներ թեմա-կան-եկեղեցական ձեր կազմակերպությանց, հոգևոր իշխանությանը ներքև ձեր թեմական սրբազան առաջնորդի, քննարկելու անցնող տարվա՝ ձեր թեմի և եկեղեցիներու գործնեության արդյունքները և մշակելու հառաջիկա տարվա ձեր աշխատանքներու ծրագիրները:

Հոգեկան անհուն մխիթարությամբ կհաստատենք թե եկեղեցաշինական ծավալուն փայլուն իրագործումներեն հետո, ձեր համայնքները լծված են այժմ նույնքան կարևոր կրթական գործնեության, այսինքն դպրոցաշինա-կան իրագործումներու, ամերիկյան բազմալեզու աշխարհի մեջ կենդանի ու վառ պահպանելու համար մեր մայրենի լեզուն և հայ դպրության ու մշակույ-

թի լույսը, որոնք անկորնչելի արժեքներ կհանդիսանան աշխարհի քաղաքակրթության հորիզոնին վրա:

Հպարտ եղեք մեր քրիստոնեական հավատքով: Հպարտ եղեք մեր ազգային լեզվով և մշակութային արժեքներով: Այսպես է որ դուք՝ ձեր առաջնորդության հանձնված ժողովուրդը, պիտի պահպանեք իր հարազատ կրոնական ու մշակութային ոգեկանությամբ, այսպես է որ ինքնուրույն վավերական արժեք և իմաստ պիտի ստանա ձեր հավաքական ներկայությունը, ձեր հայկական գոյատևումը Ամերիկայի մեջ, ուր դուք ամեն ազատություն կվայելեք նաև այդ տեսակետեն:

Այս խոհերով և հորդորներով Մենք ձեզի կմաղթենք աշխատանքի անսպառ կորով, աննահանջ հավատք և պայծառ լավատեսություն ձեր առաքելության նկատմամբ և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն ձեզի ամենուդ կբերենք Մեր սրտագին գնահատանքը և օրհնությունը հայրական:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14). ամեն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(1977 թ. փետրվարի 7)

Սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն ձեզի ամենուդ հայրական սիրո ողջույն և օրհնություն, բարի մաղթանքներով հանդերձ ձեր հոգեշեն աշխատանքներու լիակատար հաջողության համար:

Կհրճվի Մեր հոգին ամեն անգամ երբ գրիչը ձեռք կառնենք ձեր համագումարներուն առաքելու համար Մեր ողջույնը, Մեր սրտի խոսքը:

Կհրճվի Մեր հոգին, այո, որովհետև քաջ գիտենք թե ձեր համագումարներու նպատակն է հոգևոր շինությունը Մեր ամերիկահայ զավակներուն և անոնց կյանքին մեջ անխառն պահպանումը հայկական ազգային ոգեկանության:

Հայոց Հայրապետը Իր հոգվո հայացքը ձեր վրա սևեռած, լավատեսությամբ կսպասե որ դուք բոլորդ՝ ուխտապահ սպասավորներ Հայաստանյայց եկեղեցվո, սուրբ Հոգիով լեցված, կարգապահ շարքերով նվիրվիք ձեր առաքելության՝ աներեր ու անշփոթ, ղեկավարությանը ներքև ձեր թեմակալ առաջնորդ սրբազան Հոր:

Ամուր կանգնած մեր նախնյաց լույս հավատքի վեմին վրա, լավատես դեպի հայ ժողովուրդի ապագան, մի տարվիք շփոթեցուցիչ մտածումներե և հոսանքներե: Վճիտ ու անաղարտ պահպանեցեք մեր ժողովուրդի հոգին, իր քրիստոնեական և հայկական ազգային արժեքներով, որոնք անցնող դարերու նվիրական ժառանգությունը կհանդիսանան մեր ազգին: Այս է, այս պետք է ըլլա ձեր բոլորի հիմնական և տևական մտահոգությունը, ձեր բոլորի հիմնական ու տևական մտասևեռումը, ձեր բոլորի հովվական գործունեության առանցքը:

Գիտենք թե այս ճանապարհը դժվարին է և հաճախ տառապալից, անհաղթահարելի թվացող արգելակիչ պայմաններու առջև, սակայն այս է որ կսպասվի ձեզմե, այս է ձեր աշխատանքի ճամփան, որով դուք պիտի կարողանաք փրկության ափին բերել մեր պանդուխտ ժողովուրդը: Այս է ձեր իրավ փառքի ճամփան:

Թող Աստված շեն ու լուսառատ պահպանե ձեր աղոթքի Տուները:

Թող Աստված անփորձ ու անվտանգ, մեկ ու անբաժան պահպանե համայն հայ հավատացյալ ժողովուրդը հԱմերիկա:

Թող Աստված նոր ներշնչումներ, հոգատարություն ու գործելու անսպառ եռանդ պարգևե ձեզի բոլորիդ, այժմ և միշտ:

«Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ ի ձեզ, ցուցցէ ի բարուք գնացից զգործս իւր հեզութեամբ իմաստութեանն» (Հակոբ. առաք. Գ. 13). ամեն:



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՈՐԱՎԱՐԱՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի ևս Մայր Աթոռում հանդիսավորությամբ նշվեցին «Սրբոց Ղևոնդեանց քահանայից» և «Սրբոց Վարդանանց զորավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին» տոնը և Հայոց Վեհափառ Հոր անվանակոչության տարեդարձը:

Փետրվարի 17-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում, ս. Վարդանանց տոնի առիթով, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը: «Հայր մեր»-ից առաջ կատարվում է հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց ազգիս հայոց»:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանի առջև օրվա տոնի եկեղեցասիրական և հայրենասիրական նշանակության մասին բովանդակալից քարոզ է խոսում պատարագիչ սրբազանը՝ որդիական երախտագիտությամբ և շնորհակալությամբ շնորհավորելով Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը: Ապա կատարվում է հայրապետական մաղթանք:

Նույն օրը, ժամը 13-ին, ս. Վարդանանց տոնի առիթով, հոգևոր ճեմարանի հանդիսության դահլիճում տեղի է ունենում հանդես՝ նախագահությամբ Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանի:

Նախագահության սեղանի շուրջ տեղ էին գրավել նաև լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանն ու փոխտեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Հանդեսն սկսվում է Հայաստանի պետական հիմնի կատարմամբ, որին հաջորդում է «Ճեմարանի քայլերգ» խմբերգը:

Հանդիսության առիթով բացման խոսք է ասում հոգևոր ճեմարանի փոխտեսուչ տ. Անանիա վրդ. Արաբաջյանը:

Ապա ճեմարանի սաները ոգևորությամբ կատարում են «Նորահիրաշ պսակաւոր» և «Արիացեալք» շարականները:

Օրվա խորհրդին նվիրված զեկուցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի հայ ժողովրդի պատմության դասախոս, դոցենտ Սիմոն Կրկյաշարյանը:

Հարգելի բանախոսը հակիրճ, բայց ամբողջական ձևով վեր է հանում Ղևոնդյանց և Վարդանանց կատարած հերոսական սխրանքը Ե դարի կեսին հայ ժողովրդի պատմության ճգնաժամային ու ծանր օրերին:

Վարդանանց պատերազմը միակ պատերազմն է եղել հայոց վաղ անցյալի պատմության մեջ, որին իր մեծ մասնակցությունն են բերել հավասարապես հայ ժողովրդի բոլոր դասերի ներկայացուցիչները: Այլ խոսքով՝ այդ կռիվը հայրենական պատերազմի բնույթ է ունեցել:

Հարգելի բանախոսը վերջում, որդիական երախտագիտությամբ շնորհավորելով մեր սիրելի Հայրապետի անվանակոչության տարեդարձը, ասաց.

«Վարդանանց ու Ղևոնդյանց այս տոնի առթիվ պարտք ենք համարում հիշել, որ այսօր տոնն է նաև անվանակոչության ազգիս Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա

կաթողիկոսի: Ծնորհավորում ենք Վեհափառին և ի սրտե մաղթում, Իր գահակալության 22-րդ տարեդարձի առթիվ, որ Տերը երկար կյանք պարգևի Նորին Սուրբ Օծության՝ ի փառս Հայաստանյայց սուրբ եկեղեցու և ի բարօրություն հայ ժողովրդի, որ ի Հայաստան երկրի և ի սփյուռս աշխարհի»:

Բանախոսությունից հետո գործադրվում է գեղարվեստական մի հայտագիր՝ հոգևոր ճեմարանի ուսանողության կատարմամբ:

Սուրբ Ղևոնդյանց և Վարդանանց հիշատակին նվիրված հանդիսությունն ավարտվում է տ. Արսեն եպս. Բերբերյանի խոսքով: Նախագահող սրբազանը մի անգամ ևս ոգեկոչում է հայ եկեղեցու և հայ ժողովրդի նահատակների խնկելի հիշատակը, որոնք ընկան 451 թվականի մայիսի 26-ին Ավարայրում, 1036 հայ քաջերի հետ միասին՝ «վասն Հիսուսի և վասն հայրենյաց» նշված անհավասար մարտում:

Սրբազանն իր խոսքում կոչ ուղղեց Մայր Աթոռի միաբանությանը և հոգևոր ճեմարանի ուսանողությանը՝ միշտ ոգևորվել և առաջնորդվել ս. Ղևոնդյանց պանծալի քահանաների զոհողության ոգով և Վարդանանց քաջամարտիկ հերոսների հայրենասիրական սիրանքով:

Իր խոսքի վերջում սրբազան հայրը որդիական երախտիքով, հանուն Մայր Աթոռի միաբանության, մի անգամ ևս շնորհավորեց Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը՝ մաղթելով Նրան երկա՜ր-երկա՜ր արևոտ տարիների կյանք Լուսավորչի դարավոր սուրբ գահի վրա՝ ի պայծառություն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի, ի միխիթարություն հայ ժողովրդի, որ ի սփյուռս և ի հայրենիս, և ի բարօրություն հայրենյաց:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 4-ին, ուրբաթ.—Այսօր Երևանում, հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Փետրվարի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը ս. Սարգիս զորավարի տոնի առիթով՝ «Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց» (Սաղմոս ՃԺԵ 15) բնաբանով:

*
* *

Փետրվարի 8-ին, երեքշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը տեսչության ղեկավարությամբ եռօրյա ձմեռային շրջապտույտի է մեկնում Աղվերան:

*
* *

Փետրվարի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում հրաժեշտի պատարագ է մատուցում Անթիլիասի կաթողիկոսության միաբան տ. Անուշավան վրդ. Դանիելյանը, որը շուրջ երկու ամիս ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Եթէ ոչ ծարաւի իցէ, եկեսցէ առ իս եւ արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

*
* *

Փետրվարի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամասացությունից հետո, կատարվում է Տեառնընդառաջի նախատոնակ և անդաստան Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ:

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, հոգևոր ճեմարանի մարզադաշտում, Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսների և ուսանողների ծափերի տակ Վեհափառ Հայրապետը վառում է Տեառնընդառաջի ավանդական խարույկը: Ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը վա-

նական սեղանատանը, օրվա մեծ տոնի առիթով, բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել միաբանության անդամներին, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

* * *

Փետրվարի 14-ին, երկուշաբթի.—Տեառնընդառաջ, տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը:

* * *

Փետրվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Մայր տաճարում, երեկոյան ժամասացությունից հետո, կատարվում է սուրբ Վարդանանց նախատոնակը՝ նախագահությամբ լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

* * *

Փետրվարի 20-ին, կիրակի.—Բուն բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առջև, ս. պատարագ է մատուցում տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը: «Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի առթիվ, քարոզում է տ. Անուշավան վրդ. Դանիելյանը՝ «Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լիցուք գործողին եւ ընդ հրեշտակս երգեցուք փառք ի բարձունս Աստուծոյ» (շարական) բնաբանով:

* * *

Փետրվարի 24-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, ճեմարանի ուսանողների և միաբանության համար, «Աստվածաշնչյան աղբյուրները հայերի և Հայաստանի մասին» թեմայով իր երկրորդ դասախոսությունն է կարդում Երևանի պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Հայկ Մելքոնյանը:

* * *

Փետրվարի 27-ին, կիրակի.—Արտաքսման կիրակի.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առջև, ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե 48) բնաբանով:



ՍՈՒՐԲ ՂԵՎՈՆԴՅԱՆՔ

«Յիշատակ արդարոյ գովութեամբ, անուն ամպարշտաց շիջցի»
(Առակ. Ժ 7)

Մեր եկեղեցին ամեն տարի Մեծ պահքից առաջ, մի ամբողջ յոթնյակ, գեղեցիկ մտածումն է ունեցել մասնավոր կարևորությամբ համախմբելու ազգային հիշատակներին նվիրված տոները, որոնք սերտորեն կապված են Ե դարի հայ հավատքի, հայ ժողովրդի և հայրենիքի պատմության հետ: Այս կարգադրությունը եկեղեցական-հայրենասիրական մասնավոր նշանակություն ունի մեր հավատացյալ ժողովրդի կյանքում:

Այդ յոթնյակի առաջին տոնն է ս. Սահակ Պարթև Հայրապետի տոնը: Դրանով շեշտվում է, որ յոթնյակի երկու մեծ ու կարևոր տոնախմբությունները՝ ս. Ղևոնդյանց քահանայից ու ս. Վարդանանց քաջամարտիկ նահատակները, հարազատ սերունդներն ու աշակերտներն են մեծ լուսավորիչ Հայոց Հայրապետի, նահատակներ, որոնք «արդարութեամբն ճոխացեալ, իմաստութեամբն պայծառացեալ, հեղին զարիւնս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ»:

Այս իմաստով Ղևոնդյանց նահատակությունը **հերոսացումն է հայ եկեղեցու, իսկ Ավարայրը՝ հավաքական սրբացումը հայ ժողովրդի:**

Ս. Ղևոնդյանց ոգով և Վարդանանց խորհրդով սերունդներ են դաստիարակվել և այսպես անցել են դարեր ու դարեր:

Փոխվում են ժամանակները, փոխվում են նաև հանուն հավատքի և հայրենիքի մղված պայքարի ձևերն ու կերպերը, բայց մնում է հայ ժողովրդի գիտակից վճռականությունը ապրելու, ստեղծագործելու, պահելու իր հոգու և մտքի անկախությունը, իր հայրենի սրբազան հողը:

Սուրբ Ղևոնդյանք Հազկերտի դավանափոխության պատասխան նամակը խմբագրողներից և Վարդանանց հերոսամարտը նախապատրաստողներից են. Հովսեփ կաթողիկոս Վայոցձորեցի կամ Հողոցմեցի, Ղևոնդ երեց, Սահակ եպս. Ռշտունեցի, Մուշե Աղբակեցի, Արշեն Բագրևանդեցի, Սամվել և Խորեն երեցներ, Քաջաջ և Աբրահամ սարկավագներ, անուններ, որոնք ևս, ինչպես Վարդանանք, ընկան «վասն Յիսուսի և վասն հայրենեաց»: Հազկերտը քաջ գիտեր, որ հայ եկեղեցու այս սպասավորներն են, որ Վարդանի մահից ահա երեք տարի անց «Իմացեալ մահ» դրոշով դեռ շարունակում են ոգեշնչել Հայոց աշխարհը և մերժում են մազդեզը ու Հայոց երկիրը զսպանակված պահում Պարսկաստանի դեմ: Այո՛, նա գիտակցում էր, որ ստրկությունը մերժողների բարոյական հաղթանակի դրոշն առաջինը պարզողներն այս անհողդողդ խումբն է՝ Ղևոնդյանք, Ավարայրը տեսած, մասամբ մասնակցած և իրենց հոգևոր-բարոյական աջակցությունը բերած:

Ավարայրին խաղաղություն չհաջորդեց, և այդ օրերին էլ այս քահանաների խումբը, գլխավորությամբ Ղևոնդ երեցի, ազգին առաջնորդեց իր ուղիղ ու փրկարար ճանապարհով, մեր ս. եկեղեցու և հայրենիքի ոգու շահերի համաձայն՝ միշտ նույն քաջ կեցվածքով:

Մեծ պատերազմը և հետագայի օրերը Ղևոնդյանց միջոցով ո՛չ հուսահատություն բերեց և ո՛չ էլ տեղատվություն, ուստի հետո էլ նրանք շարունակում էին իրենց ճըշ-

մարիտ քարոզչությունը՝ հրավիրելով բոլորին համախմբվելու հայ եկեղեցու հովանու ներքո և ս. Վարդանի ու հայրենաշեն աշխատանքի շուրջ, և եթե անհրաժեշտ է՝ նահատակվելու: Ս. Ղևոնդյանք շարունակում էին ուսուցանել, թե մեր գործն արդար է, և թե ուրեմն «Ցիշատակ արդարոյ գովութեամբ, անուն ամպարշտաց շիջցի»: Այսպես Ղևոնդյանք նորովի ամրապնդում են ժողովրդի ոգին քաղաքական-հայրենասիրական հողի վրա և նախապատրաստում հոգու ստրկությունը մերժելու հազկերտյան ամեն մի առաջարկի դեմ:

Հազկերտն իր թագավորության 18-րդ տարում պարտվում է քուշաններից: Ըստ նրա, այս դեպքում էլ իր պարտության պատճառը հայերն էին և մանավանդ Ղևոնդյանք, որոնք Վարդանից հետո դեռ համառորեն շարունակում էին երկրի առաջնորդության ղեկն իրենց ձեռքում պահել: Ուստի ժամանակը չէ՞, մտածում էր նա, ստիպել մազդեզն ընդունել տալ և կարևոր վճռականությամբ ազատվել թե՛ նրանցից և թե՛ նրանց անեծքից, որ պատճառն էր իր պարտության՝ քուշաններից: Այս որոշման վրա բանիանները կանչվում են Պարսկաստան և աքսորվում: Ապար աշխարհի Նյուշապուհ բերդում ստիպումներով և բռնությամբ նրանց դավանափոխությունը հանձնվում է մոգպետին: Բայց Ղևոնդյանք բանտում էլ նույնն էին, ինչ որ իրենց տանը կամ Ավարայրի օրերին. «Ցայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խափանել՝ ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն գինչ և դառն հարուածք»: Լավ է ասված՝ «Սիրտն ունի բանականություն, որ բանականությունը չգիտե» (Պասկալ): Սակայն Հազկերտի և նմանների համար ի՛նչ սիրտ և ի՛նչ բանականություն: Ամեն մի ժողովուրդ այս աշխարհում ազատ ապրելու իր իրավունքն ունի: Նրանք չգիտեին, որ մարդուն բանտարկելով կամ սպանելով նրա միտքն ու հոգին չեն կարող վանդակի մեջ դնել, ու չէ՞ որ քրիստոնյաների համար կար նաև վերերկրայինը՝ հավիտենականը, որ նախ իմաստավորվում է այստեղ ապրվածով և ապա անանցով:

Հայ բանտարկյալների նկատմամբ գործադրված անմարդկային չարչարանքներ և դաժանությունները տևում են 23 օր: Դենշապուհ, որի պարտականությունն էր հավատափոխության ստիպումը, համոզվելով իր ջանքերի ապարդյուն լինելը, նոր հրամանի համաձայն նվիրյալներին առաջնորդեց կառափնարան: Այստեղ էլ Ղևոնդյանք կրկնում էին ս. Վարդանի հավատամքխոսքը. «Երկիւղ թերահաւատութեանն է նշանակ, զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մեռուցեալք»: Ուստի այս **լինելու և չլինելու** պահին իսկ Ղևոնդյանք քաջաբար մերժում էին ամեն մի փոխզիջում, որպեսզի չվտանգվեն հարազատ ժողովրդի և եկեղեցու նվիրական շահերը:

Ամեն բան վերջացած էր: Ի վերջո որոշվում է նահատակել ս. Ղևոնդյանց բանիանից: Եվ բանիանները քաջությամբ նահատակվում են: Նրանց սպանում են ամենաանմարդկային ձևերով. ոմանց գահավեժ սարերից ցած են նետում, ուրիշների ձեռքն են կոտրում, ոտքը կամ ականջը և հետո սպանում, իսկ մնացածներին էլ, բրածեծ անելուց հետո, քարկոծում և նահատակում:

Արժանին մատուցելու համար հիշենք նաև Ղևոնդյանց հետ և նրանց շարքին այստեղ նահատակված նորադարձ սպասիկներին՝ դենպետի գլխավորությամբ:

Այսպես Վարդան Մամիկոնյանով սկսած հավատքի և հայրենասիրության պատերազմը շարունակվում է և պսակազարդվում մեր եկեղեցու այս սրբերի նահատակությամբ: Այո՛, այսպես միշտ, երբ անհրաժեշտ է, հայ հոգևորականը գիտե թե՛ արտասանել իր քարոզությունը և թե՛ խոսքը վերածել գործի՝ ասելով. «Ոչ եմ իբրև զայս ի մարդկանէ» (Ղուկ. ԺԸ 11): Իսկ մանավանդ եթե ս. Սահակի և ս. Մեսրոպի անմիջական աշակերտն ես, ինչպես Ղևոնդյանք, չես կարող մոլորյալ և հավատուրաց նահապարհով գնալ: Մեր ս. եկեղեցու այդ լուսավորիչները վառեցին լույսը մեր հոգիների և ս. Ավետարանով դարձյալ ու դարձյալ պահանջեցին. «Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս և ես սիրեցի զձեզ: Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դնիցէ ի վերայ բարեկամաց իւրոց» (Հովհ. ԺԵ 43):

Ղևոնդյանք՝ մեր եկեղեցու ուխտապահ և սուրբ զինվորները, նահատակ քաջերը մեր հայրենիքի, իրենց անձը զոհեցին հանուն Աստուծո, հանուն հայրենիքի, որպեսզի ոչ միայն իրենց միջոցով հավետ ապրի մեր երկիրը և նրա ժողովուրդը, այլև մեր քրիստոնեական եկեղեցին, որի սպասավորությանն այդպես անկաշառ ծառայեցին իրենք: Այսօր նրանք սրբացված են, «... և սուրբ հոգիք նոցա հոգևոր բարեխօսութեամբն զԱստուած յողորմութիւն աշխարհի ածեն և նշխարք ոսկերաց նոցա փրկութեան շնորհ ընծայեն ի ժողովս հաւատացելոց, որպէս ամենեցուն և քաջայայտ է զի երևեսցի սէրն Աստուծոյ ի նոցա նշխարսն բնակեալ» («Հանդիսապատում» ԺԶ):

Պատմության ընթացքում միշտ էլ, երբ մեր երկրի երկնքի վրա մռայլ ամպեր են

կուտակվել, ս. Վարդանով, Ղևոնդյանց ոգով և հավատքով մենք կարողացել ենք ի չիք դարձնել ամեն մի վտանգ: Այդպես չէ՞ր, որ մենք հաղթեցինք Սասունում և Զեյթունում, և այդպես չէ՞ր, որ Սարդարապատում և հայրենական մեծ պատերազմում մեր ազգի զավակները փայլեցին իրենց հերոսական, որ և նույնն է՝ Ղևոնդյանց ոգով: Սարդարապատում մերօրյա Ղևոնդ երեցներ դարձան Գարեգին եպս. Հովսեփյանցը՝ ս. Էջմիածնից, Զավեն արքեպ. Մահտեսի Բաբայանը՝ առաջնորդն Էրզրումի, Եզնիկ եպիսկոպոսը և Դանիել վարդապետը՝ Աղթամարի վանքից, Թադեոս վարդապետը՝ Մշո Առաքելոց վանքից, Հովհաննես քհն. Տեր-Մինասյանը՝ Ապարանից, Հարությունն քահանան՝ իր 250 մարդկանցով Կոտայքից, և շատ ուրիշներ, նաև աշխարհազորայիններ Հայաստանի զանազան շրջաններից:

Հովհաննես Իմաստասեր Սարկավագ վարդապետը գրել է ս. Ղևոնդյանց քահանայից հիշատակին նվիրված Օրհնությունը՝ «Որ յառաջագոյն սահմանեցեր», և Մանկունքը՝ «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք»: Սարկավագ վարդապետն իր շարականներով աշխատել է Ղևոնդյանց կրոնաբույր և հայրենասեր ոգին զարթեցնել հայ ժողովրդի գաղթական բեկորների մեջ և ողջ հայությանը հավաքել հայ եկեղեցու հովանու ներքո:

Այս երկու շարականները խնդրանք ու աղերսանքներ են՝ ուղղված Աստծուն, որ «Աստված հայ եկեղեցու ցրված մանուկներին, տրտմությամբ և հորդահոս արտասուքով բռնագաղթվածներին նորից ժողովի ուրախությամբ և փրկի» Հայոց աշխարհում: Հայրենի հողի վրա «ցրված հայ ժողովրդին հավաքելու այս տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք և շատ վաղ՝ Սարկավագ վարդապետի ձեռքով մտնում են մեր ժամերգության մեջ» (Մ. Աբեղյան):

Փա՜ռք Ղևոնդյանց սուրբ հիշատակին և նրանցով մեզ ավանդված ճշմարիտ եկեղեցասիրությանն ու հայրենասիրությանը:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԽՈՀԵՐ

Ա.

«Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց, և զամենայն անօրէնութիւնս իմ բաւեա յինէն: Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում» (Սաղմոս Ծ 11—12):

Աստված, դարձրու քո երեսը իմ մեղքերից և իմ բոլոր անօրենությունները ինձնից հեռացրու: Իմ մեջ հաստատիր սուրբ սիրտ և իմ էության մեջ նորոգիր ուղիղ հոգի:

Բարեկենդան է այսօր, և Հայաստանյայց եկեղեցին ու իր հավատացյալ զավակները կանգնած են նրա սեմին՝ դիմավորելու հանդեսը հոգևոր վերածննդի մի շրջան: Հաջորդ քառասուն օրերի ընթացքում եկեղեցին, երբև մեր խնամակալ մայրը, Աստվածաշնչի հոգևոր սննդով մեզ պատրաստում է ընկալելու Քրիստոսի հրաշափառ Հարությունը: Շուտով սկսվող Մեծ պահքի շրջանը պետք է ամեն մեկիս համար դառնա մի շրջան հույսի ու լույսի, մի շրջան՝ վերստին ծնվելու և նորոգվելու, մի շրջան՝ մխիթարանքի ու հրճվանքի: Վերածնունդ ու վերանորոգում, հույս և լույս, մխիթարանք ու հրճվանք հոգեկան մաքառումների արդյունք են, որոնցում չարը ընդմիշտ հաղթվում է: Եթե մենք ցանկանում ենք մասնակից լինել Քրիստոսի Հարությանը ու Նրա շնորհած լույսին ու հույսին, եթե ցանկանում ենք հրճվել ու միսիթարվել ի տես ոտնակոխ արված մահվան, եթե փափագում ենք իրապես վերածնվել ու վերանորոգվել ինչպես ինքը Քրիստոսը Զատկի արշալույսին, ապա մենք մեզ պետք է գտնենք նախապատրաստվելու քաղցր պարտականության ներքո:

Ահա թե ինչու մենք Մեծ պահքը դիմավորում ենք սաղմոսերգուի վերոհիշյալ աղերսանքով: Այստեղ պետք է ընդգծել Սաղմոսաց Գրքի կարևորությունը և անհրաժեշտությունը իբրև անարատ աղբյուր աստվածապաշտության, երբ բազում դարեր, Հին Կտակարանի օրերից սկսած մինչև մեր ժամանակները, բյուրավոր մարդիկ հոգու խորքերից բխած այդ քաղցր ու համարձակ երգերի միջոցով կամեցել են հաղորդակցության մեջ մտնել իրենց Արարչի հետ: Ահա թե ինչու քրիստոնեական եկեղեցին ժառանգել ու խորթ չի գտել Հին Ուխտի այդ սովորույթը: Ահա թե ինչու Հայաստանյայց եկեղեցին լայն տեղ է հատկացրել իմաստուն սաղմոսերգուին՝ հաճախ քաղելով նրա ջերմեռանդ բովանդակությունից հոգևոր սնունդ իր ամենօրյա պաշտամունքի ընթացքում:

Ինչքան հիանալի ու հաճելի կլիներ մեր կենցաղն ու ապրելակերպը, եթե մենք

նույնպես, ըստ մեր կարողության, նմանվեինք սաղմոսերգուին, որ դիմեց իր Արարչին սույն խնդրանքով:

«Աստված, դարձրու քո երեսը իմ մեղքերից և իմ բոլոր անօրենությունները ինձնից հեռացրու»:

Արդյոք այս չէ՞ իմաստը կյանքի, որ մենք մահկանացուներս բաղձանք ունենանք ընդմիշտ նորոգվելու ու վերածնվելու, հոգեպես մեզ մաքուր զգալու, հոգեպես ազատ լինելու ու անկաշկանդ, որ մեր կարճ երկրային կյանքն էլ ունենա մի խորունկ իմաստ ու պայմանավորված չլինի աշխարհիկ այլազան ու երբեմն այլանդակ արտահայտություններով:

Վերոհիշյալ բնաբանով մեղապարտ հոգին ուրիշ ոչինչ չի խնդրի Նախախնամությունից, եթե ոչ՝ փրկվել հոգեկան տագնապներից, եթե ոչ՝ ձերբազատվել մեղքի ճիրաններից: Ինչպե՞ս կարելի է ողջունել Քրիստոսի փառապանծ Հարությունը, եթե մեր ամբողջ էությամբ գործակալները եղած լինենք խավարի իշխանի՝ կատարելով նրա հազար ու մեկ քմահաճույքները: Ահա թե ինչու սաղմոսների բոլոր աղաղակներն ու աղերսանքներն առ Աստված ազատագրական պոռթկումներ են, որոնց շնորհիվ մենք կփութանք վերադառնալ երկնային անդաստանից ներս իբրև մաքուր ու անաղարտ հոգիներ՝ հրավիրելու Աստծուն, որ գա ու բնակվի մեր մեջ:

Մարդկության հատուկ ու բնական ճակատագիրն հետևյալն է՝ լինել տաճարներ երեքարբյան մի Տերության: Իմ ընտրած բնաբանը վկա է այս աքանչելագործ իրողության: Սաղմոսերգուն ոչ թե խնդրում է միայն ու միայն իր մեղքերի ներումն ու քավությունը, այլ շատ ավելին, այնինքն այն, որ նա հանդգնություն է ունենում խնդրելու իր Արարչից, որ Նա իր տկար ու սահմանափակ էության մեջ սուրբ սիրտ հաստատի և այնտեղ նորոգի ուղիղ հոգի: Այլ խոսքով՝ նա ցանկանում է վերադառնալ այն հոգեվիճակին, երբ դեռ մեղքը գոյություն չուներ նրա մեջ, այսինքն լինել մի նոր ստեղծագործություն Աստծու պատկերով:

Ու դեռ շատ ավելին. նա խնդրում է, որ իր ստեղծողի պատկերն իր մեջ մնա առհավետ և այս իսկ պատճառով նա հայցում է սուրբ Հոգու ներգործությունը: Սուրբ Հոգին է, որ մեզ ու մեր կամքին զորություն է տալիս՝ դիմադրելու ամեն տեսակի փորձությանց ու մեր անձերը պահել կայուն ու հաստատ: Ահա սաղմոսերգուի հրաշալի խնդրանքը, խնդրանք, որ պետք է դառնա ամեն մեկիս անձնական ցանկությունը.— «Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում...»:

Ցանկալի պիտի լիներ, եթե բոլորս ջանայինք հաջորդ քառասուն օրերի ընթացքում ընթերցել ու վերընթերցել սաղմոսները՝ հասկանալու համար այնտեղ թաքնված գանձերի նպատակը: Վստահ ենք, որ բազում պատասխաններ պիտի գտնենք այնտեղ մեզ հուզող տարբեր հարցերի մասին: Սաղմոսներն արտահայտում են բազմազան հոգևոր տրամադրություններ ու վիճակներ և, չենք կարծում, որ գտնվի մարդկային հոգեկան մի ապրում, մի տենչանք, որ Աստվածաշնչի այդ էջերում ներկայացված չլինեն վճիտ ու միշտ այժմեական բնույթով:

Եկեք ուրեմն Մեծ պահքի նախապատրաստական շրջանին իմաստությունն ունենանք դիմելու մեր Աստծուն, որ մեր քարեղեն սրտերո ճմլի իր սիրով, ինչպես ասում է սուրբ Ներսես Շնորհալին: Սաղմոսները պիտի սովորեցնեն բոլորիս Աստված փնտրելու և փառաբանելու խորհուրդը խոր ու հստակ ձևով: Ու մենք մաքուր հոգիներով հրավեր կարդանք, որ մեր մեջ մերոստին ծնվի աստվածային սատկերո կենարար, որ մեր մեջ վերստին բնակվի Հարուցյալ Քրիստոսը Զատկի լուսածագին:

Տեր Աստված հարցն մերոց, «Ուրախ լիցին ամենեքեան ոք յուսացեալ են ի քեզ, յաւիտեան ցնծասցեն. և բնակեսցես դու ի նոսա» (Սաղմոս Ե 12). ամեն:

ՎԱՉԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ

Բ

«Զճանապարհս քո ցո՛յց ինձ, և զշաւիղս քո ուսո՛ ինձ. առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեան քում և ուսո՛ զիս, զի դո՛ւ ես Աստուած փրկիչ իմ» (Սաղմոսաց ԻԴ 5):

«Տեր, ցո՛ւց տուր ինձ քո ճանապարհները և սովորեցրո՛ւ ինձ քո շավիղները. առաջնորդի՛ր ինձ քո ճշմարտության մեջ և սովորեցրո՛ւ ինձ, որովհետև դո՛ւ ես Աստված՝ իմ փրկիչը»:

Դավիթ Մարգարեի «Սաղմոսաց գրքից» վերցված այս գեղեցիկ բնաբանը մի աղաչանք է, սրտագին մի աղոթք առ Աստված, Որից մարգարեն օգնություն է խնդրում: Աստված էր Դավթի միակ հույսը, Աստված էր միայն ի վիճակի օգնել նրան, ինչպես նաև բոլոր մարդկանց: Եվ մեզանից ո՞ր մեկը, սիրելի հավատացյալներ, չի զգում կարիքն Աստուծո օգնության, չի կարոտում Նրա ողորմությանը:

[illegible]

«Աստուած, Աստուած իմ, նայեա՛ց առ իս. ընդէ՞ր թողեր զիս» (Սաղմոս ԻԱ. 1), բացականչում էր ողջ մարդկությունը մարգարեի բերանով: Հանցավոր մարդը, Աստծուց հեռու, առանց հենարանի, մենակ էր զգում իրեն՝ ճնշող մեղքերի ծանր բեռի տակ: Անզոր էր նա մենակ պայքարելու իր փրկության համար, անկարող էր գտնելու, սառանց Գերագույնի օգնությանը, առ Աստված տանող վերադարձի ճանապարհը:

Մահվան սարսափը սրտում, մարդը տագնապահար աչքերով որոնում էր փրկության ճանապարհը, որը սակայն թաքնված էր իր մեղքերի վիթխարի պարապի ետևում: Անթափանցելի արգելքը զրկում էր մարդուն աստվածային լույսից, հենց այն պահին, երբ նա ամենից շատ Նրա՛ կարիքն էր զգում: Բայց խավարն էր իշխում, և խավարածածկ աշխարհում, մեղքի որոգայթներ լարած, սատանան փորձում էր հիմնովին խորտակել մոլորված մարդուն: Բոլոր մարդիկ զգացին մեղքերի սուր ժանիքների խայթը, Աստծուց հեռու անցկացրած կյանքի անցողիկությունը: Տառապում էր մարդկությունը՝ մեղանչելով, բայց այս տառապանքի մեջ զարթնում էր նաև մեղքի գիտակցությունը, և խղճի խայթը հանգիստ չէր թողնում մարդուն: Մարդն սկսում էր փրնտրել կորցրած երանությունը՝ զգալով հանդերձ իր անկարողությունը մենակ հասնելու դրան: Իր մեղքերով նա հեռացավ Աստծուց, բայց հիմա նա ուզում էր վերադառնալ առ Աստված: Սակայն ո՞ւր էր այդ ճանապարհը: «Ձնանապարհս քո, Տէր, ցո՛ւց ինձ»,—սա էր խնդրանքն ամեն մարդու, որի հոգում կար Գերագույնի գոյության հավատը, ուրեմն և հույսը օգնության:

Մարդն զգում էր, որ միայն Աստված կարող է օգնել իրեն, և սկսեց ամեն ջանք թափել արժանանալու համար Աստուծո ողորմությանը, աստվածային այս պարգևին: Ամրապնդվում էին հավատքն ու հույսը, և մարդը, մահվան սարսափի քրտնքի մեջ նորած, աշխատում էր փրկել իր հոգին: Ջղջման ոռն արտունքները մաքրում էին մարդու հոգին՝ հեռացնելով նրա միջից մեղքերի ցեխը: Եվ ահա հայտնվում է մարդու հոգում մինչ այդ ծածկված աստվածային ճշմարտության լուսատու ադամանդը: Գերբնական լույսի անսպառ աղբյուրը սկսում է իր ճառագայթներով լուսավորել մարդկանց ճանապարհը: Հավատքն ստիպում է խոսել մարդուն. «Տէր, առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեան քում և ուսո՛ զիս, զի դո՛ւ ես Աստուած փրկիչ իմ»: Զարմանալի է դառնում նորից Աստուծո ներգործությունը, և մարդն անվախ ընթանում է լուսավորված այս ճանապարհով՝ համոզված լինելով, որ կհասնի իր նպատակին. փրկության օրը մոտենում էր:

Մարդու հոգին ձգտում էր դեպի երկինք, դեպի Աստված, դեպի իր սկզբնական ապաստանը. բայց նրան շրջապատող մեղքերի վիթխարի պարիսպն արգելում էր նրան տեսնել իր թռիչքի նպատակը: Արդյոք հուսահատությա՞ն մեջ կընկճվի մարդը: Ո՛չ: Անկեղծ հավատքով, իր նպատակին հասնելու հզոր կամքով զինված մարդը չի նահանջում երբեք: Իր հոգին ազնիվ էր հիմա, մաքուր, և կարոտում էր միայն աստվածային անդորրությանը, երանությանը: Եվ բազումողորմ Աստված, ցանկանալով մեղավորի դարձը և ոչ կործանումը, ուղարկում է աշխարհ Իր միածին Որդուն՝ Քրիստոսին, որպես մարդկության փրկիչ: Աստուծո Օծյալը՝ Տեր Հիսուս Քրիստոս, իջավ աշխարհ՝ մարդուն օգնելու համար: Նա վերացրեց աշխարհի մեղքերը, խորտակեց վիթխարի պարիսպը: Քրիստոս երկրնքից իջած լույսն էր, որը հայտնվեց մարդկանց՝ իրենց փրկության համար, որպեսզի նրանք խավարում չմնան, այլ, հավատալով Նրան, շարունակեն իրենց ճանապարհը որպես լույսի որդիներ: Նա է «Լոյսն ճշմարիտ», և Նրա ետևից գնացողները կհասնեն երկնավոր բարձրությանը:

Հիսուս որպես մարդ պայքարեց մեղքերի դեմ՝ ցույց տալով մարդկանց ճշմարիտ ճանապարհը ոչ միայն խոսքով, այլև իր իսկ օրինակով:

Քրիստոսն է ճանապարհն ու ճշմարտությունը, Նա է Աստված՝ կատարյալ մարդու կերպարանքով մեզ հայտնված, որպեսզի մեզ առաջնորդի դեպի հավիտենական կյանք, դեպի երանություն տանող միակ ճանապարհը: Նա եկավ ցույց տալու համար, որ կյանքը մի աննպատակ երթ չէ դեպի մահ:

Մարդկային կյանքը պետք է լինի անդուլ մի ձգտում առ Աստված հասնելու, որովհետև Աստված է մեր կյանքի սկիզբն ու վախճանը: Բոլորս Աստուծո կողմից ենք ստեղծվել և բոլորս պետք է վերադառնանք Նրա մոտ:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, բացեց մարդկանց վերադարձի ճանապարհը: Բաց է բոլորի համար այդ ճանապարհը, բայց միայն հավատքի լուսով զինվածները կարող են տեսնել այն և ընթանալ նրանով: Հավատքն է հարկավոր ի Քրիստոս և կամք՝ իր օրինակին հետևելու: Շատերը, ընթանալով այս ճանապարհով, արժանացան հավիտենական կյանքի դափնեպսակին. անկեղծ հավատքը փրկեց նրանց:

Բայց, դժբախտաբար, մեծ է նաև նրանց թիվը, որոնք չեն կարող բայլել այդ ճա-

նապարհով, որովհետև հավատքը պակասում է նրանց: Նրանք չե՞ն զգում արդյոք իրենց տկարությունը, անկարողությունը, մարդկային ուժերի սահմանափակումը: Այս բոլորը բավական կլինեն, որպեսզի մարդկանց հոգիներում առաջացնեն Աստուծո գոյության ճշմարտության զգացումը: Աստված կա՛, կա բոլորի՛ համար, և միայն հավատալով Նրան՝ կարող կլինենք գտնել իմաստն ու նպատակը մեր կյանքի: Միայն հավատքի շնորհիվ ի վիճակի կլինենք իմաստավորել մեր կյանքը: Հավատքն է միայն, որ մեզ պարգևում է հույսը Աստուծո օգնության: Եվ ո՞վ չի զգում դրա կարիքը մանավանդ հիմա, երբ կյանքի փորձություններն ու վտանգները սպառնում են մեզ ամենուր: Կյանքի դժվարությունների դեմ պայքարելիս բոլորս զգում ենք մեր անզորությունը, որով և զգում ենք ամենազոր Աստուծո գոյության ճշմարտության հայտնությունը մեր հոգիներում: Զգալով այս, մեզանից ամեն մեկը բացականչում է. «Տէր, առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեան քում և ուսո՛ զիս, զի դո՛ւ ես Աստուած փրկիչ իմ»: Աստված կընդունի հավատացյալի հոգուց բխած այս աղոթքը և կօգնի նրան: Համբերություն և ուժ կպարգևի նրան, կպարգևի բոլորին, որոնք հավատում են Նրան և հույս են կապում Նրա օգնությանը:

Հավատալ Աստծուն, նշանակում է հավատալ Նրա Միածին Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որին Նա ուղարկեց աշխարհ, մեզ՝ մարդկանց օգնելու և փրկելու համար, որպես պատասխան մեր սրտագին աղոթքների:

Աստված երբեք չի լքում մեզ, այլ հաճախ մենք ենք հեռանում Նրանից: Բաց է սակայն վերադարձի ճանապարհը: Ուրախացե՛ք, սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս, բա՛ց է փրկության ճանապարհը, և Աստված սիրով է ընդունում Իր մոտ եկողներին: Քայլենք այս ճանապարհով՝ սփռելով բոլորին մեր հավատքի լույսը, վկայելով բոլորին Նրա մասին, որ փրկությունն ու լույսն է աշխարհի, մեր Տեր Հիսուս Քրիստոս:

«Փառք քեզ, Աստուած, որ պարգևեցեր մեզ, ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգինս ամենայն զփրկութիւնս քո» (Սաղմոս ԿԶ 3):

ՍՈՐԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆԴԱԼՅԱՆ

ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ*
(295—373)

Ժամանակաշրջանը

1974 թվականի հունիսի 20—25 օրերին Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հույն օրթոդոքս եկեղեցու պատրիարքության նախաձեռնությամբ և գլխավորությամբ Ալեքսանդրիայի հունաց Էվանգելիսմոս Մայր տաճարում, ս. պատարագի մատուցմամբ և ապա գիտական-աստվածաբանական լուրջ բանախոսություններով ու հոբելյանական այլ հանդիսություններով, նշվում է ընդհանրական եկեղեցու բազմավաստակ, եռամեծ վարդապետի և մեծահամբավ հայրապետի՝ սուրբ Աթանասի մահվան 1600-ամյակը:

Հանդիսությանը մասնակցում են հույն օրթոդոքս պատրիարքական ինքնագլուխ Աթոռների, ռուս սլավոնական եկեղեցու, ինչպես նաև քույր եկեղեցիների, այդ թվում՝ հայ եկեղեցու ներկայացուցիչները:

Ս. Աթանասն ապրել և ստեղծագործել է Դ դարում, եկեղեցու պատմության մեջ կրոնական, մշակութային, հասարակական ու քաղաքական մեծ վերափոխումներով և իրադարձություններով հարուստ մի ժամանակաշրջանում, ժամանակաշրջան, որն իր անջնջելի հետքերն է թողել և՛ Ե դարի, և՛ հետագա դարերի քրիստոնեական մտածողության ու աստվածաբանական մտքի զարգացման վրա՝ որպես վերին աստիճանի մի բեղմնավոր և հույժ հետաքրքիր շրջան:

«Եկեղեցական աստվածաբանական գիտությունը չի ունեցել ոչ մի շրջան, որը մտքի ընդարձակությամբ և վսեմությամբ, բովանդակության խորությամբ, գաղափարական հարստությամբ և տեսությունների բազմազանությամբ, աստվածաբանական ստեղծագործության բազմազանությամբ կարողանար հավասարվել այն բանին, ինչ որ նա IV—V դարերում անցկացրեց»[1]:

Բ—Ե դարերում անտիկ մշակույթի շրջանակներում հրապարակ իջավ **եկեղեցու վարդապետների և եկեղեցական մեծ հայրերի** մի փառավոր համաստեղություն, որի ստեղծած բազմաժանր ու մեծարժեք եկեղեցական գրականությունը ծանոթ է **Հայրաբանություն** անվան ներքո:

Հայրաբանությունն ընդհանուր եկեղեցա-

---

* Սուրբ Աթանաս Հայրապետի ապրած ժամանակաշրջանի, նրա կյանքի և գործունեությանն ու մատենագրական վաստակին նվիրված սույն նյութը շարադրելիս հանգամանորեն օգտագործվել են թեմայի վերաբերյալ հայերեն և օտար լեզուներով գրված բազմազան աղբյուրներ ու ուսումնասիրություններ:

[1] **Պրոֆ. Ն. Սագարդա**, Հույն-Արևելքի հին եկեղեցական աստվածաբանական գիտությունը, յուր ծաղկման շրջանում (IV—V դդ.). ռուսերենից թարգմանեց Արտակ վարդապետ Սմբատյան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռ ս. Էջմիածնի, 1910, էջ 74:

կան մատենագրության հնագույն և կարևորագույն ժանրն է: **Հայրաբանների ստեղծագործությունները ունեն քրիստոնեական և համամարդկային հնչեղություն:** Հայրաբանական այդ գրականությունը «տոգորված էր մի նոր շնչով, վերանորոգիչ, երիտասարդական ավյունով և լույսով, որը մինչև այսօր էլ փոթորկահույզ ալիքներով ներթափանցում է ընթերցողի հոգու մեջ, հանախ մարգարեական շեշտերով: Հայրաբանների խորիմաստ ու գեղեցիկ հումանիզմը հիմնվում էր Քրիստոսի մարդասիրության վրա, մի նոր աշխարհայաց, մի փիլիսոփայություն, որը հեղափոխեց հին աշխարհը սիրո և զոհաբերության ճանապարհով: Քրիստոսը հայրաբանների համար գերագույն բանականություն էր, որն այրվում էր սիրո մեջ և սիրուց» (**Պրոֆ. Ի. Կոման**, Առաջին չորս դարերի հայրաբանական գրականության արժեքը անտիկ մշակույթի շրջանակներում, «Էջմիածին», 1971, նոյեմբեր, էջ 8—15):

Ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Դ—Ե դարերը հանդիսանում են ճշմարտապես աստվածաբանական մտքի զարգացման ժամանակաշրջաններ:

Այդ դարերին հաջորդող եկեղեցու աստվածաբանների բոլոր սերունդները կանգնում են Դ—Ե դարերի ստեղծագործությունների առաջ հարգանքով լի զարմանքով և այդ հարուստ հոգևոր գանձարանից են վերցնում ճշմարիտ, ուղղափառ հավատքի ու քրիստոնեական տիպար կյանքի համար սկզբունքներ և խրատներ:

Դ դարում հունա-հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության արտաքին դրության մեջ ստեղծված բարենպաստ պայմանները և հիմնական վերափոխումները լիակատար հնարավորություն տվեցին եկեղեցուն ոգեկան և մտավոր բոլոր իր ուժերը կենտրոնացնելու եկեղեցական կյանքի ներքին հարցերի լուծման և կարգավորման վրա:

Դ—Ե դարերում ընդհանուր եկեղեցու պատմության հիմնական հարցերը քրիստոնեական դավանության հարցերն էին կազմում, որոնցով խորապես հետաքրքրվում էին նաև ժամանակակից քաղաքակրթության բոլոր կենտրոններն ու անտիկ հասարակության բոլոր ներկայացուցիչները, մինչև իսկ խոնարհ դասակարգի մարդիկ: «Ամեն բան շարժման մեջ էր, ամեն տեղ վիճում էին, ամենքը հուզված էին»: Եվ դժվար չէ հաստատել, որ աստվածաբանական մտքի զանազան ուղղությունների և փիլիսոփայական դպրոցների կոիվ էր դա[2]:

Ընդհանրական եկեղեցին չորս դար դիմացավ իր գոյության համար մղած պայքարում: Հալածանքները, դատնությունները, այլ կրոնների պայքարը չկարողացան ջլատել եկեղեցու հոգևոր ու մշտանորոգ կյանքը: Եկեղեցին սկսեց ապրել, կազմակերպվել ու զորանալ իր ներքին կյանքով՝ որպես աստվածահաստատ մի ընկերություն, մի ընտանիք:

Մեծն Կոստանդիանոս կայսեր (306—337) հաղթանակը Միլվիանի (Իտալիա) ճակատամարտում և 313-ին Միլանի հրովարտակը եկեղեցու պատմության մեջ հանդիսացան շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություններ: Վերջ տրվեց հեթանոս Հռոմի կայսրությանը և բացվեց քրիստոնեական կայսրության դարաշրջանը: Կայսրության մեջ քրիստոնեությունը 313 թվականին մյուս կրոնների կողքին հռչակվեց թույլատրված և ապա. նախընտրված պետական կրոն[3]:

Այսպիսով եկեղեցին մտավ իր քարոզչական, մատենագրական առաքելության և գործունեության նոր ու խոստումնալից, արդյունավոր մի շրջան, զարգացրեց իր աստվածաբանական-գիտական մտածողությունը, իր ծեսն ու իր արվեստը, կազմակերպեց իր նվիրապետությունը:

Ազատվելով արտաքին հալածանքներից, եկեղեցին նվիրվեց քրիստոնեական հավատքի և ուղղափառ դավանության ու վարդապետական բանաձևերի ճշգրտմանը:

Այս ուղղությամբ Դ—Ե դարերը հանդիսացան եկեղեցու հայրերի և վարդապետների մատենագրական հակաճառական գործունեության ժամանակաշրջան, եկեղեցական մատենագրության և արվեստի ոսկեդար:

Սակայն, միաժամանակ պարզ դարձավ, որ թեև վերջ էին գտել եկեղեցու ներքին խաղաղությունն ու հանգիստ կյանքը վրդովող արտաքին հալածանքները, նո՛ր էր սկսվում այդ դարերում իսկապես նշանավոր և էական մեծ մարտերի, հակաճառությունների շրջանը: Այս իսկ պատճառով Դ—Ե դարերի ընթացքում ընդհանուր եկեղեցու պատմության այս նոր շրջանը բնութագրվում է որպես աստվածաբանական-քրիստոնեական մտածողության, հակաճառությունների և մեծ վեճերի շրջան:

Այս շրջանի Արևելքում եկեղեցու մեծ ու ուղղափառ հայրերի և վարդապետների աստվածաբանական երկերը ուղեցույց են հանդիսանում քրիստոնեական հաջորդ սերունդների համար: Մինչև այսօր էլ եկեղե-

---

[2] **Պրոֆ. Ն. Սագարդա**, նույնը, էջ 6:

[3] **Johannes Quasten**, Patrology, vol. III, Utrecht (Antwerp), 1966, էջ 1—5.

ցական-աստվածաբանական միտքը, արվեստը ապրում են եկեղեցու այդ եռամեծ վարդապետների երկերի գաղափարական բովանդակությամբ և նրանց տիրական ուղղության ներքո:

Այդ ժամանակաշրջանում է, որ առաջացան և լուծվեցին աստվածաբանության և քրիստոնեության բոլոր հիմնական ու էական տարրերը, որոնք մինչև այսօր էլ պատմական և գործնական նշանակություն ունեն եկեղեցու կյանքի ու առաքելության համար: Նիկիայի (325), Կ. Պոլսի (381) և Եփեսոսի (431) առաջին երեք Տիեզերական ժողովներում վճռվեցին ս. Երրորդության, Մարդեղության և Փրկագործության մասին հավատալիքներն ու հավատո հանգանակները արիոսականության, հոգեմարտ մակեդոնականության, սաբելականության, նեստորականության, եվտիքականության և այլ հերետիկոսությունների դեմ ուղղափառ եկեղեցու մղած պայքարում:

«Քրիստոնեական կրոնքին դավանաբանական հիմնական նշմարտությունները, Երրորդության և Աստուծո Բանին սուրբ կույս Մարիամեն Մարդեղության վերաբերյալ, սահմանված են Արևելքի մեջ գումարված Տիեզերական ժողովներե: Իսկ այդ հավատքը պահպանելու համար, անոնք կրած են ու կկրեն տակավին ծանր նեղություններ»[4]:

Դ—Ե դարերում Արևելքում ապարեզ իջան եկեղեցական մեծ հայրեր ու աստվածաբաններ, ինչպիսիք էին Ալեքսանդր Ալեքսանդրացին, ս. Աթանասը, կապադովկյան եկեղեցու երեք մեծ հայրապետները՝ ս. Բարսեղը, ս. Գրիգոր Նազիազանցին (Սքանչելագործ), ս. Գրիգոր Նյուսացին, Հովհաննես Ոսկեբերանը (Անտիոքի եկեղեցի), ս. Կյուրեղ Ալեքսանդրացին և ուրիշներ: Եկեղեցու այս մեծ հայրապետների մատենագրական վաստակում «քրիստոնեական մի հյումանիզմ ծնվեց, որի մեջ եկեղեցական գրականությունը իր կատարելությանը հասավ»[5]:

Այս շրջանում երբ եկեղեցին կայսրության մեջ հանդիսացավ գերակշռող մի ուժ, սույն մեծ հայրապետների ղեկավարության ներքո և նրանց վանական կանոնագրություններով, հատկապես Եգիպտոսում, Թեբայիտի մենաստաններում, կազմվեց տիպար, օրինակելի վանականություն, որը ստեղծեց իր գրականությունը, մեծ ու նշանավոր վանականների կյանքին ու գործունեությանը նվիրված, հանուն հոգևորականության կատարելության: Վանականությունը վճռական դեր կատարեց Եգիպտոսում, աստվածաբանական-քրիստոնեաբանական հակամարտությունների ժամանակ՝ ի պաշտպանություն ուղղափառության:

Այս ժամանակաշրջանում հիմնվում են նաև նշանավոր աստվածաբանական դպրոցներ, իրենց յուրահատուկ ավանդություններով և ուղղություններով: Դրանք հանդիսանում են քրիստոնեական մտածողության, ս. Գրոց մեկնաբանության, մշակույթի ու արվեստի օջախներ, հատկապես հերետիկոսությունների դեմ մղված գաղափարական պայքարում:

Դ դարի դպրոցների մեջ աչքի էր ընկնում Ալեքսանդրիայի քրիստոնեական-աստվածաբանական դպրոցը, ուր իր մասնագիտական կրթությունն ստացավ Աթանասը: Ալեքսանդրիան միաժամանակ դարձավ վտանգավոր բույնը հերետիկոսությունների: Այստեղ ապրում էր և գործում նաև Արիոսը:

Ալեքսանդրիայի քրիստոնեական-աստվածաբանական դպրոցը

Ալեքսանդրիան հիմնադրել է Մեծն Ալեքսանդրը, մ. թ. ա. 331 թվականին: Ալեքսանդրիան եգիպտական, հելլենիստական և հրեական մշակույթների հանդիպման կենտրոն էր հանդիսանում:

Արևելքն ու Արևմուտքը միացնող այս քաղաքը միաժամանակ հին աշխարհի մշակույթի, գիտության և կրթության կենտրոնն էր: Քաղաքը նշանավոր էր նաև պատմական, ճարտարապետական իր գեղեցիկ հուշարձաններով, հարուստ իր մատենադարաններով, կոսմոպոլիտական իր տաճարներով, փիլիսոփայական իր դպրոցներով: Այստեղ տիրող փիլիսոփայական ուղղությունը նոր պղատոնականությունն էր:

Ալեքսանդրիայում կատարվեց նաև Հին Կտակարանի Յոթանասնից կոչված հունարեն թարգմանությունը, Պտղոմեոս թագավորի օրոք, մ .թ. ա. Գ դարում (285—247):

Ալեքսանդրիայում էր ապրում և ստեղծագործում Ա. դարում նաև հրեա մեծ բարբի ու փիլիսոփա Փիլոն Եբրայեցին, որի մեկնողական գրքերը Ե դարում մեր թարգմանիչ վարդապետները վերածեցին հայերենի:

Ահա այս քաղաքում էր, որ քրիստոնեությունը երբ Ա դարում մուտք գործեց, ս. Մարկոս Ավետարանչի քարոզչությամբ, մեծ չափով քան Արևելքի մի այլ քաղաքում, եկեղեցին սերտ շփման մեջ մտավ հելլենիզմի, նոր պղատոնական փիլիսոփայության, եգիպտական և հրեական գաղափարախոսությունների հետ:

Ալեքսանդրիայում Գ դարում ստեղծվեց

[4] Վավերաթուղթեր Վատիկանյան Բ Տիեզերական ժողովի, Վենետիկ, ս. Ղազար, 1967, էջ 155:

[5] Quasten, նույնը, էջ 1:

քրիստոնեական-աստվածաբանական առաջին դպրոցը, որը հնագույն կենտրոնը հանդիսացավ «սրբազան գիտության քրիստոնեության պատմության մեջ»[6]:

Ալեքսանդրիայում սկսվեց նաև բուռն պայքար քրիստոնեության և հելլենիզմի միջև:

Այս պայքարի դրական կողմն այն էր, որ հունական անտիկ մշակույթի իմացական ուժն օգնեց, որ քրիստոնեությունը դառնա ոգեկան հզոր ու վերանորոգիչ մի ազդակ կրոնական, փիլիսոփայական, ընկերային և նույնիսկ քաղաքական ու տնտեսական գաղափարախոսության բնագավառում:

Հունական մշակույթով սնած ու զարգացած մարդիկ գոհացում էին գտնում քրիստոնեական ուսմունքի մեջ և ընդունում էին այդ նոր կրոնը որպես իրենց իմացական ու հոգեկան հետաքրքրություններն ու որոնումները բավարարող մեծագույն ճշմարտություն, որպես ճշմարիտ ոգեկանություն, բարձր բարոյականություն, որպես մի նոր, ավելի մարդկային կրոնական մի ըմբռնում, որը կոչված է վերանորոգելու, վերափոխելու մարդկային սիրտն ու միտքը[7]:

Քրիստոնեությունն այսպիսով ողջ կայսրության մեջ համարվում էր մարդկության համար մի նոր կյանքի սկիզբը, իսկ Քրիստոսը՝ «կյանքի հաց», հոգիների և ձգտումների առաջնությունի կենարար ջրի աղբյուրը. «Ես եմ Ճանապարհ, Ճշմարտություն և Կեանք» (Հովհ. ԺԴ 6), **աշխարհը Քրիստոսով և Ավետարանով վերանորոգելու կրոնական, ոգեկան ու բարոյական մի անխորտակելի և կենսունակ ուժ:**

Քրիստոնեության պատմության առաջին չորս դարերում անտիկ աշխարհի հասարակությունն ապրում էր հոգեկան անստուգության ու որոնումների մեջ, ընկերային իր բոլոր շերտավորումներով, ու ծարավն ուներ ճշմարիտ հավատքի:

Իսկ այդ ճշմարտությունը, այդ հավատքը գտնվում էր միայն եկեղեցու մեջ, և միայն եկեղեցում կարելի էր հասկանալ հավատքն ու ճշմարտությունը:

Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցն իր առաջին ծաղկման բուռն շրջանն ապրեց Գ դարում: Այս դպրոցի առաջին և մեծ ղեկավարները հանդիսացան Կղեմես Ալեքսանդրացին (150—215) ու նրա տաղանդավոր աշակերտ Որոգինեսը (180—253), որոնք եղան հետագայում քրիստոնեական մտածողության մեծագույն ներկայացուցիչները:

Որոգինեսն առաջինն էր քրիստոնյա մտածողների մեջ, որ քրիստոնեական-աստվածաբանական գիտության հայր դարձավ և սահմանեց եկեղեցական գիտական աստվածաբանական հիմնական սկզբունքներն ու դասական գիտությունը և փիլիսոփայությունը «եկեղեցականացնելու առաջին քայլը առավ»: ...Այդպիսով «Որոգինեսին հաջողվեց հաշտեցնել գիտությունը քրիստոնեական հավատքի հետ, բարձր քաղաքակրթությունը՝ Ավետարանի հետ եկեղեցական վարդապետության հողի վրա»[8]:

Սակայն, Ալեքսանդրիայի դպրոցի մեծ ուսուցիչները կանգնել էին հիմնականում Աստվածաշնչի այլաբանական մեկնության և եկեղեցու ավանդական հավատքի պաշտպանության դիրքերում:

Որոգինեսն այս ուղղությամբ իր մեկնողական և աստվածաբանական մեծարժեք ու գիտական աշխատություններում, իր ստացած դասական փիլիսոփայական ընդարձակ կրթության պատճառով, հավատարիմ և «ավանդապահ չմնաց» եկեղեցու հին ավանդությանը, հավատքի ու «ընդհանուր եկեղեցական գիտությանը»: Որոգինեսի աստվածաբանական մեկնողական ուսմունքի վրա հիմնվում էին միմյանց բոլորովին հակառակ դավանաբանական հայացքների տեր մարդիկ: Որոգինեսը աստվածաբանական-դավանաբանական այդ սայթաքումների համար «այնքան հակաճառվող անձնավորություն դարձավ»[9] և զրկվեց եկեղեցու սուրբ ու մեծ հայր լինելու լուսապսակից, թեև նրա ազդեցությունը շատ մեծ և տիրական էր և՛ Ալեքսանդրիայի, և՛ Անտիոքի, և՛ Ասորիքի, և՛ Կապադովկիայի աստվածաբանական դպրոցների վրա: Որոգինեսի հավատարիմ և մեծանուն աշակերտն էր ս. Գրիգոր Նազիանզացին:

Ալեքսանդրիայի դպրոցն իր ծաղկման փայլուն երկրորդ շրջանն ապրեց ս. Աթանասի օրով (328—373): Ս. Աթանասը վճռական դեր խաղաց Դ դարում քրիստոնեական մտածողության մեջ՝ ընդդեմ արիոսականության մղած իր պայքարում, հանուն հավատքի ուղղափառության: Այս պայքարում «Աթանասը առաջնակարգ դիրք էր գրավում Ալեքսանդրիայի եպիսկոպոսների մեջ»[10]:

Սուրբ Աթանաս Հայրապետի կյանքը և եկեղեցական գործունեությունը

Մեր ձեռագիր Ճառընտիրների հիշատակարաններում, պատմական և վարքագրական աղբյուրներում, ինչպես նաև օտար

[6] Quasten, II հատոր, էջ 21:

[7] Quasten, III հատոր, էջ 4, 6:

[8] Պրոֆ. Ն. Սագարդա, նույնը, էջ 17, 18:

[9] Նույնը, էջ 22:

[10] Quasten, III հատոր, էջ 20:

եկեղեցական գրականության մեջ կան մեծ Հայրապետի կյանքին ու գործունեությանը նվիրված ընդարձակ և հետաքրքիր տեղեկություններ[11]:

Ս. Աթանասի կյանքի և գործունեության մասին հայերեն առաջին ու հնագույն երկու ձեռագրական և ապա տպագիր աղբյուրներն են[12].

1. **Վարք և քաղաքավարութիւն** (ճգնութիւն) սրբոյն մեծի Աթանասի Ալեքսանդրացւոյ եպիսկոպոսի և

2. **Ի պատմութենէ վարուց Տիմոթէի ս. Աթանասի,** զոր ասացեալ է Տիմոթէի աշակերտի նորին և աթոռակցի Աղեքսանդրացւոյ:

Ս. Աթանասը ծնվել է 295 թվականին Ալեքսանդրիա քաղաքում, ուր և «սնեալ, ուսեալ և աշակերտեալ ի գնացս առաքինասէր կրօնից, ըստ միայնական վարուց մեծին և սրբոյն Անտոնի, որ և զնորայն իսկ շարադրեաց զվարսն»:

Ալեքսանդրիայի քրիստոնաբանական-աստվածաբանական դպրոցում նա ստանում է իր եկեղեցական մասնագիտական կրթությունը. «Հոգւովն յառաջադիմանայր և սնանէր խրատու և իմաստութեամբ Տեառն, վարժեալ գրոց սրբոց և հոգեպատում տառից մարգարէից»:

Ս. Աթանասի ծնողներն են եղել հավատացյալ ու բարեպաշտ Մարկեղոսը և Սալոմեն, որոնք ապրում էին «օրինօքն Աստուծոյ յԱստուած» և փոքր տարիքից նրան նվիրել էին «ի պաշտօն Աստուծոյ, որպէս Աննա զՍամուէլ», ինչպես նշված է Հին Կտակարանում (Ա Թագ. Ա 26):

315 թվականին Աթանասը սարկավագ է ձեռնադրվում Ալեքսանդրիայի Աթոռի հայրապետ Ալեքսանդր Ալեքսանդրացուց, լինում է նրա քարտուղարը և իր այդ հանգամանքով էլ մասնակցում 325-ին Նիկիայի առաջին Տիեզերական ժողովին, ուր «եղև իսկ ախոյեան ընդդէմ Արիոսի չարափառութեան և ամբարշտութեան... և յաղագս գիտութեանն և սուրբ վարուցն այնպէս փայլեաց որպէս արեգակն ի մէջ մեծի Սիւնհոդոսին և մեծարեցաւ և փառաւորեցաւ յամենեցունց»:

328-ին Աթանասն արդեն որպես եպիսկոպոս հաջորդում է Ալեքսանդր Ալեքսանդրացուն Ալեքսանդրիայի պատրիարքական Աթոռի վրա, Կոստանդիանոս կայսեր հավանությամբ. «կացուցանել զնա յԱթոռ սուրբ Աւետարանչին Մարկոսի»:

Հեշտ ու խաղաղ չի անցնում, սակայն, ս. Աթանասի հայրապետությունն Ալեքսանդրիայում, Մարկոս Ավետարանչի պատրիարքական Աթոռի վրա:

Նիկիայի ժողովում թեև դատապարտվել և նզովվել էր արիոսականությունը, բայց այն դեռ շատ ուժեղ, ազդեցիկ էր և՛ Ալեքսանդրիայում, ուր գործել և քարոզել էր Արիոսը (256—336)՝ լիբիացի այդ հեռը, և թե՛ ամբողջ կայսրության մեջ:

Արիոսը պաշտպանվում էր արքունիքի կողմից: Արքունիքն ընկել էր արիոսականների ազդեցության տակ: Կայսրը եկեղեցու ծոցում պառակտումը վերացնելու բարեմտությամբ, Նիկիայի ժողովից հետո Աթանասին թելադրում էր Արիոսին վերընդունել ուղղափառ եկեղեցու գիրկը և նրան հատկացնել Ալեքսանդրիայի եկեղեցիներից մեկը:

Աթանասը մերժում էր կայսեր վտանգավոր և անիմաստ առաջարկը: Սրվում էր հակամարտությունը Աթանասի և արիոսականների միջև, մինչև իսկ Ալեքսանդրիայում: Այնուհետև, «արիոսական վեճի պատմությունն Աթանասի կյանքի պատմությունն է դառնում»[13]:

Աթանասը զրկվում էր իր Աթոռից և աքսորվում հակառակորդների զրպարտությունների և չարախոսությունների պատճառով: Արիոսականներն Աթանասին համարում էին իրենց ամենավտանգավոր և անհաշտ հակառակորդն ու նրան կործանելու համար դիմում էին ամեն ստոր միջոցի: Եթե նրանց հաջողվեր տապալել Աթանասին, ապա «Նովաս ամենայն ուղղափառաց յաղթել վարկանէին»: Արիոսականները նրան ամբաստանում էին սաբելականության, կայսեր ու կայսրության դեմ հակառակության մեջ, թե նա պառակտում է եկեղեցու միությունը, խանգարում ներքին անդորրությունը ու խռովում խաղաղությունը պետության մեջ:

Աթանասն Ալեքսանդրիայի պատրիարքական Աթոռի վրա մնաց 45 տարի, 328—373-ը, մինչև իր մահը, որը տեղի ունեցավ 373 թվականի մայիսին:

Այս փոթորկալից ժամանակաշրջանում նա հինգ անգամ աթոռազրկվեց և 17 տարի անցկացրեց աքսորավայրերում:

---

[11] **Հ. Ս. Անասյան,** Հայկական մատենագիտություն, Ե—ԺԸ դդ., հտոր. Ա, Երևան, 1959, էջ 321—322:

[12] Ս. Աթանաս Ալեքսանդրիոյ Հայրապետի ճառք, թուղթք և ընդդիմասացութիւնք, Վենետիկ, 1899, էջ 1—23 և 24—26:

[13] **Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց,** ընդհանուր եկեղեցական պատմություն, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1908, էջ 257:

Տես նաև **Quasten,** III հատոր, էջ 66. IV դարում «ուղղափառության պաշտպանության պատմությունը Աթանասի կյանքի պատմությունն է»:

Բոլոր այս հալածանքներն ու բռնությունները, սակայն, չկարողացան ընկճել սուրբ Աթանասի մեծ ու արի հոգին, մարել նրա անսպառ եռանդը, «Նա ոչ ողոքանաց լսէր և ոչ սպառնալեացն զարհուրէր»: Աքսորավայրերից նա իր թղթերով ու գրվածքներով շարունակում էր պայքարը արիոսականների, հոգեմարտ և աստվածամարտ Մակեդոն Կ. Պոլսի պատրիարքի չարափառ հետևորդների դեմ:

Ս. Աթանասն իր ողջ կյանքում անկոտրում վճռականությամբ և կրքոտությամբ «զստուեր եկեղեցւոյ հալածեաց և բազում քաջութիւնս եցոյց» բոլոր տեսակի հերետիկոսական մոլորությունների դեմ. «Խրատէր և ուսուցանէր զվարս վարդապետութեան և հաստատէր զամենեսեան ի հաւատս...: Ամենայն հալածանաց և վշտաց համբերեաց, բազում նեղութիւնս կրեաց վասն եկեղեցեացն Աստուծոյ և անշարժ և անդրդուելի մնայր ի վերայ հիման աւանդութեան և առաքելոց և մարգարէից»:

Այս իսկ պատճառով նա կոչվեց «Հայր ուղղափառութեան» և «Սիւն եկեղեցւոյ», ինչպես նրան բնութագրել է ս. Գրիգոր Նազիանզացին: Աթանասի նկարագրի հիմնական գծերն են եղել՝ աննահանջ քաջությունը, վտանգները դիմագրավելու անվեհերությունն ու հաստատամտությունը, և պայքարում՝ սկզբունքայնություն[14]:

Եթե ս. Աթանասը գոյություն չունենար, քրիստոնեությունն արիոսականների մոլորության հետևանքով կդադարեր կրոն լինելուց, իսկ եկեղեցին ու հավատացյալները, ինչպես նշում են նրա վարքագիրները, «իբրև Սոդոմ լինէին և Գոմորայ նմանէին»: «Եթե արիոսականությունը հունական աշխարհում հաղթող հանդիսանար, նա ամենայն հավանականությամբ ամբողջ քրիստոնեությունը կոչնչացներ, այսինքն տիեզերաբանություն և բարոյականություն կդարձներ այն, և կրոնը կկորչեր ըստ էության», նշում է գերմանացի մեծ գիտնական Ադոլֆ Հարնակը[15]:

Ս. Աթանաս Հայրապետի կյանքի և գործունեության հիմնական աղբյուրները հանդիսանում են նրա գրվածքները՝ ճառերը, թղթերը, մեկնությունները:

Ս. Աթանաս Հայրապետի մատենագրական վաստակը

Ս. Աթանաս Հայրապետը թողել է հարուստ և բազմաժանր մատենագրական վաստակ. «Եթող բազում ճառս շարադրեալս՝ յաղագս ուղղափառ հաւատոյ և սուրբ վարուց և մեկնութիւն սաղմոսաց և այլոց գրոց, զի յամենայնի մեծախորհուրդ էր այրն Աստուծոյ, և բանիւ կատարեալ և հոգւով լցեալ»:

Ս. Աթանասն իր մատենագրական վաստակով առաջնակարգ ու տիրական դեմք է հանդիսանում Դ դարի եկեղեցական հայրերի շարքում:

Զարմանալի է, որ ս. Աթանասն իր այնքան փոթորկոտ կյանքի և եկեղեցական պաշտոնավարության, այնքան վերիվայրումների, հալածանքների և հակառակությունների մեջ ժամանակ է գտնում զբաղվելու նաև գրական աշխատանքներով, որոնք առանձնահատուկ և կարևոր տեղ են գրավում քրիստոնեական մշակույթի ոսկյա գանձարանում:

Ս. Աթանասի մատենագրական վաստակը սերտորեն առնչվում է Նիկիական Հանգանակի պաշտպանության և հերետիկոսների դեմ պայքարի հետ:

Ս. Աթանասն իր գրականության մեջ հանդես է բերում Աստվածաշնչի բազմակողմանի հմտություն, խորամուխ իմացություն, վիճելու կուռ տրամաբանություն, հանճարեղություն, հումորմունքների անկեղծություն ու հետևողականություն, տեղ-տեղ՝ կարծրություն, հատկանիշներ, որոնց մասին հետագա քրիստոնեական սերունդները հիացմունքով և երախտագիտությամբ են խոսում:

Ս. Աթանասն իր գրական վաստակի մեջ ստեղծում է եկեղեցական մատենագրության նոր ձևեր և արտահայտչական միջոցներ:

Ըստ բովանդակության և ժանրի ս. Աթանասի գրական հարուստ ժառանգությունն ընդունվել է բաժանել հետևյալ մասերի.

1. **Ճառագովական - դավանաբանական գործեր,** 10 աշխատություն: Այս գործերի մեջ նշանավոր է ս. Աթանասի «Յաղագս մարմնաւորութեան Որդւոյն և սրբոյ Երրորդութեան» ճառը:

2. **Պատմա-վիճաբանական գործեր,** 4 աշխատություն: Սույն աշխատության մեջ կարեվորագույնն է. «Ընդդիմասացութիւնք սրբոյ Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ ուղղափառի և Արիոսի հերձուածողի, Յաղագս աստուածութեան Որդւոյ» (հարց ու պատասխանների ձևով):

3. **Մեկնողական գործեր,** 7 աշխատություն, Մեկնութիւն Սաղմոսաց, Ծննդոց, Երգ երգոց, Յոբայ, Մատթէոսի, Ղուկասի, Կաթողիկեայ թղթոց և այլն:

4. **Վարքագրական գործեր,** 4 աշխատություն, որի մեջ պատմական ու եկեղեցական մեծ արժեք է ներկայացնում «Վարք երանելւոյն Անտոնի (250—356) Եգիպտաց-

[14] Quasten, III հատոր, էջ 20:

[15] Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանց, նույնը, էջ 253:

ւոյ միայնակեցի և մահ նորին սուրբ ծերունւոյ և աստուածասիրի, թուղթ Աթանասի»: Սույն վարքագրությունը ս. Աթանասի ընդարձակագույն գրական աշխատասիրությունն է: Աթանասը եղել է մեծ վանականի աշակերտ և նրա վարքը գրել է 357-ին, ս. Անտոնի մահից (356) մեկ տարի հետո, Թեբայիսի վանականների խնդրանքով: Աթանաս Հայրապետի սույն «վարքագրությունը» ընդհանուր եկեղեցու պատմության մեջ կոչվել է «Վանական կյանքի մի կանոնադրություն, պատմվածքի ձևով տրված»[16]:

Ս. Աթանասի գրած ս. Անտոնի «վարք»-ը մեծ ազդեցություն է գործել արևմուտքի վանականության կազմակերպման բնագավառում: Այս գործը թարգմանվել է լատիներեն: Օգոստինոսը վկայում է իր «Խոստովանութիւն» աշխատության մեջ, որ ս. Աթանասի «վարք»-ը վճռական ազդեցություն է գործել ինչպես իր անձնական, այնպես էլ ուրիշ զարգացած հեթանոսների դարձի վրա:

Ս. Աթանասը գրել է նաև բազում

5. **Ճառեր, ներբողյաններ, խրատներ:**

6. **Թղթեր:**

Ինչպես հայտնի է, ս. Աթանասն ունեցել է լայն թղթակցություններ ժամանակի եկեղեցական ու քաղաքական մեծ դեմքերի հետ:

Ս. Աթանասի թղթերը ոչ այնքան անձնական բնույթ են կրում, որքան ընդհանուր եկեղեցական, աստվածաբանական-քրիստոնեական, ջատագովական ու վիճաբանական և շատ կարևոր են որպես փաստաթուղթ՝ ժամանակաշրջանի պատմության համար:

Ս. Աթանասի մատենագրական վաստակի մեջ են մտնում նաև.

7. **Կանոններ**[17],

8. **Պատարագամատույց**[18]:

Ս. Աթանասի հունարեն և լատիներեն մատենագրական լրիվ վաստակի մասին տեսնել Quasten patrology, III հատոր, էջ 23—66:

Սույն հոդվածի նպատակից դուրս է հանգամանորեն խոսել Մեծն Աթանաս Հայրապետի աստվածաբանական-քրիստոնեական ուսմունքի առանձնահատկության և կարևորության մասին:

Այս ուղղությամբ օգտակար լուրջ և ամբողջական ուսումնասիրություն է հրատարակել նյութի հմուտ մասնագետ Quasten-ը, III հատոր, էջ 66—79:

Սակայն անհրաժեշտ ենք համարում համառոտակի խոսել Արիոսի մոլորության և ս. Աթանասի ուղղափառ դավանության մասին:

Ինչո՞ւմ էր կայանում Արիոսի մոլորությունը: Արիոսը, ինչպես հայտնի է, ժխտում էր Բանին-Քրիստոսի աստվածությունը և դրանով իսկ վտանգում Մարդեղության ու Փրկագործության խորհուրդը: Նա ասում էր. «Միակ Աստված մը կա, ոչ ծնյալ, հավիտենական: Այդ Աստվածը միշտ Հայր չէ եղած. կար ժամանակ մը, երբ Հայր չէր Անիկա: Ան ծնավ որդի մը իր ազատ կամքով. ոչինչեն ստեղծեց զայն: Որդին արարած է, որովհետև ծնած է ժամանակի մեջ և Հորը մեկ ստեղծագործությունն է. հավասար ու համագո չէ Հորը. մասնակից չէ Անոր ո՛չ էությանը և ո՛չ ալ հավիտենականությանը, որով հետո ծնած ըլլալու բնություն ունի:

Որդին բնությամբ կատարելապես աննմանն է Հորը և Անոր բնութենեն տարբեր գոյացություն մը ունի և իբր արարած՝ փոփոխություններու ընդունակ բնություն մը ունի. կար ժամանակ մը, որ Որդին չկար: Որդին «կրտսեր է քան զՀայր», Հայրը անընմբռնելի է Որդիին, վասնզի Որդին «արարած է և անգետ առուրն կատարածի»:

Ինչպես կտեսնվի, հակասություններու հյուսվածք մըն է ամբողջ Արիոսի վարդապետությունը, ապարդյուն փորձ մը՝ հաշտեցնելու կրոնական շահերը տրամաբանության պահանջներու հետ» (**Թորգոմ պատրիարք Գուշակյան**, Հերձվածողներ, անտիպ, Երուսաղեմ, «Արիոս», էջ 1—6):

Մեր եկեղեցին ընդհանրական եկեղեցու հետ դատապարտում է պաշտոնապես Արիոսի մոլորությունը, ս. պատարագի ընթացքում, «Հաւատամք»-ից հետո արտասանվող հետևյալ բանաձևով.

«Իսկ որք ասեն, է՛ր երբեմն յորժամ ոչ էր Որդին, և կամ է՛ր երբեմն յորժամ ոչ էր ս. Հոգին, կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ՝ փոփոխելիք են կամ աղաւելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական ս. եկեղեցի» («Քրիստոնեական», Անթիլիաս, 1971, էջ 21):

Արիոսի այս մոլորությանը հակադրեց ս. Աթանասն իր աստվածաբանական քրիստոնեական ուղղափառ ուսմունքը, որը հիմնաքար հանդիսացավ Նիկիական Հանգանակին:

Աստվածաբանական - քրիստոնեաբան-

---

[16] **Ս. Գրիգոր Նազիանզացի:**

[17] **Ներսես վրդ. Մելիք-Թանգյան**, Հայոց եկեղեցական իրավունք, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 249—250: **Վազգեն Հակոբյան**, Կանոնագիրք հայոց, Ա, Երևան, 1964, էջ 282—328, 603—612 (Ծանոթություն):

[18] **Հ. Հ. Գաթրճյան**, Սրբազան պատարագամատույց հայոց, Վիեննա, 1897, էջ 217—318:

կան իր ուսմունքի մեջ ս. Աթանասի «մեծագույն արժանիքն ու ծառայությունը մընում է այն, որ նա պաշտպանեց առաքելական, ավանդական քրիստոնեությունը հելլենացման վտանգի դեմ, վտանգ, որը թաքնված ձևով հանդես էր գալիս Արիոսի և նրա հետևորդների հերետիկոսության մեջ» (Quasten, III հատոր, էջ 66): Ս. Աթանասն իր ուսմունքի մեջ գործածում է հունական մտածողության ձևերն ու գաղափարները, եկեղեցու ուղղափառ հավատքը հստակացնելու համար, բայց դրանց հաղորդում է քրիստոնեական Հայտնության միջոցով ստացված բովանդակություն ու խորք: Նա հստակորեն գիտի տարբերել հունական մտածողությունն ու քրիստոնեական Հայտնությունն այնտեղ, ուր վտանգ կարող էր լինել Ավետարանի ճշմարտության մթագնմանը և կամ սխալ հասկացմանը:

Ս. Աթանասը պաշտպանում է ոչ միայն Որդու համագոյակցությունը Հոր Աստծու հետ, այլ նա ձեռնհասորեն է բացատրում Ծնունդն ու Բնությունը Բանին-Քրիստոսին, քան մի այլ աստվածաբան այդ ժամանակաշրջանում:

Ս. Աթանասի ճառերի, թղթերի նպատակն է եղել՝ ապացուցել ընդհանրական եկեղեցու «հնագույն ավանդությունը, ուսուցումը և հավատքը, ինչ որ Տերը ավանդեց իր եկեղեցուն, ինչ որ առաքյալները քարոզեցին և հայրերը պահեցին»:

Ս. Աթանասն իր հակառակորդների ռացիոնալիստական-բանապաշտական մտածողության դեմ հակադրում էր հավատքի գերակայությունը, կամ առաջնությունը: Ըստ նրան բանականությունը միայն չի կարող դատավոր լինել բնազանցական հարցերի մեջ: Հավատք է հարկավոր: Բանականությամբ մարդը չի կարող խորանալ ո՛չ իր և ո՛չ էլ երկրավոր իրերի բնության մեջ, ո՛չ էլ խոսել աստվածային, անճառելի բնության մասին:

Ս. Աթանասի աստվածաբանական-քրիստոսաբանական ուսմունքը հիմնաքարն է հանդիսանում եկեղեցու ս. Երրորդության և քրիստոսաբանական վարդապետության, ինչպես բանաձևված է Նիկիական Հանգանակում:

Ս. Աթանասն Արիոսի դեմ հակաճառում է, որ Որդին արարած չէ, այլ Ծնունդ, համագո Աստուծո հետ, լրիվ աստվածությամբ. «Աստուած յԱստուծոյ, Լոյս ի Լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ, նոյն ինքն ի բնութենէ Հօր, Ծնունդ և ոչ արարած»:

Որդին հավիտենական է, ինչպես Հայրը: Հայրը և Որդին երկու առանձին անձեր են, բայց աստվածային նույն բնությունն ունեն, որով Աստուծո հանդեպ Որդու ստորակայության հարց չի կարող լինել:

Ս. Աթանասի մոտ Բանին Մարմնառության և կամ Մարդեղության վարդապետությունը Փրկագործության վարդապետություն է միաժամանակ:

Ս. Աթանասին է պատկանում թեավոր, բայց շատ գեղեցիկ ու խորիմաստ այս բանաձևը. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա»: Քրիստոս իրեն ունայնացրեց, որ մենք անմահությունը ժառանգենք:

Առանց Քրիստոսի Մարդեղության և Մահվան, չկա փրկություն մարդու համար. Քրիստոս հաղթեց մահվան, ոչ միայն Իրեն, այլ նաև ողջ մարդկության համար. «Վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի սրբոյ կուսէն, հոգւովն սրբով, որով էառ զմարմին, զհոգի և զմիտս և զամենայն ինչ որ է ի մարդն ճշմարտապէս և ոչ կարծեօք» (Ժամագիրք, Բեյրութ, 1968, էջ 113):

Ս. Աթանաս Հայրապետի գործերի հայերեն թարգմանությունները

Մեր եկեղեցական-թարգմանական գրականության մեջ մեծ թիվ են կազմում ս. Աթանասի գործերից և ուղղակի հունարեն բնագրերից կատարված թարգմանությունները, որոնց մի քանիսի «սկզբնագրերը դեռ չեն հայտնաբերված հունական գրականության մեջ»[19]:

Անհրաժեշտ է շեշտել այն հանգամանքը, որ Ե դարի մեր թարգմանական գրականությունն այնքան ընդարձակ է եղել, և կատարվել է այնպիսի ընտրությամբ, որ ընդհանուր եկեղեցական մատենագրության շատ կարևոր երկեր, այդ թվում նաև **ս. Աթանասի գործերից մի քանիսը, մնացել են միայն հին հայերեն թարգմանությամբ, և այսօր գիտության համար մատչելի են հայերեն այդ թարգմանությունների հրատարակությամբ:**

Ս. Աթանասի աշխատություններն էլ թարգմանվել են Ե դարում մեր թարգմանիչ վարդապետների կողմից:

Բայց դժվար է հստակորեն որոշել, թե «յորո՞ւմ ժամանակի և յումմէ՞ փոխեալ ի-ցեն ի հայ լեզու» այդ թարգմանությունները[20]:

Մատենագրական և մանավանդ ձեռագիր ծանոթագիրների վկայությամբ մեր թարգ-

[19] Հ. Ս. Անասյան, նույնը, էջ 323:

[20] Ս. Աթանասի Աղեքսանդրացւոյ Հայրապետի ճառք, նույնը, «Ջեկուցումն», էջ Ե:

մանիչ վարդապետները Ե դարում հայերենի են վերածել ս. Աթանասի հետևյալ գործերը.

1. Ի Հոգին սուրբ, 2. Ընդդէմ Արիանոսաց, 3. Ի սուրբ Երրորդութիւնն և մարմնաւորութիւն Բանին, 4. Առ Եպիկտետոն եպիսկոպոս Կորնթացւոց, 5. Առ Փելագեղոս եպիսկոպոս, 6. Առ Լիբերիոս Հռովմայ, 7. Ցաղագս սրբոյ Երրորդութեան, 8. Ընդդէմ ամենայն հերձուածողաց, 9. Ցաղագս Հոգւոյն սրբոյ հայհոյողաց, 10. Ընդդիմադրութիւն ընդ Արիոսի, յաղագս աստուածութեան Որդւոյն, 11. Դարձեալ առ նոյն՝ Ցաղագս սրբոյ Հոգւոյն, 12. Ընդդէմ Զաքէոսի Հրէի՝ յաղագս աստուածութեան Որդւոյ, 13. Ցաղագս խորհրդածութեանց մկրտելոց, 14. Ցաղագս կուսութեան, 15. Ի չարչարանս և ի յարութիւն Տեառն, 16. Աղօթք[21]:

Այնուհետև, Ը դարում Ստեփանոս Սյունեցին (680—735) հայերենի է թարգմանել ս. Աթանասի հետևյալ հինգ ճառերը. 1. Ցաղագս մարմնաւորութեան Աստուծոյ Բանին, 2. Առ Յովբիանոս թագաւոր՝ Ցաղագս հաւատոյ, 3. Ընդդէմ Պաւղոսի Սամոսատցւոյ՝ թէ մի է Աստուած, 4. Ցաղագս թէ Անձն իմ խռովեալ է. 5. Ցաղագս յայտնութեան Տեառն:

Ստեփանոս Սյունեցին ս. Աթանասի սույն հինգ ճառերը հունարենից հայերենի է թարգմանել ս. Հովհան Օձնեցու (650—720) հրամանով. «կատարեցաւ հրամայեալս ի քէն, ո՞վ վեհ, երիցս երանելի բարեպաշտ, անուանակից և շնորհընկալ մեծի Ամոր դուոյն»[22]:

Ձեռագրական հիշատակարաններում ս. Աթանասի գործերը բնութագրվում են որպես «հրաշապատում և լուսազարդ վարդապետութիւն աստուածազգեաց առնն, գլուխ և հիմն ամենայն ուղղափառաց, որ ել հանքաւ հաւատոյ նորա ընդ բնաւս ամենայն»:

Ս. Աթանասի գործերի հայերեն թարգմանության 1899-ի հրատարակության մեջ մտել են նրա հետևյալ ճառերը, թղթերը, մեկնությունները.

1. Ցաղագս մարմնաւորութեան Որդւոյն և սրբոյ Երրորդութեանն (էջ 27—56):

2. Ճառ վասն հաւատոյ թէ մի է Քրիստոս, ընդդէմ Պաւղոսի Սամոսատցւոյ (էջ 56—63).

3. Յոր՝ թէ այժմ անձն իմ խռովեալ է (էջ 64—67).

4. Ցաղագս փրկական Յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդդէմ Մարկիոնի (էջ 68—88),

5. Թուղթ առ Սրապիոն եպիսկոպոս, Ցաղագս Հոգւոյն սրբոյ (էջ 88—116):

6. Թուղթ առ Լիբերիոս եպիսկոպոս Հռովմայ (էջ 117—118),

7. Ցաղագս սրբոյ Երրորդութեան (էջ 119—123),

8. Թուղթ առ Փիղադեղիոս եպիսկոպոս, (էջ 124—133),

9. Ընդդիմասացութիւն սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ ուղղափառի և Արիոսի հերձուածողի Ցաղագս աստուածութեան Որդւոյ (էջ 134—182):

10. Նոցունց խնդիր դարձեալ, վասն Ցաղագս սրբոյ Հոգւոյն (էջ 182—190),

*11. Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու և Զաքէի առն Հրէի **Հարցումն և պատասխանիք** և տուր և առ վիճմանց (էջ 191—234),

12. Տեառն Աթանասի առ Արիոս, զի ասէր եթէ կրսէր (կրտսեր) է Որդի քան զՀայր, արարած և տգէտ աւուրն կատարածի (էջ 235—238),

*13. Երանելոյն Աթանասի ասացեալ Ցասենաւորք Երրորդութիւնն (էջ 239—242),

14. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրի եպիսկոպոսի ի Հոգին Աստուծոյ (էջ 243—257),

*15. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրու Հայրապետին, ի Ծնունդն Քրիստոսի (էջ 258—263),

*16. Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու, ասացեալ ի վերացումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի (էջ 263—280),

17. Աթանասի ասացեալ Արտադրութիւն, (բացատրութիւն), առաքելական (Առաքելական հաւատամք, վարդապետութիւն), Ցաղագս Աստուածայնոյն մարմնաւորութեան Աստուծոյ Բանին (էջ 281—283),

*18. Երանելոյն Աթանասի Աղեքսանդրի եպիսկոպոսի խօսք ի սուրբ Աստուածածին և յողջոյն Եղիսաբեթի (էջ 284—291),

*19. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրի Հայրապետի ներբողեան ի սուրբ Աստուածածինն ասացեալ և ի միշտ կոյսն Մարիամ (էջ 292—311),

*20. Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրու ասացեալ ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ (էջ 312—323),

21. Թուղթ սրբոյ Աթանասի եպիսկոպոսի

[21] Մատենադարան, Հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 278—288:

[22] Մատենադարան, նույն տեղ, էջ 287—288, և Նորայր եպիսկոպոս Պողարյան, Հայ գրողներ, Երևան, 1971, էջ 113:

* Աստղանիշով մատնացուցված ճառերի բնագրերը պակասում են ս. Աթանասի հունարեն լեզվով հրատարակված գործերի մեջ: «Մատենադարան հայկական թարգմանութեանց», էջ 281:

Աղեքսանդրացւոյ առ Եպիկտետոն եպիսկոպոս Կորնթացւոց, զոր ապականեալ էր ի հերձուածողաց, յորմէ զգուշացոյց զԱնտիոքացիս սուրբ Կիւրեղ (էջ 324—343),

22. Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացւոյ առ Յովիանոս թագաւոր վասն հաւատոյ (էջ 344),

*23. Թուղթ Աթանասի եպիսկոպոսի առ Յուստինէ յԱփրիկէ (էջ 345—346),

24. Երանելոյն Աթանասի ասացեալ Հարցմունք վայելուչք և պատասխանիք հոգեշահք (Մի շարք այլ Ճառընտիրներում այս ճառը հետևյալ վերնագրով է. «Երանելոյն Աթանասի արքեպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ, հարցմունք վայելուչք և պատասխանիք Կիւրղի Երուսաղեմի Հայրապետին, յաղագս մակացութեան (գիտութեան) և հանճարոյ», էջ 347—477),

25. Դաւանութիւն ս. Աթանասի (Այլ օրինակում՝ «Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ, ասացեալ մեծին Աթանասի գերազանց վարդապետի Աղեքսանդրու», էջ 478—481),

26. Յաղագս Մելքիսեդեկի, ի գրոց սրբոյն Աթանասի (էջ 482—488),

27. Վասն սքանչելեաց պատկերին Քրիստոսի, պատկեր ի տախտակի զՔրիստոսի խաչելութիւնն, ի պատմութենէն սրբոյն Աթանասի Աղեքսանդրացւոյ (էջ 489—492),

*28. Տեսիլ սրբոյն Աթանասի (էջ 493—499),

29. Սրբոյն Աթանասի Աղեքսանդրու Հայրապետի ներբողեան ի սուրբ Ստեփանոս յառաջասարկաւաս և նախավկայն Քրիստոսի (էջ 500—515),

30.Վկայութիւն սրբոյն Մինասի և Երմոգինի և Գրատոսի (էջ 516—532):

31. Վարք Երանելոյն Անտոնի Եգիպտացւոյ միայնակեցի և մահ նորին սուրբ ծերունւոյ և աստուածասիրի, թուղթ Աթանասի (էջ 532—614),

32. Յառաջաբան Դաւթի (սաղմոսաց) մեկնութիւն առարեալ Աթանասի եպիսկոսոսապետի Աղեքսանդրացւոյ (էջ 615—643):

Սույն հատորի մեջ չեն մտել.

33. Կանոնք Աթանասի գլուխք ութսուն և եօթն (Կանոնագրքերում Աթանասի կանոնների թիվը տատանվում է 87-ից մինչև 90-ն)[23].

34. Պատարագամատոյց Աստուծով, զոր արարեալ է ի սրբոյ Հօրն մերոյ Աթանասի ու պատրիարքին Աղեքսանդրու[24],

«Սույն Պատարագամատույցի հունարեն բնագիրը ծանոթ չէ»[25]:

35. Օրինակ բարեպաշտութեան, ճառ:

Մայր Աթոռի միաբան Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը խոսում է «ս. Աթանասի անվան հետ կապված գործերի մի քանիսի վավերականության մասին, օգտվելով Էջմիածնի մատենադարանի անտիպ նյութերից»[26]:

Սուրբ Աթանասին են վերագրվում նաև «անհարազատ և երկրորդական» այլ աշխատություններ, որոնց մասին այստեղ չի խոսվելու: Ս. Աթանասի թշնամիները և հատկապես արիոսականները, ինչպես վկայում է ս. Կյուրեղ Աղեքսանդրացին Մելիտինե քաղաքի Ակակիոս հույն եպիսկոպոսին ուղղած իր նամակում, «ապականեալ են զգիրս ս. Աթանասի»[27]:

Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանն իր Հառաջաբանում գրում է, որ Աթանասի «հայերեն թարգմանությամբ նորա անունը կրող գրվածքների մի մասն էլ անվավերական է»[28]:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում տպագրվել են նաև ս. Աթանասի տարբեր գործերից հետևյալ հատվածները և վկայությունները.

1. Երանելոյն Աթանասի Աղեքսանդրու եպիսկոպոսին՝ ի Բանէն որ յԵրգս երգոցն.

Նորին՝ ի Բանէն, որ ի Զարչարանս (էջ 247—248).

2. Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրու ի թղթոյն, որ առ Եւսեբիոն և Ղուկիփեռէ և Աստերոն (էջ 264).

3. Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսի Աղեքսանդրու՝ ի Բանէն որ յաղագս խաչին.

Նորին՝ ի ծնունդս և ի չարչարանս (էջ 304—306).

4. Երանելոյն Աթանասի, եպիսկոպոսին Աղեքսանդրու, որ ի Տօնականէն՝ ի յերկրորդ գլխոյն, որ առ Դեոնոեստիանոս, ի յերրորդ Տաւնականէն. Նորին Գ. Դիոկղիտանէ ի ԺԱ Տօնականէն, որ յաղագս խաչին, որ զԱրիանոսացն (էջ 345—348):

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերի Մատենադարանում էլ պահվում են ս. Աթանաս Հայրապետի մատենա-

[23] Մատենադարան, Հայկական թարգմանութեանց, էջ 285: **Վահան վրդ. Բաստամեանց**, Յառաջաբանութիւն Դատաստանագրոց Մխիթարայ Գոշի, Էջմիածին, էջ 1—180: **Ներսես վարդապետ Մելիք-Թանգյան**, նույնը, էջ 249—250: **Հ. Ս. Անասյան**, նույնը, էջ 359—380, **Վազգեն Հակոբյան**, նույնը, էջ 282—328 և 603—612:

[24] Մատենադարան, Հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 255: **Հ. Հովսեփ Գաթրճյան**, Սրբազան պատարագամատոյցք հինգերորդ դարուն վերջերը, Վիեննա, 1897, էջ 217—318:

[25] **Հ. Ս. Անասյան**, նույնը, էջ 357—358:

[26] Նույնը, էջ 368:

[27] Կնիք հաւատոյ, էջ LXII:

[28] Նույնը, էջ LXIII:

գրական վաստակն ամփոփող բազում ձեռագրեր[29]: Այդ ձեռագրերի մասին խոսելը նույնպես կարող է մի այլ ուսումնասիրության նյութ հանդիսանալ, որը դուրս է մընում սույն շարադրանքի նպատակից:

Մեր եկեղեցին տարին երկու անգամ տոնում է հիշատակը ս. Աթանաս Հայրապետի: Առաջինը՝ հունվար ամսվա մեջ Կյուրեղ Այեքսանդրացի Հայրապետի տոնի հետ[30], իսկ երկրորդը՝ հոկտեմբերի մեջ, «Սրբոց երկոտասան վարդապետացն՝ Ռեթէոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Կիւրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Խուրին Ասորու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նիւսացու, Գրիգոր Աստուածաբանի, Եպիփան Կիպրացու, Յովհաննէս Ոսկեբերանի և Կիւրեղ Աղեքսանդրացու»՝ ընդհանրական եկեղեցու կողմից որպես անհերքելի հեղինակություններ ընդունված այս մեծ հայրապետների և վարդապետների տոնի հետ[31]:

Ս. Աթանասը եղել և մնում է քրիստոնեական եկեղեցու մեծահանճար հայրապետներից մեկը, «որոյ մեծութեան ոգւոյ և մտաց զհաւասարեաց թերևս ոչ ոք ի հարց եկեղեցւոյ», իսկ նրա գրական վաստակը հանդիսանում է քրիստոնեական մշակույթի արժեքավոր և մեծագույն գանձը:

Ա. Հ.

[29] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, 1965, հատոր Ա, էջ 1252, «Աթանաս», հատոր Բ, 1970, էջ 1444:

[30] Օրացույց, ս. Էջմիածին, 1977, էջ 23:

[31] Նույնը, էջ 132:

ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ

Գ Ի Ր

Մուգ կապույտ լաթակազմ, մեծադիր այս գիրքը, որի ոսկեդրոշմ խորագիրն է **Վազգեն Ա. Հայրապետ Հայոց—Գիրք երրորդ,** պատիվն ունեցա անձամբ նվեր ստանալու Վեհափառի ձեռքից երկու օր առաջ՝ այն հիշարժան երեկոյին, երբ ինձ էլ բախտ էր վիճակվել լինելու գրողների մի խմբի մեջ, որ կաթողիկոսի հրավերով եկել էր Վեհարան՝ ընդունելության:

Այդ երեկոն «հիշարժան» եմ կոչում նախ այն պատճառով, որ Էջմիածնի կաթողիկոսական 1700-ամյա գահին նստած մերօրյա Հայրապետի հրավեր-ընդունելությունը, պատմականության խորունկ զգացումն ունեցող մարդու հումար, մանավանդ հայ մարդու, անկախ կրոնի հանդեպ իր կեցվածքից և քաղաքական ու փիլիսոփայական համոզմունքներից, ինքնին արդեն հիշարժան երևույթ է՝ Վեհարանի շեմից իսկ պատմա-մշակութային և ազգային-հայրենասիրական ապրումներ հարուցող. ապրումներ, որոնք միշտ հարազատ են մարդկային հոգուն և թանկ:

Բայց կար նաև մի հատուկ հանգամանք, որով այդ երեկոն ավելի քան հիշարժան դարձավ: Մի իրադարձություն կատարվեց այդ երեկո: Մի գեղեցիկ իրադարձություն, այսպես ասած՝ գեղարվեստական լիցք ունեցող նշանակալից մի դեպք. այն դեպքերից, որոնք անջնջելիորեն տպավորվում են հիշողության մեջ ու հետզհետե, ժամանակի ընթացքում, հոգեկան իրողության ուժն ստանալով, մարդու ներաշխարհից ճառագայթում են իրենց խտացած իմաստի լույսը և թրծում, ամրացնում հոգին, առանց որ մարդ նույնիսկ գիտակցի դրան:

Այս հատուկ հանգամանքն արդեն կապված էր ոչ թե սոսկ գահակալ կաթողիկոսի, այլ բուն իսկ Վազգեն Ա. Հայրապետի՝ Նրա անձնավորության, Նրա գործունեության հետ: Մենք տեսանք մի վեհիմաստ ստեղծագործություն, որ ծնունդ է առել Վեհափառի մտահղացմամբ և ի կատար ածվել

Նրա ուղեցույց հնկողությամբ: Այստեղ «լուսանանանչ» բառն են արտասանում շրթներս, առանց ճոռոմ լինելու մտահոգության, որովհետև իրոք լուսանանանչ է այդ ստեղծագործությունը՝ թե՛ իր նյութեղեն բովանդակությամբ, թե՛ իր գեղարվեստական կատարումով և թե՛ մանավանդ իր բարոյական իմաստով ու խորհուրդով:

Անակնկալ էր հրավիրյալներիս համար:

Զգում էինք, որ Վեհափառը մի հատուկ առիթով պետք է հրավիրած լինի: Ընդարձակ, բարեզարդ, խաղաղավետ ընդունարանում, ջահի մեղմ լույսի տակ, Վեհափառի դիմաց երկար ու կանաչ սեղանի շուրջ նստած, Նրա գահակալության վերջերս տոնված քսանամյակը շնորհավորելուց հետո զրուցելով Նրա հետ հավուր պատշաճի նյութերի մասին, որոնք հայրենական ու մշակութային հարցերի շուրջ էին պտտվում անկաշկանդորեն, արժանավայել ու ջերմ մթնոլորտում, լցված էինք սպասողական մի տրամադրությամբ, որ բնականաբար աճում էր ու, չգիտես ինչու, գուցե Վեհափառի զվարթ դեմքից ճառագայթող ներքին խաղաղ գոհունակության շնորհիվ, խոստումնալից էր թվում: Ու երբ, վերջապես, տարիներ առաջ Պոլիս կատարած Իր հայրապետական այցելությունից մի քանի հուզիչ դրվագներ պատմելուց հետո, Նա մեզ առաջարկեց երկրորդ հարկ բարձրանալ՝ «մի բան» ցույց տալու համար, թաքուն սպասումը արտահայտություն գտավ հետաքրքրված, ժպտուն մի աշխուժությամբ: Նա համեստորեն «մի բան» ասաց, բայց բնական է, որ մի **կարևոր** բան տեսնելու նախազգացումը համակեց բոլորիս:

Այս նոր, շքեղ Վեհարանի երկրորդ հարկը վերջին տարիներին դարձել է հոգևոր-մշակութային գանձերի պատկառելի թանգարան:

Լայն, կարմրագորգ սանդուղքով բարձրանալուց հետո, նախ կանգ ես առնում մի հրաշալիքի առջև, որ վարդագույն մարմարե պատվանդանի վրա հառնում է դիմացդ. քարեղեն մի տեսիլք՝ հպարտ, ամրակուռ և միաժամանակ արտակարգորեն նրբին: Մոմիկ վարդապետի քանդակած նշանավոր խաչքարն է դա՝ այդ բնիկ հայկական արվեստի գլուխ-գործոցներից մեկը, ստեղծված 1308-ին, որ Նորավանքից բերվել ու կանգնեցվել է այստեղ, գտնելով իր արժանի և հավերժական պատվանդանը: Եվ այդ պատվանդանի վրայից նա դիմավորում է այստեղ բարձրացող բազում ու բազում հայորդիներին ու օտար հյուրերին՝ բոլորի աչքին պարզելով միասնությունն իր այդ երեք հատկությունների, որոնք խորհրդանշական են թվում. հպարտություն, ամրություն, նրբություն:

Այնուհետև, մի քանի հաջորդական դահլիճներում, ցուցադրված են բազմաթիվ սրբապատկերներ ու կերպարվեստի այլ գործեր՝ առավելապես հոգևոր բովանդակությամբ. մեծ մասամբ գեղանկարչական երկեր են՝ հին և նոր, հայկական, ռուսական, արևմտաեվրոպական: Անցյալ և ժամանակակից, հայրենիքում և արտասահմանում ապրող հայ նկարիչների նվիրատվություններից բացի, որոնց մեջ քիչ չեն արժեքավոր գործերը, կան նաև այնպիսի կտավներ, որոնք վերջին տարիներին այստեղ են բերվել տարբեր եկեղեցիներից: Մայր Աթոռի նկարչական արվեստանոցում մաքրված, վերանորոգված և իրենց վերջին ապահով հանգրվանը գտած այս գունանկարները, անտարակույս, հայ մշակույթի իսկական արժեքներ են, անարատ ներշնչումով և միամիտ վարպետությամբ կատարված արտահայտիչ ստեղծագործություններ: Եկեղեցիներում հայտնաբերված և, հիշտն ասելով, հետագա անուսույգ հակատագրից փրկված այդ արժեքների մեջ կա նաև եվ-

ոոպական Վերածննդի շրջանին պատկանող մի անհայտ նկարչի կտավ՝ այդ ժամանակների համար ընթացիկ սյուժեով. Հիսուսի մարմինը խաչից իջեցված...

Մեզանից շատերի, գուցե և բոլորի համար նորություն էր այս նորաստեղծ թանգարանը. և հատուկ հետաքրքրությամբ կանգ էինք առնում հայկական հին արվեստի մի քանի ինքնատիպ նմուշների առաջ, որոնց հնության շունչը, գեղարվեստական արժեքի հետ միասին, մեր մեջ հարուցում էր այն պատկառանքը, որ միշտ զգում է մարդկային հոգին իր նախնիների ոգեկան ներկայությունը թելադրող այդ վկայությունների առջև: Ու վերջապես տեսանք այն «մի բան»-ը, մեր օրերին և այս հարկի տակ ստեղծված այն գործը, որի առաջ, անկասկած, նույնպիսի պատկառանքով կանգ են առնելու հետագա սերունդները, որոնց համար մենք դարձած կլինենք նախնիներ:

Դահլիճներից մեկում Վեհափառը մեզ հրավիրեց մի կապույտ վարագույրի առջև, 16-րդ դարի գործ, սպիտակ, ոճավորված պատկերներով զարդարված: Մի երիտասարդ սքեմավոր սարկավագ բարձրացրեց վարագույրը, բացվեց պատի մեջ տեղադրված մի անխորտակելի ամրապահարան, որի մեջ էլեկտրական անտեսանելի լամպեր վառվեցին, և շողշողաց... լուսաճաճանչ Այբուբենը հայոց՝ ոսկեհուռ տառերով:

Մի քանի վայրկյան լուռ էին մեր շրթները, և հայացքները՝ հմայված: Հետո տասնմեկ զույգ ձեռքերի ծափահարությունը հնչեց դահլիճում, արձագանքելով Վեհարանի լուռ, խորհրդավոր կամարների տակ:

Ձեռքերս գրեթե մեքենաբար ծափ էին տալիս, մինչ ներսից, ասես մանկությանս խորքերից, մի տաք ու սարսռացնող ալիք բարձրացավ ու մի պահ մշուշեց աչքերս. և այդ մշուշի մեջ ծփում էին իմ հեռավոր այբբենարանի խոշոր Այբը, պատանեկությանս օրերի «Ով մեծասքանչ»-ը Թարգմանչաց տոնի իր հանդիսավոր ու սրտահույզ մեղեդիով, երկաթագիր արձանագրության մի պատառիկ վանքերի հնաբույր պատերից, մագաղաթյա ձեռագիր մի էջ մանրանկար նախշազարդ խորանով, իմ անվան հարազատ մեծատառ Կենը՝ ինքնությանս խորհրդանիշն արևի տակ,—և այս բոլորը պսպղում էին, ընդելուզվում իրար, թավալվում միգամածի նման, մինչև որ աչքերիս մշուշը պարզվեց ու թանկագին հիշատակների այդ միգամածից կարծես վերստին գոյացավ այս **ոսկեգիր** Այբուբենը:

Օնիքսե մեծադիր տախտակի վրա, վերևից ներքև չորս շարքով, նախաստեղծ երեսունվեց տառերը Ա-ից մինչև Ք, յուրաքանչյուրը խոշոր ու ոսկեձույլ, բնիկ հայկական նախշաձևերով նրբորեն զարդաքանդակված, գույնզգույն թանկագին քարերով դրվագազարդված: Եվ ամեն մի տառ մի անհատականություն կարծես, իր ուրույն բնավորությամբ, իր կենդանի արտահայտությամբ. և ամեն մի տառ մի խորհրդանիշ՝ ապրումների և խորհուրդների, որոնցով մեր երևակայությունը դեռ մանկության օրերից օժտում է բոլոր տառերը, երբ դրանց շնորհիվ, քայլ առ քայլ, աշխարհաճանաչման հրաշքը դառնում է ոգեկան իրականություն, անուն են ստանում իրերն ու զգացողությունները, հույզերն ու գաղափարները, իրար են կապվում ժամանակներն ու տարածությունները, անտեսանելին դառնում է տեսանելի, անծանոթը դառնում է ծանոթ, անհուն աշխարհը դառնում է անհուն ներաշխարհ:

Մի պահ թվաց, թե Մաշտոցի հանճարեղ տեսիլքն է բուն իսկ՝ անհպ աչքիս առաջ:

Լուսաճաճանչ տեսիլքը:

Հայացքս դարձավ Վեհափառին: Իր սև սքեմով ու գլխաբաց, կաթողիկոսական պանակեն կրծքին, Նա նույնպես ոսկեգիր Այբուբենին էր նայում՝ Իրեն հատուկ ուղիղ, սյարթև կեցվածքով կանգնած, գլուխը մի թեթև առաջ ու կողմնակի հակած: Խոհական աչքերի մեջ մի մեղմ ժպիտ կար, արդար գոհունակության ժպիտը ստեղծագործ հոգու, որ վսեմ ու զուսպ, մի քիչ էլ թախծոտ բերկրանքով ընդունում է իր կատարած գործի արժանի գնահատությունը:

«Մեր սերնդի համար հարազատ դարձավ այս հայրապետական դեմքը,—անցավ մտքովս:—Հարազատ դարձավ Վեհափառի խորապես հայրենասիրական ոգով ու գործերով, Նրա անմնացորդ նվիրումով»: Պատմությունը պիտի հիշի ու արժեքավորի այդ ոգին ու գործերը, իսկ մենք կենդանի վկաներն ենք այժմ: Մեզ համար առօրյա են այդ գործերը, իսկ առօրյան կարճատես է, դժվար է նկատում որևէ գործի ամբողջական տարողությունն ու արժեքը: Բայց սիրտը միշտ էլ, առօրյա տարակույսների և նախապաշարմունքների խորքում, կամաց-կամաց կուտակում է մոռացվող տպավորությունները, պահպանում դրանք հիշատակների իր թաքուն, նվիրական գանձարանում, և մի օր էլ հանկարծ ճշմարտության զգացումն է ճառագայթում այդ գանձարանից: Սիրտը բնազդորեն խորատես է ու ճշմարտատես: Եվ սիրտը, առանց մեր կամքի ու գիտակցության կարծիքը հարցնելու, հաճախ նույնիսկ հակառակ մեր տարակույսներին, սխալանքներին ու աչառությանը, բնազդորեն համակրում է մեծագործ մարդուն, ապա և հարգում ու սիրում է նրան, ճիշտ այնպես, ինչպես հակակրում է անբանին կամ չարագործին և խորշում նրանից:

Մեր սիրտը վաղուց արդեն հարգում ու սիրում է Վազգեն Ա Հայրապետին: Մեր սերնդի աչքի առաջ սպիտակեցին այս կարճ ու բարեձև մորուքը և ալեգանգուր մազերը: Այս լայն ու բարձր ճակատին դրոշմված է իմաստություն և խիզախություն. գործունյա իմաստություն և հանգիստ խիզախություն: Եվ հակառակ տարիքին, ոգու և մարմնի առողջության վարդագույնն է շողում այս դեմքից...

Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ, Զա... Նայում էի տառ առ տառ, ըմբոշխնելով ամեն մի տառի ոսկեշող, ադամանդազարդ գեղեցկությունը: Տասնվեց դար առաջ, հենց այս վայրում, այս Մայր տաճարի կողքին, Վաղարշապատ մայրաքաղաքի սրտում, մի ուրիշ պալատի մեջ, գուցե այսպես ահա դիտում էին նորաստեղծ երկաթագիր Այբուբենը, ու այսպիսի մի դահլիճում հնչում էր ներշնչյալ ու գործնական ձայնը Մեծն Մաշտոցի, ու ներկա էին Սահակ Հայրապետն ու Վռամշապուհ թագավորը, և իշխաններ, դպիրներ, զորականներ: Հայոց պատմության կես ճանապարհին մի նոր ու մեծ սկիզբ էր դա, սկիզբը հայ դպրության. և «սկիզբն դպրութեանն հայոց եղև սկիզբն մեծի գիտութեան և անպայման ուրախութեան»: Եվ այդ «անպայման ուրախությունը» մեզ էլ համակել է այսօր, բոլորիս սրտերն ու մտքերը միացրել նույն ապրումի մեջ, ուր ներկա են նաև **նրանք**՝ այո՛, այստեղ, այս պահիս, մեզ հետ: Թվում է՝ նրանք գիտեին, կանխազգում էին, որ տասնվեց դար հետո, այս նույն սրբազան հողի վրա, այս Վեհարանում, որպես ոսկեգիր Այբուբեն շողշողալու է այս մեր Սրբություն սրբոցը՝ երեսունվեց տառերով կառուցված աննյութական ու անխորտակելի Տաճարը հայ ժողովրդի. այն հավերժական Տաճարը, որ մեր ազգային գիտակցության ծննդավայրն է ու ապաստանը, մեր մշակույթի աղոթատեղին ու հանդիսավայրը, մեր ինքնության ձևն ու

բովանդակությունը ճարտարապետյալ, և որ մնալով միակն ու անփոխարինելիին՝ վերստին ու վերստին կառուցվել է միշտ և կառուցվելու է ամեն մի հայ մանուկի հոգում—անպայման ուրախությամբ:

«Սրբություն սրբոցը չի կարող թանգարանային նմուշ լինել, առօրյա դիտման առարկա,—անցավ մտքովս:—Նվիրական խորհուրդին պետք է մոտենալ ծեսով, հանդիսավորության զգացումով, և նա պետք է մի պահ երևա հայտնության նման ու փակվի դարձյալ վարագույրի ետև»:

Երբ մի ժամ հետո դուրս եկանք Վեհարանից, հրաժեշտի պահին նվեր ստանալով Վեհափառի այս գիրքը, դեկտեմբերի մեղմ, անձյուն, լուսնկա գիշեր էր, լուռ ու խորհրդավոր. և հանկարծ տեսիլքի նման թվաց Մայր տաճարի ուրվաստվերը՝ արծաթավուն երկնքի վրա հստակ գծագրված իր սրածայր կաթողիկեներով, որոնցից մեկի կատարին կարծես կանգնել էր լուսինը՝ կլոր, սպիտակ: Մի րոպե հայացքս չկարողացա կտրել այդ պատկերից. դարերի վկան, ուրիշ աշխարհների հետ հոգիդ կապող, ու միաժամանակ կենդանի իրականություն. քարեղեն շոշափելի կառուցվածք և ոգեղեն խորհուրդների մարմնացում. դեռ մանկությունից մտքումդ տպավորված հարազատ կերպարանք, որի առաջ ամեն անգամ կանգնում ես խորհրդավորության զգացումով, մի տեսակ զարմացած ներքուստ, ասես ժամանակների խորքում թաղված մի գաղտնիք կռահելու խռովքով:

Այդ րոպեին մտքումս պատկերացավ այն պառավ կինը, որի մասին Վեհափառը պատմել էր զուսպ հուզմունքով, երբ դեռ կանգնել էինք ոսկեգիր Այբուբենի առաջ: Մեկը հարց տվեց, թե ի՞նչ միջոցներով է ստեղծվել այս ոսկեձույլ թանկարժեք գործը: Վեհափառը պատասխանեց՝ տարիների ընթացքում խնայված ու պահպանված նվիրատվություններով: Եվ բերեց այդ կնոջ օրինակը: Վերջերս արտասահմանից հայրենադարձած՝ նա ուխտի է գալիս Էջմիածին, ունկնդրություն խնդրում կաթողիկոսից: Փոքրամարմին, ազազուն, սևազգեստ՝ կոտորածի և տարագրության ճամփաներին վշտից ու զրկանքներից մաշված, նա տասնամյակներ շարունակ, մեր բոլոր մայրերի ու մեծ մայրիկների նման, պահել-պահպանել է իր հույսն ու հավատքը և այս ուխտը կատարելու երազանքը փայփայել: Վեհափառի Աջը համբուրելուց և օրհնությունն ստանալուց հետո, նա իր ծոցի խորքերից հանում է մի փոքրիկ հնամաշ փաթեթ, և բաց անելով ծալքերը իր մոմե մատներով՝ մի ոսկյա իր է ընծայաբերում: Պարզվում է՝ դեռ եղեռնի օրերից,—իր երիտասարդության՝ օրերից,—նա իր ծոցում պահել է դա սրբությամբ, հուռութքի նման, ամենածանր զրկանքի օրերին անգամ չի փորձվել ծախսել այդ իր փոքրիկ հարստությունը, որովհետև «ուխտած էի, Վեհափառ Տեր, ուխտս ի կատար»:

Ուրեմն՝ ժողովրդի ուխտամատույց լումաներո՞վ է ձուլված Վեհափառի տեսլական այս մտահղացումը, և կատարված է դարձյալ ժողովրդի մարդու՝ ոսկերիչ վարպետ Ժիրայրի հավատավոր, շնորհալի ձեռքերով, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի նախագծով:

ՄԱՏՅԱՆ

Մուգ կապույտ լաթակազմ, մեծադիր այս գիրքն ահա բաց է հիմա սեղանիս լամպի տակ, երեկոյան այս ժամին: Հայրապետի գահակալության քսանամյակին նվիրված այս մատյանում մեծ ու փոքր հատընտիր հատված-

ներ են ամփոփված Վեհափառի կոնդակներից, քարոզներից, ճառերից, ելույթներից, նամակներից, ինչպես նաև այն գրքույկներից ու հոդվածներից, որոնք Նա հրատարակել է դեռ վաղուց, երբ աշխարհական էր՝ լուսամիտ ազգային-հասարակական գործիչ ու հրապարակագիր, խոհուն մտավորական ու մանկավարժ, և այնուհետև վարդապետ ու եպիսկոպոս՝ Ռումինիայի հայոց առաջնորդ:

Գիրքն սկսեցի կարդալ անցյալ գիշեր, Էջմիածնից վերադառնալուց հետո, և իսկույն գրավեց ինձ, առաջին իսկ էջերից: Թվում էր՝ Վեհափառի կենդանի ձայնն է հնչում շարունակ ականջներիս մեջ, իսկ մտքումս կանգնած էր ոսկեգիր Այբուբենին նայող Նրա դեմքը՝ իր առողջ վարդագույնով, ճակատը՝ բարձր, և աչքերը՝ խոհաժպիտ: Եվ ընթերցման այս երկու օրերի ընթացքում, մինչև վերջին էջը, գրքի գրավչությունը չթուլացավ: Ընդհակառակը. աճեց ու խորացավ: Ինչո՞ւ: Որովհետև, ինչպես ամեն մի լավ գիրք, այս մեկն էլ իր ուրույն ու հմայիչ աշխարհն ունի, և մտնելով այդ աշխարհը՝ ակամա ու սիրով հանձնվում ես նրա մթնոլորտին: Այսինքն՝ գիրքը հուզում է սիրտդ ու միտքդ, թանկագին ապրումներ է տալիս, մղում է լուրջ խորհրդածությունների, գոհացնում է գեղագիտական զգացումդ, մի խոսքով՝ հարստացնում է հոգիդ, որովհետև հաղորդվում ես մի ուժեղ ու մեծ անհատականության ներաշխարհին, ուր հարահոլով մի կշռույթով, ամուր առանցքի շուրջ և անխախտ ծիրերով թավալվում են ու կերպարանք ստանում գաղափարներ ու հույզեր, որոնք հարազատ են քեզ իրենց խոր մարդկայնությամբ, իրենց ազգային (հայկական) աշխարհազգացողության շնչով ու գույներով:

Այո, ճիշտ է, այստեղ մեծ մասամբ պաշտոնական բնույթի և այն էլ խիստ յուրահատուկ (կրոնական ու կանոնական) նյութեր են իրենց տարազով՝ կոնդակներ, քարոզներ, ճառեր, կաթողիկոսական բարձր Աթոռից գրված նամակներ: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ եթե նման դեպքերում պաշտոնական տարազն առհասարակ իր դիմազրկող կնիքն է դնում բովանդակության ու ձևի վրա, այստեղ, ընդհակառակը, անհատականությունը իրեն է ենթարկել տարազը բնականորեն, առանց բռնազբոսիկ ճիգի և միտումի, մնալով իր կաթողիկոսական բարձր հանգամանքի պատշաճության ու պարտադրանքների շրջանակում, բայց արտահայտելով իր ներաշխարհը, իր բովանդակությամբ ու ձևով, որովհետև դա ստեղծագործ, տաղանդավոր անհատականություն է և իդեալ ունի: Գրականության պատմության մեջ հազվադեպ չեն նման օրինակները, երբ ստեղծագործ անհատականությունը կյանք է ներշնչում այդպիսի կանոնական տարազներին: Հիշենք տասնյոթերորդ դարի եպիսկոպոս Բոսյուեին, որի քարոզներն ու դամբանական խոսքերը ակնառու տեղ գրավեցին ֆրանսիական գրականության մեջ: Կամ հին ռուսական գրականության դասականներից՝ ավագերեց Ավվակումին: Եվ կամ մեր Ներսես Լամբրոնացուն, որին «նոր Կիկերոն» կոչեցին ժամանակակիցները:

Վազգեն Ա. Վեհափառը հոետորական արվեստի վարպետ է. առանց այդ հին արվեստի դասական կանոններին խստորեն հետևելու, Նա ինքնուրույն կառուցումներ է անում, անսալով Իր սեփական ներշնչման թելադրանքներին, բայց և Իր մտքի աչալուրջ կարգապահությանը ենթարկելով դրանք, ինչպես նաև ազատորեն օգտագործելով Իր արտահայտչական միջոցները, բայց միշտ չափն ու կշիռը պահպանելով՝ հանուն մտքի հստակության ու ձևի զուսպ գեղեցկության:

Նրա լեզուն ճոխ է և ճկուն, հարուստ է կշռույթով և բարձր ոճի պատկերավոր արտահայտություններով, հաճախ զարմանալիորեն զուգակցում է ռոմանտիկ հուզականությունը դասական ջինջ մաքրության հետ. և իր բոլոր շքեղություններով հանդերձ, երբեք ճոռոմ չէ այդ լեզուն, այլ միշտ մնում է մտքի գործիք՝ ոգի և իմաստ մարմնավորող:

Ճկուն է նաև ոճը, որ խորքում միշտ լինելով հռետորական-հրապարակախոսական՝ երբեմն նկատելիորեն տարբերակվում է ըստ, այսպես ասած, ժանրի և նպատակադրման. կոնդակներում ավելի հանդիսավոր է, հորդորական և վսեմաշունչ. ճառերում ու ելույթներում ավելի տիրապետում են աշխույժ, մի տեսակ ներքուստ դիալոգային շեշտերը, որով հռետորի խոսքը թողնում է իր լսարանի հետ երկխոսության մեջ լինելու տպավորություն. նամակների ոճը ավելի գործնական է ու անմիջական, նույնիսկ գիտականորեն ճշգրիտ, երբ վերլուծում է կարևոր հարցեր ու Իր տեսակետը հայտնում. իսկ քարոզներում ավելի բաբախում է հուզական շունչը, և մտքերն ու զգացումները հաճախ զգեստավորվում են այնպիսի ոճով, որի արտահայտչական ուժը մոտենում է գեղարվեստականի, նույնիսկ բանաստեղծականի:

Բայց բոլոր դեպքերում Վեհափառի խոսքը լուսավորված է մտքի հընտակատես պայծառությամբ, ջերմացած է սրտի անկեղծ ներշնչումով, ամրապնդված է Իր բարոյա-գաղափարական ու հայրենասիրական կեցվածքի շրջանկատ ու իրատես կայունությամբ: Նրա լուսամիտ դատումները շաղախված են անկեղծ ու ազնիվ ապրումով, որի խորքում զգացվում է խորունկ մտորումների կշիռը՝ տարակուսանքի և ճշմարտության նժարներով, մեծ պատասխանատվության զգացման ու խղճի անկաշառ հայացքի տակ. մի բան, որ հենց ստեղծագործ անհատականության է հատուկ: Եվ դատումի ու ապրումի այդ միաձուլումն է անշուշտ, որ գրքի գրավիչ աշխարհն է ստեղծում՝ հեղինակային ամբողջականության ինքնուրույն դրոշմը դնելով յուրաքանչյուր տողի, յուրաքանչյուր հատվածի և ամբողջ գրքի վրա:

Այս ստեղծագործ անհատականության լայն մտահորիզոնը, եռանդուն ու բազմաջան Հայրապետի գործունեության լայն շրջանակի հետ, գիրքը դարձրել է նաև բովանդակությամբ հարուստ ու բազմակողմանի: Ավելի ճիշտ՝ բովանդակության բազմակողմանի հարստությունը հենց այդ մտահորիզոնի և գործունեության լայն ընդգրկումներն է արտացոլում: Վեհափառի մտածողությունը հակված է ավելի հորիզոնական, տարածական, այսպես ասած էպիկական ընդգրկման: Նա ձգտում է հարցերը դիտել տարբեր կողմերից և վերլուծել ոչ այնքան տեսական-հայեցողական, որքան գործնական-կիրառական տեսանկյունով, բարոյական և նյութական իրագործումների հասնելու մղումով:

Նրա մտածողության առարկա եղող հարցերը կարելի է բաժանել երեք ոլորտների, որոնք թեև սերտորեն առնչված են իրար հետ, բայց նաև որոշակիորեն զատորոշվում են իրենց բնույթով. և համապատասխանորեն՝ նրա գործունեության մեջ էլ կարելի է զատորոշել իրար հետ սերտորեն առնչված երեք ասպարեզ:

Առաջինը, բնականաբար, կրոնական-աստվածաբանականն է:

Որպես աշխարհական, այսպես ասած՝ «դրսի» մարդ, որ հեռու է աստվածաբանական խնդիրներից, ես ինձ, անշուշտ, ի վիճակի և իրավասու չեմ համարում որևէ դատում անելու Հայրապետի մտածողության ու գործունեության այս ոլորտի վերաբերյալ: Բայց որպես ընթերցող, որ սիրում է կարդալ ու մտածել հասարակական-փիլիսոփայական հարցերի մասին և ի մասնավո-

ի հետաքրքրվում է կրոնի փիլիսոփայությամբ, հարկ եմ համարում արտահայտել իմ տպավորությունն այս գրքի որոշ հատվածներից:

Նկատելի է, որ Վեհափառը, լինելով բարձր իմացականության տեր հոգևորական և պայծառամիտ ու իրատես անձնավորություն, ոչ միայն տուրք չի տալիս այսպես կոչված «բյուզանդական» դոգմատիկ, սխոլաստիկ մտայնությանն ու վեճերին, այլև գիտակցորեն կոչ է անում խուսափել դրանցից՝ այդպիսի մտայնությունը համարելով մեր դարում ժամանակավրեպ ու վնասակար: Նա տեսնում է կրոնական գիտակցության տագնապը այսօրվա աշխարհում և, որպես հնագույն եկեղեցվո Հայրապետ, բնական է, մտահոգվում է դրանով: Սակայն լինի էկումենիկ շարժման բեմերից, լինի հայ և օտար բարձրաստիճան կղերականներին ուղղած Իր նամակներում և խոսքերում, Նա համարձակորեն և աներկբայորեն հայտարարում է Իր տեսակետը, թե «գիտության և փիլիսոփայության զարգացման մեր դարաշրջանին» եկեղեցիները պետք է «բացվեն աշխարհին» կրոնական, գիտական, մշակութային, ընկերային-սոցիալական, քաղաքական մակարդակների վրա՝ նկատի առնելով դարաշրջանի հրատապ խնդիրները և հենվելով քրիստոնեական ուսմունքի ընկերային-բարոյական անարատ ակունքներին: «Զմոռանանք երբեք,—ասում է Նա մի առիթով,—որ քրիստոնեական ուսմունքը նաև մի աշխարհայացք է երկրային կյանքի վերաբերյալ»: Իսկ անօգուտ վեճեր հարուցող դավանաբանական հին հարցերի, հին կաղապարների մասին մի այլ առիթով ասում է. «Այսօրվան մարդոց համար, այդ հարցերը դատարկված են իրենց նախնական, հուզական բովանդակությունենեն և դարձած են լոկ վերացական մտածման առարկա»:

Արդարև, ի հաստատումն դրա, թող ինձ թույլ տրվի ասել, որ «այսօրվան մարդու» իմ բանականության համար, օրինակ, իրոք որ վերացական, երբեմն էլ տարօրինակ են թվում այդ հարցերը և առ առավելն պատմական հետաքրքրություն են ներկայացնում, որքան հասուն տարիքում կարողացել եմ ծանոթանալ դրանց՝ աշխատելով ըմբռնել բուն իմաստը. ոչ էլ իմ սիրտն են հուզել դրանք այնպես, ինչպես հուզում էին աստվածաշնչական կենդանի, բանաստեղծական պատմություններն ու խրատները մանկությանս ու պատսանեկությանս օրերին, երբ կրոնագիտություն էի անցնում: Մինչդեռ բոլորովին տարբեր է բուն Ավետարանի բարոյական բարձր սկզբունքների պարագան. ամբողջ երկու հազար տարի այդ սկզբունքները քաղաքակրթական ազդակ են դարձել և, գիտակցենք կամ ոչ, որպես քաղկացուցիչ տարր մտնում են «այսօրվան մարդու» հոգեբանության մեջ մանավանդ քրիստոնեական աշխարհում, ինչպես մտնում են նաև քրիստոնեական (և ոչ միայն քրիստոնեական) դոգմաների և առասպելաբանության բանական քննադատությունները՝ Դեկարտից ու Սպինոզայից, Կանտից ու Հեգելից, տասնութերորդ դարի ֆրանսիացի դեիստ ու աթեիստ փիլիսոփաներից հետո, մանավանդ որ Էյնշտեյնի «տիեզերական կրոնական զգացման» ըմբռնումն էլ, որպես տիեզերքի անհուն ներդաշնակության խորհուրդի ապրում, սկսել է մտածող մարդկանց գիտակցության մեջ տեղ գրավել գիտական հեղաշրջող հայտնագործությունների այս օրերին, երբ մարդկությունը հաղթահարել է նույնիսկ երկրի ձգողական ուժը և դուրս եկել տիեզերք:

Մտածող ու անաչառ մարդու համար, լինի հավատացյալ կամ ոչ, ողջունելի է մեր Հայրապետի նման կեցվածքը, որ ճշմարտորեն շեշտը դնում է քրիստոնեական ուսմունքի բուն բարոյական էության վրա, մանավանդ երբ մտաբերում ենք (և Վեհափառը Ինքն էլ հիշեցնում է Իր գրքում այդ

մասին), որ այլևայլ կարգի «բյուզանդական» հարցերը նույնիսկ արյունահեղ բախումների առիթ են տվել քրիստոնեական աշխարհում՝ քաղաքական շահերի գործիք դառնալով ի հեճուկս Քրիստոսի բուն վարդապետության, դառնալով նվաճողական քաղաքականության գործիք մանավանդ մեր ժողովրդի նկատմամբ:

Հետաքրքրական է նշել, որ նման կեցվածքից բխում են նաև Վեհափառի բարոյա-փիլիսոփայական ինքնատիպ, խորունկ ու գեղեցիկ մեկնությունները, որ Նա բազմիցս տալիս է, օրինակ, Հիսուսի Ծննդյան ու մանավանդ Հարության խորհուրդներին՝ ձգտելով այդ «երկինք և երկիր հաշտեցնող» խորհուրդների իմաստը բացահայտել հավերժ վերածնվող կյանքի և մարդկային ազատ ու ստեղծարար հոգու խորքերից, ասես ջանալով զուգորդել, եթե կարելի է այսպես ասել, մարդկային հոգեբանության երկու տարբեր երեսները՝ առասպելագործությունն ու իրապաշտությունը: Եվ հաճախ այդ մեկնությունները հանգում են բարոյագիտական շինիչ պատգամների. «Հսկեցե՛ք և արթո՛ւն մնացեք, որ հարության հույսը չմարի ձեր հոգիներեն ներս: Հավետ ապրելու տենչով է, որ մարդ կգերազանցե ինքն իրեն, կդառնա շինող, ստեղծագործող, կդառնա արարիչ, կդառնա անմահ: ...Առանց հավետ ապրելու հույսին, մարդ կմեռնի մահեն իսկ առաջ. այդ հույսով, սակայն, ան կապրի մահեն ալ անդին»:

Երկրորդ ոլորտը մշակութային-ստեղծագործականն է ու ազգային-հայրենասիրականը:

Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակի առթիվ արտասանած Իր ճառի մեջ Վեհափառը հետևյալ միտքն է հայտնում. «Մեզ թվում է, թե սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս հարցում հայ հոգևորականները երկնից արքայության տեսիլքը իրենց սրտերում վառ պահած, առավել քան այլ եկեղեցիների սպասավորները, շեշտը դրել են երկրային իրագործումների վրա, ստեղծարար աշխատանքի վրա այս կյանքում»:

Երբ կարդում էի այս տողերը, ներքին հայացքս վայրկենապես տեսավ մեր մեծերին, Մաշտոցից սկսած, և հայտնի ու անհայտ բազում մշակներին անցյալում, բոլոր նրանց, որ մեր բազմադարյան մշակույթն են ստեղծել՝ պատմիչներ, բանաստեղծներ, փիլիսոփաներ, գիտնականներ, երաժիշտներ, ճարտարապետներ, ծաղկողներ, գրիչներ, բժիշկներ, նույնիսկ պետական գործիչներ,—բոլորն էլ հոգևորականի աքեմով, ամենամեծերը «սուրբ» կոչմանն արժանացած, և մի ներքին ձայն, ճշմարտությանն արձագանքելու գոհունակությամբ, ասաց. «Ճիշտ է»: Հայ իրականության մեջ սրբության լուսապսակը ոչ այնքան նահատակության, որքան ստեղծագործական սխրանքի վկայությունն է եղել: Պատմական այս ակնհայտ իրողության վրա է հիմնված Հայրապետի այդ հաստատումը: Իսկ հաջորդ վայրկյանին, տեսնելով 1972 թվականն այդ տողերի տակ, Վեհափառի գահակալության 17-րդ տարին, մտածեցի. «Այդ հաստատումը, գուցե անգիտակցորեն, գալիս է նաև Վեհափառի անձնական փորձառությունից, գուցե հոգու թաքուն ինքնաճանաչման մի պահի դրսևորումն է դա»:

Այս գիրքը կարդալիս, զուտ ընթերցողական հաճույքից բացի, որ պատճառում են դրա ինքնաբուն արժեքները՝ հեղինակի հարուստ մտքերն ու ճոխ լեզուն, զգում ես նաև մի այլ հուզմունք, և հանկարծ անդրադառնում ես՝ գիրքը առարկայականորեն դարձել է նաև ժամանակագրությունը այնպիսի իրագործումների, որոնց ականատես ես եղել քսան տարվա այս շրջանում, և որոնք հիմա, ոգեկոչվելով մտքիդ առաջ իրենց լինելության ընթացքով

ու ավարտված իրողությամբ, պատմական մեծ իրագործումների կերպարանք ու իմաստ են ստանում. էջ առ էջ՝ կարծես լսում ես կառուցման մի սիմֆոնիա, ուր թեմաները ներքին տրամաբանությամբ բխում են իրարից և ճարտարապետում մի ներդաշնակ ամբողջություն: Եվ այդ սիմֆոնիայի հեղինակը նույնանում է գրքի հեղինակի հետ: Նրա խոսքերի խորքում տեսնում ես կառուցվող գործը: Եվ խոսք ու գործ դառնում են մի մարմին, դառնում են մի դեմք, որի անունն է Վազգեն Ա Հայրապետ Հայոց:

Արդարև, հիշողությանդ խորքերում տեսնում ես Էջմիածինը քսան տարի առաջ՝ մի պատկեր, որ կարծես մոռացել էիր արդեն. հողաշեն, անձրևներից ու քամուց քայքայված պարսկական պարիսպներ, սիրտ տխրեցնող հիշատակների մի օղակ, որի կենտրոնում կանգնած էր Մայր տաճարը կարծես սևահոն, մռայլ մի հպարտությամբ, իր նեղ ու խղճուկ շրջափակից անգոհ, իր հեռավոր փառքի խոկման մեջ ամփոփված, այսօրվա աշխարհից մոռացված մի մենավոր, որին այցելության էին գալիս ամենահավատարիմ զավակները միայն՝ հավատացյալներ, ուխտավորներ և կամ պատմության ու դարավոր մշակույթի սերն ունեցող մարդիկ:

Այդ պայմաններում նոր կաթողիկոս է ընտրվում Ռումինիայի հայոց առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Պալճյանը: Նա «ահիվ և երկյուղիվ» մոտենում է Լուսավորչի գահին՝ «քաջ գիտնալով բազում դժվարությունները». մոտենում է «ծանր լուծ» ընդունելու գիտակցությամբ: Դա նշանակում է, որ մեծ պատասխանատվության զգացումով էր մոտենում, իսկ մեծ պատասխանատվություն կզգա այն մարդը, որ իր առաջ մեծ նպատակ է տեսնում և հոգեկան թաքուն ուժեր ունի դժվարությունները հաղթահարելու համար: Ես հիշում եմ Վազգեն եպիսկոպոսի դեմքն այն ժամանակ՝ սևամորուս և լրջախոհ:

Հազիվ մեկ տարի հետո, հայրենի պետության բարոյական սատարով ամրացած, Վեհափառի ձայնը հնչում է վստահորեն. «Այժմ ստուգապես կարելի է ըսել, թե Հայաստանյայց եկեղեցին և իր Մայր Աթոռը իրավ վերածնունդի շրջան մը պիտի սկսին»: Ու Մայր տաճարի կամարների տակ, «խոր իմաստներու, իրավ արժեքներու, անկորնչելի գեղեցկություններու» հազարյոթհարյուրամյա նվիրական մի աշխարհի շնչով տոգորված, Հայրապետն Իր քարոզում արտասանում է խոսքեր, որոնք երդումի նման են հնչում.

«Եվ ահա այս հազարամյա սրբատաշ քարերու վրա կանգնած ենք մենք՝ այսօրվաններս: Մենք ենք տերը և պահապանը այս քարերուն: Կանգնած անոնց վրա, մենք պիտի չշարժինք և պիտի չտկարանանք երբեք, այլ աներկյուղ ու համարձակ, սրբությամբ պիտի պահենք, պահպանենք մեզի հանձնված այս սրբազան ավանդը, ուխտելով մեր կյանքի գործերով հավատարիմ մնալ անոր պատգամին: Մեր հավատքին, մեր մտորումներուն, մեր հույզերուն, մեր երազներուն, մեր կյանքին ստուգությունն են այս քարերը: Անոնց վրա պիտի հիմնենք ու պիտի կառուցենք մեր նոր կյանքը, պիտի կերտենք մեր պայծառ ապագան»:

Ու գրքում, մտքիդ առաջ, վերստին լսում ես Վեհափառի խոստումներն ու ծրագրերը այդ տարիներին, ապա և տեսնում ես, թե ինչպես քայլ առ քայլ իրագործվում են դրանք ներշնչումով ու հաստատակամությամբ, իրատեսության ուղեցույց սկզբունքով, որ հոյակապ է ձևակերպում Վեհափառն Ինքը. «Կյանքի մեջ լավագույնը՝ հնարավորն է»:

Տեսնում ես՝ ինչպես է պայծառանում Մայր տաճարի դեմքը ներքուստ և արտաքուստ, բարոյապես և նյութապես:

Տեսնում ես՝ ինչպես ընդարձակվում և բարեզարդվում է շրջափակը, մայրավանքին պատշաճ կերպարանք ու կյանք ստանալով:

Տեսնում ես՝ ինչպես չքանում են հողե կիսավեր պարիսպներն իրենց տխուր հիշատակներով, և բարձրանում են նորակերտ սրբատաշ պարիսպներ՝ վերակենդանացնելով Անիի մեծ մուտքի ոճը վանքի գլխավոր դարպասին:

Տեսնում ես՝ ինչպես վերստին կանգնում է Տրդատա դուռը տուֆաշեն, և նրա լայնաղեղ կամարի տակով մի նոր հորիզոն է բացվում Մայր տաճարի առաջ՝ Նոր Վեհարանով:

Տեսնում ես՝ ինչպես Նոր Վեհարանը դառնում է շքեղ ու անդորրավետ պալատ, մարմարակերտ գահասրահով, ու Վեհարանի ճանապարհին կանգնում են անհայտ անկյուններից կյանքի կոչված խաչքարեր՝ իրենց հնաշունչ գեղաքանդակ արժանապատվությամբ:

Ու տեսնում ես, թե ինչպես կատարվում են հիշատակության արժանի բազում այլ գործեր: Հիմնվում է նկարչական արվեստանոց՝ «սրբազան նկարչության հայկական ոճ և դպրոց ստեղծելու» նպատակով, որպեսզի «մեր եկեղեցիները օժտվեն այնպիսի սրբապատկերներով, որոնք իրենց ոճով ու գեղարվեստական արժեքով մոտենան գեթ մեր փառավոր ճարտարապետության և մեր քարակերտ զարդաքանդակներու անճառ ձևերուն»: Հաստատվում է նոր տպարան, ուր տպվում են բազմաթիվ արժեքավոր գրքեր, ըստ որում նաև այս գիրքն ահա: Վերանորոգվում են հայ ճարտարապետության գլուխ-գործոց Հռիփսիմեն և այլ հնավանդ կոթողներ: Նորոգվում ու բարեզարդվում է Մաշտոցի նվիրական դամբարանը, և որմնանկարներով ու մեսրոպատառ պատմական ասույթներով զարդարվում Օշականի եկեղեցին դամբարանի վերև: Կառուցվում է Եղեռնի նահատակաց հուշարձանը Մայր տաճարի մոտ՝ նորակերտ խաչքարերի միաձույլ մի համադրություն: Արդիականացվում և հարստացվում է հոգևոր ճեմարանն իր ուսումնական ծրագրով և նպատակադրումներով: Վերստին աշխարհաբար թարգմանվում է Նոր Կտակարանը արևելահայերեն և արևմտահայերեն: Առաջին անգամ հրատարակվում է հայ խաչքարային արվեստն աշխարհին ներկայացնող շքեղ մի ալբոմ: Ու դեռ բազում են այն իրագործումները, որոնց շնորհիվ Էջմիածինը, հոգևոր ու մշակութային հնագույն կենտրոններից մեկը աշխարհում, այսօրվա իր կերպարանքն ստացավ. պատկառելի կերպարանք՝ իր արտաքին տեսքով ու բարոյական էությամբ:

Այո, այս բոլորը մշակութային-ստեղծագործական իրագործումներ են ամենից առաջ, այդ է դրանց մարդկային ու ազգային բուն իմաստը, որովհետև, ինչպես ճշմարտորեն ասում է Վեհափառը, «մարդու գաղափարը առավելապես և էապես բնորոշողը մշակույթն է՝ իր ամենալայն իմաստով, կրոնքն ալ մեջը առնված: Այսօր Հայաստանի ժողովուրդը, անընդհատ կերպով, մշակութային նոր արժեքներ կստեղծե գիտության մեջ, գրականության մեջ, արվեստներու մեջ: Այդ բոլորը մեր ժողովուրդի ստեղծագործություններն են, որոնք կուգան և առավել կհարստացնեն մեր ազգային-մշակութային գանձարանը: ...Մեր ժողովուրդը, եթե ապագա մը ունի և պիտի կարենա ունենալ, իրեն տեղ մը ապահովելով այս արևին տակ, այդ կարելի պիտի ըլլա իրագործել շնորհիվ իր հին ու նոր մշակութային արժեքներուն»: Այլ կերպ չի էլ կարող լինել այսօրվա և ապագայի աշխարհում, որովհետև, Վեհափառի խոսքերով նորից՝ «նյութական տիեզերքի առավել խոր ճանաչողությանը և նորանոր օրենքների հայտնաբերմանը պիտի համապատաս-

խանեն նոր իմացումներ, նոր որոնումներ, նոր հայտնություններ մարդկային ոգե-բարոյական աշխարհում»:

Պայծառանալով այսպես՝ Էջմիածինն սկսեց բացվել աշխարհին ու բաշխվել հորիզոնից հորիզոն, վանզի, Վեհափառի դիպուկ ու գեղեցիկ արտահայտությամբ, Էջմիածինը «ինչքան բաշխվի՝ այնքան կշատնա, ինչքան լույս սփռե՝ այնքան կշողա»:

Հայրապետն Իր կոնդակներով ու քարոզներով ու ճառերով արձագանքեց հայ կյանքի բոլոր կարևոր երևույթներին Հայաստանում և Սփյուռքում՝ ամեն անգամ պատմական լայն հայացքով իմաստավորելով դրանք: Ու միաժամանակ, առաջին անգամ պատմության մեջ, Հայրապետն անձամբ տարավ այդ լույսը երկրե երկիր, կատարելով բազմաթիվ հովվապետական ուղևորություններ, օվկիանոսներ կտրելով անխոնջ, հասնելով Սփյուռքի ամենահեռավոր անկյունները երկրագնդի վրա: Եվ տարագիր հայությունը որդիական ջերմությամբ պատասխանեց այդ հոգեկան միխթարությանը՝ նույնպես իր բարոյական ու նյութական սատարը մատուցելով Էջմիածնի վերածնունդին:

Բայց ավելին. որպես «ամենալայն իմաստով» հայ մշակույթի բարձր պատգամավոր, հնագույն եկեղեցվո պետի Իր հանգամանքով, Հայոց Հայրապետը միջազգային աննախընթաց հեղինակություն բերեց Էջմիածնին. ոչ միայն օտար եկեղեցական, այլև պետական իշխանություններն ամենուրեք Նրան դիմավորեցին ու ընդունեցին կառավարական մակարդակով իբրև Գերարգո Հյուրի: Ու փոխադարձաբար սկսեցին այցելել Էջմիածին բարձրաստիճան հյուրեր, պատգամավորներ, պաշտոնատար անձինք, եկեղեցական ու աշխարհական, գիտնականներ, գրողներ, արվեստագետներ աշխարհի տարբեր կողմերից, և Մայր տաճարի դարեր տեսած, հին լեզուներ լսած կամարները մեր դարի դեմքերը տեսան, մեր դարի հնչյունները լսեցին:

Վեհափառն Իր մի քարոզում ասել է. «Մեծ անձնավորություն մը ուրիշ բան չէ; եթե ոչ կորովի մեկ պատասխանը՝ տրված ժամանակի պայմաններուն, իրադարձությանց, և մանավանդ ժողովուրդի պահանջներուն՝ բարոյական, հոգևոր իդեալի մը շուրջ կազմակերպված»:

Վազգեն Ա Հայրապետի ամուր, նախաձեռնող, բեղմնավոր հայրենասիրությունը կառուցված է իրապաշտ հիմքերի վրա, ժամանակի պայմանների և պահանջների ճիշտ գնահատման վրա:

Այս գիրքը կազմող տասը բաժիններից ամեն մեկում նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով, և ամեն մի բաժնի սկզբում ծանոթանում ենք մտքերի, որ Վեհափառն արտահայտել է Իր երիտասարդության օրերին՝ 1937—38 թվականներին Բուխարեստում Իր խմբագրած «Հերկ» ամսագրում, ինչպես նաև կաթողիկոս օծվելուց առաջ հրատարակած մի շարք գրքույկներում՝ «Անձնավորության գաղափարի մասին» (1938), «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» (1940), «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» (1943), «Խուք հայրենիքի մասին» (1945), «Մեր պատարագը» (1945), «Հայրենի արևին տակ» (1954):

Այդ մտքերը ինքնին արդեն հետաքրքրական են՝ որպես գիտական հակումներ ունեցող և ինքնուրույն մտածելակերպ մշակած հրապարակագրի ասույթներ, որոնք ընկերաբանական, հոգեբանական, մանկավարժական, բարոյագիտական, գեղագիտական խնդիրներ են շոշափում, ըստ որում որոշակիորեն արտահայտված մի հիմնական մտահոգությամբ—ազգային առողջ ու լայնախոհ ինքնագիտակցություն զարգացնել գաղութահայ երիտասար-

դության մեջ, համոզիչ վերլուծումներով զգուշացնել այլասերման վտանգից՝ թե՛ ազգային սահմանափակվածության, թե՛ ուծացնող օտարամոլության առումով, գտնել ազգայինի և համամարդկայինի միջև այն ներդաշնակ զուգակշիռը, որ օտարության մեջ ապրող հայ երիտասարդին կօգնի մշակութային ու քաղաքական ուրույն դիմագիծ ունենալու այս աշխարհում, ոչ միայն չկորցնելով, այլև խորապես ճանաչելով իր բուն էությունը՝ հարազատ ժողովրդին ու հայրենիքին կապող իր արմատները:

Այդ մտքերը առավել ևս հետաքրքրական են հնչում այս գրքի մեջ: Տեսնում ես այն նախադրյալները, որոնց հիման վրա է բարձրանում կաթողիկոսի մտածողության ու գործունեության ամբողջ շենքն իր գաղափարական ամրությամբ ու ոգե-բարոյական ձևակերտումներով, որոնք սկզբունքայնության գեղեցկությունն ու համոզիչ ուժն են հաղորդում՝ խոր մտքերով հարուստ և դաստիարակչական ավյունով լի Նրա խոսքին, նպատակասլաց ու արդյունավետ Նրա գործին: Տեսնում ես մանավանդ Նրա ազգային-հայրենասիրական գործուն իրատեսության բուն արմատները, երբ կարդում ես, օրինակ, 1937-ին «Հերկ» ամսագրում տպված այս մի տեսակ առհավատչյան.

«Նույնանալ ժողովուրդին հետ որպես **կենսաբանական** էակ, նույնանալ ազգին պատմության և մշակույթին հետ որպես **բարոյական հոգևոր** էակ, նույնանալ հայրենիքի հողին ու ջուրին հետ որպես **աշխատող-ստեղծագործող** էակ, վերջապես նույնանալ հայ պետությունը ամրացնող և անոր ապագան պսակող իդեալներուն հետ որպես **կամեցող և կառուցանող** քաղաքական էակ: Ահա՛ մեր կարծիքով ճշմարիտ պատկերը ամբողջական հայուն»:

Հայրենասիրության այս հավատո հանգանակն ավելի է ամբողջանում՝ նույն օրերին նույն ամսագրում տպված հետևյալ մտքով. «Ժողովուրդ մը այնքան ներուժ կապրի, ինչքան բազմաթիվ ու բազմազան մտքի ու հոգիի կապեր կմշակե արտաքին աշխարհի ու ժամանակի խնդիրներուն հետ: Մեր ջերմ ու բուռն տենչանքն է ազգովին մնա՛լ ու ապրի՛լ»:

Այս հիմքի, այս ամրապինդ բունի վրա բարձրանում է Հայրապետի ազգային-հայրենասիրական մտածելակերպի և գործունեության փարթամ ծառը՝ իր երեք մայր ճյուղերով—Էջմիածին, Հայրենիք, Սփյուռք:

«Մենք մեր քրիստոնեությունը կհոչակենք ս. Էջմիածնով: Մեր սուրբ հավատքը անհայրենիք չէ, ոչ ալ թափառական»,—հայտարարում է Վեհափառը Իր գահակալության հենց սկզբից: Եվ քսան տարի շարունակ, ամենայն հստակությամբ, անառարկելի և անհողդողդ տրամաբանությամբ, հավաստում և պաշտպանում է մեր հնագույն եկեղեցվո ազգային ինքնուրույն դեմքը քրիստոնեական աշխարհում: Ողջունելով եկեղեցիների եղբայրական միության էկումենիկ շարժումը, որին անդամակցում է նաև Հայաստանյայց առաքելական եկեղեցին, նա իրավամբ և ճշմարտորեն պնդում է միշտ, որ պատմական օրինաչափ զարգացումով սեփական ավանդույթներ ստեղծած հայ եկեղեցին կպահպանի և կպաշտպանի իր ինքնուրույնությունն ու անկախությունը այդ միության մեջ, մանավանդ որ այդ «բազմադարյան ինքնուրույնությունը նույն ինքնապաշտպանության վահան մըն է ազգային տեսակետով». և չի մոռանում հիշեցնել միշտ, որ հայ ժողովուրդը, դեռ հինգերորդ դարից սկսած, իր հավատքի հետ պաշտպանելով իր ազգային գոյությունը մեծագույն զոհողություններով ու հերոսությամբ, պաշտպանել է նաև քրիստոնեության սահմանները արևելքում: Վեհափառը շեշտում է, որ այդ «ինքնապաշտպանության վահանը» հատկապես կարևոր է այսօր, երբ մեր ժո-

ղովրդի կեսը, 1915-ի ողբերգության հետևանքով, ցրված է ի սփյուռս աշխարհի. իսկ պատմությունը վկայում է՝ անցյալում հայ տարագիր զանգվածները, որոշ գաղթօջախներում, իրենց ազգային դիմագիծը կորցրել ու ձուլվել են հատկապես այն պատճառով, որ դավանափոխ են եղել ու կտրվել մայր եկեղեցվո ազգային ավանդույթներից:

Այս նույն մտահոգություններից են բխում նաև Ամենայն Հայոց Հայրապետի վշտալից, համբերատար ու աննկուն ջանքերը՝ կասեցնելու Անթիլիասի կաթողիկոսական Աթոռի ոտնձգությունները հայ եկեղեցվո նվիրապետական կարգի դեմ, ոտնձգություններ, որոնք, ինչ-ինչ անիտոհեմ դրդումներով, ձգտում են պառակտել Հայաստանյայց առաքելական եկեղեցին, անջատել Սփյուռքի հայությունը Էջմիածնից, փաստորեն ի չիք դարձնելով «Հայաստանյայց» բառի բուն իմաստը այստեղ: Արդարև, այդպիսի պառակտումը նշանակում է ճեղքել ինքնապաշտպանության վահանը վերից վար: Իսկ ճեղքված վահանը կդիմանա՞ թշնամու հարվածներին, մանավանդ նենգ հարվածներին: Ի՞նչ է նշանակում հայ եկեղեցի առանց Էջմիածնի: Աննեթեթություն: Ծառ՝ առանց արմատի: Նավ՝ առանց ղեկի: Մարդ՝ առանց հայրենիքի: Իսկ հայ եկեղեցվո համար Էջմիածինն արմատ է, ղեկ է, հայրենիք է՝ իր դարավոր ավանդություններով ու կենդանի իրականությամբ: Էջմիածինը հայ եկեղեցվո հիմքն է, իսկ Էջմիածնի հիմքն է Հայաստանը:

Հայաստանը հիմքն է նաև Սփյուռքի հայության: Առանց Հայաստանի և Էջմիածնի՝ Սփյուռքը կկորցնի իր գոյության իմաստը: Իսկ Սփյուռքի գոյության իմաստը կենսականորեն կարևոր է ոչ միայն իր, այլև ամբողջ հայ ժողովրդի համար, Հայաստանի համար, Էջմիածնի համար, հայոց պատմության համար: Ահա թե ինչու Ամենայն Հայոց Հայրապետի մշտական մտահոգության առարկան է Սփյուռքը, ահա թե ինչու Վեհափառը մշտապես կոչ է անում.

«Ով որ իսկապես կհավատա հայ ժողովուրդի կենսունակության և անոր ապագային, պետք է հավատք ունենա դեպի Հայաստանի ներկան, այո՛, դեպի ներկա Խորհրդային Հայաստանը: Այլևս ներելի չէ մեզի մնալ պատրանքներու և ճառերու մշուշին մեջ: Պետք է գիտնանք ուղիղ դիտել ու հրատակ տեսնել մեր երկրի աշխարհագրական դիրքը, մեր ժողովուրդի համբրանքը, մեր սեփական ուժը և այն, թե ինչ կկատարվի մեր շուրջ միջազգային կյանքին մեջ: Մեր օրերուն, մեր երկրի ու ժողովուրդի համար անհրաժեշտ է ամեն բանե վեր՝ ապահովություն, խաղաղություն և շինարար աշխատանք»:

Մեր պատմության բարդ էջերից քամված իմաստություն է սա:

Երրորդ ոլորտը Վեհափառի մտածողության ու գործունեության՝ խաղաղության պաշտպանությունն է:

Իր գահակալության առաջին իսկ օրերից Հայոց Հայրապետն ամբողջ հոգով նվիրվում է մարդկությանն սրբազան այդ դատին: Նա հայտարարում է Մայր տաճարի բեմից, որ Իր մտածումը, Իր գործունեությունը, ապագայի բոլոր Իր ծրագրերի իրագործումը հիմնում է «համայն աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության, պետություններու համերաշխ գործակցության» վրա: Եվ Իր ելույթներում միշտ ու միշտ հնչում է «խաղաղություն» բառը՝ շեփորաձայն լեյտմոտիվի նման:

Այդ բառը հատուկ խորհուրդ ունի մանավանդ հայ մարդու համար, և ոչ միայն այն պատճառով, որ նա իր եկեղեցվո բեմից ամեն կիրակի, պատարագի ժամին, լսել է այնքա՞ն հայկական ու ախորժալուր «խաղաղություն

ամենեցուն»-ը: Երևի շատերը կհիշեն մանկությունից, որ այդ պահին հառաչանքի նման մի ալիք էր անցնում բազմության վրայով. մեր տատիկները հոգոց էին հանում խաչակնքելով, մեր պապիկներն ու հայրիկները գլուխ էին շարժում մտախոհ: Խաղաղությունը մշտական իղձ է եղել հայ ժողովրդի համար, որի հայրենիքը, գտնվելով Արևելքի և Արևմուտքի սահմանագծին, շարունակ պատերազմի թատերաբեմ է եղել այդ երկու աշխարհների միջև՝ դարերի սկզբից մինչև այս քսաներորդ դարը. և հայ ժողովուրդը շարունակ ստիպված է եղել պաշտպանական մարտեր մղել չորս կողմից, իսկ երբ շունչ քաշելու ժամանակ է գտել՝ նվիրվել է բուռն ստեղծագործության, կարծես շտապելով հագեցնել կառուցելու, արտահայտվելու ծարավը: Երբ կարդում ես մեր պատմիչներին, անընդհատ տեսնում ես ժամանակների ու դեպքերի նույն հոլովույթը. թե ինչպես կառուցեցինք, թե ինչպես եկան ու ավերեցին, թե ինչպես կռվեցինք ու դուրս արեցինք, թե ինչպես կառուցեցինք դարձյալ: Եվ այդ հոլովույթի մեջ միշտ հնչում է խաղաղության իղձը՝ շեփորաձայն լեյտմոտիվի նման:

Խաղաղության իղձը լոկ բարոյա-փիլիսոփայական հայեցողություն չի եղել հայ ժողովրդի համար, այլ եղել է ուղղակի կենդանի ապրում, տեսչանք: Եթե հնարավոր լիներ այդ իղձը գործի վերածել, պայքարել այդ գործի համար, հայ ժողովուրդը, անշուշտ, պիտի հանդես գար պայքարի առաջապահ գծում:

Եվ բնական է, պատմականորեն տրամաբանական, որ Հայոց Հայրապետը եղա՛վ առաջապահ գծում, երբ խաղաղության պաշտպանությունը դարձավ համաշխարհային գործ: Նրա ձայնը, որով անհամար անգամներ հնչել էր «խաղաղություն ամենեցուն»-ը եկեղեցվո բեմից, լսելի դարձավ նաև ամբողջ աշխարհին որպես հայ ժողովրդի դարավոր իղձը՝ հնչելով իբրև Խաղաղության կոչ աշխարհին, իբրև Ուղերձ Ստոկհոլմի խաղաղության համաշխարհային կոնգրեսին, իբրև Ուղերձ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահին և ԱՄՆ-ի պրեզիդենտին, իբրև Խոսք խաղաղության պաշտպանության Պրագայի կոնգրեսում, իբրև Ելույթ ընդհանուր զինաթափման և խաղաղության հարցի շուրջ Զագորսկում, իբրև Ծառ Հելսինկիի համաշխարհային խաղաղության համաժողովում, իբրև Ծառ Բեռլինի խաղաղության համաշխարհային համագումարում, իբրև Ուղերձ ՄԱԿ-ում ընդունելության առթիվ, իբրև Նամակ Քենտրբերիի արքեպիսկոպոսին, իբրև Նամակ Հռոմի Պապին, իբրև աղոթք, մաղթանք ու կոչ՝ Մայր տաճարում և ամենուրեք...

Եվ բնական է ու տրամաբանական, որ Նրա խոսքի մեջ, միշտ և ամենուրեք, սև խաչի նման, աշխարհի հայացքի առջև կանգնում է մեր ժողովրդի մեծագույն ողբերգությունը: Քարի վրա արձանագրության նման կուռ ու ծանրակշիռ, առանց ավելորդ զգայնության, և դրանով էլ ազդու, հայտարարում է Նա Բեռլինում. «Պատերազմը բոլոր ոճիրների համագումարն է: Այսպես է, որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, 1915 թվականին, Արևմտյան Հայաստանում կայսերական Թուրքիայի կառավարության հրամանով տեղահան եղան ու բնաջնջվեցին շուրջ երկու միլիոն հայեր: Դա մեր դարաշրջանի առաջին ցեղասպանությունն էր»:

Բեռլինո՜ւմ: Ինչպե՞ս չհիշես Խրիմյան Հայրիկին այդ նույն Բեռլինում մեկ դար առաջ՝ իր «թղթե շերեփով»...

ՊԱՏԳԱՄ

Մուգ կապույտ լաթակազմ, մեծադիր այս գիրքը, որի ոսկեդրոշմ խորագիրն է **Վազգեն Ա. Հայրապետ Հայոց—Գիրք երրորդ**, փակում եմ սեղանիս լամպի տակ, դնում խաչքարի այս փոքրիկ բեկորի և Սևանից բերած այս մամռապատ, գունագեղ քարերի միջև, որոնք միակ ու թանկագին զարդերն են սեղանիս:

Վեհափառն այս ժամին, ըստ Իր սովորության, ինչպես ասում է գրքում, գուցե հանգստի ու խոկման Իր պտույտն է կատարում Վեհարանի շուրջ. և ահա կանգ է առնում մի պահ, բարձրացնելով հայացքը՝ լուսնկա գիշերվա արծաթավուն երկնքի վրա ուրվագծվող Մայր տաճարին: Ամբողջ քսան տարի Նա կատարել է և շարունակում է կատարել այն «ոգեկան պեղումը», որով ձգտում է մշտապես «գտնել Էջմիածինը և ճանաչել զայն իր ոգեկան ու գաղափարական խորհուրդով»: Քանի՞ անգամ Նա կանգնել ու նայել է այդպես, մինչև հարազատ գմբեթները լեզու են առել, իրենց հավերժական խորհուրդից մի պատգամ ևս ավանդելու համար: Եվ այդ պատգամները՝ հույզ, միտք և հորդոր դարձած, Հայրապետի խոսքերով հաղորդվել են հարազատ ժողովրդին և ամբողջ աշխարհին՝ ամենատարբեր բեմերից, երկրագնդի ամենատարբեր անկյուններում:

Տեսնում եմ Նրան այդպես կանգնած՝ հայացքը Մայր տաճարին, իսկ մտքումս դեռ հնչում է Վեհափառի ձայնը գրքի էջերից. մտքեր, մտքեր՝ խորունկ, ոգեշունչ և գործնական—մարդու և տիեզերքի մասին, ժողովրդի, պատմության, հայրենիքի, օտարության մասին, նաև հոգու, անձնավորության, մշակույթի, հասարակության, բարոյականության, իդեալի, ազատության, ինքնաճանաչման, կյանքի ու մահվան, հույսի ու հարության, տարակույսի և համոզմունքի, առաքինության ու մոլության, հավատքի և բանականության, գիտության, արվեստի, երանգների ու գույների, երգի ու աղոթքի, մանուկների և դաստիարակության, սիրո և ատելության, կառուցման և ավերման, ներդաշնակության, ժամանակի...

Ժամանակի մասին.

«Վասնզի, Մեր տեսակետով, էականը այն չէ, թե ի՞նչ է ժամանակը ինքն իր մեջ, թե առարկայական իրականության կհամապատասխանե՞ ան, թե՞ պարզապես մարդկային զգայականության մեկ կերպն է, այլ էականը այն է, թե անսկիզբ ու անվախճան ժամանակի հավիտենական տևողության մեջ ամեն մեկս մեր ժամանակը ունինք... Եվ ահա մեծ հարցումը՝ ի՞նչպես ապրիլ մե՛ր ժամանակը»:

Վեհափառն Ի՛ր ժամանակը ապրելու օրինակով պատասխանում է այդ մեծ հարցումին:

Օտարության մեջ ծնված հայորդի, գաղթական Աբրահամի և Սիրանույշի որդին, հավատքով ու համառ աշխատանքով իդեալ կերտած մարդ, նվիրյալ հոգևորական ու հայրենասեր, լայն մտահորիզոնի տեր մտածող, գործուն և անշահախնդիր մարդասեր՝ Նա եղավ 130-րդ գահակալը Լուսավորչի գահի և կարողացավ կորովի մի պատասխան դառնալ ժամանակի պայմաններին ու պահանջներին, կարողացավ իսկական վերածնունդ բերել տասնյոթ դարեր ապրած Էջմիածնին:

«Նկարագիրը իր լրիվ ու ճշմարիտ իմաստին մեջ ուրիշ բան չէ, եթե ոչ այն արահետը, որ կտանի մարդը դեպի անձնավորություն»,—գրել է Նա Իր

երիտասարդության օրերին: Կամքի ուժով ու արտի լիությամբ կերտելով Իր նկարագիրը, Նա այդ արահետը դարձրել է պողոտա՝ դեպի Անձնավորություն:

Եվ ահա Նրա վերջին գործը այսօր՝ ոսկեգիր Այբուբենը հայոց:

Նոր Վեհարանի մարմարակերտ գահասրահում, հյուսիսային պատին, դռան երկու կողմերը, Վեհափառի մտահղացմամբ փորագրված են անունները անցյալի այն մեծագործ Հայրապետների և հոգևորականների, որոնք մեր մշակույթի պատմության կաճառն են կազմում Մաշտոցից սկսած՝ իրենց բազմապիսի գործերով: Վերջին անունն է՝ Կոմիտաս վարդապետ: Պատմությունն, անկասկած, կավելացնի այնտեղ **Վազգեն** անունը, որին ժողովուրդն արդեն **Ցինարար** տիտղոսն է տվել ինքնաբուխ կերպով:

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ



ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՆՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԺԸ ԴԱՐՈՒՄ
(Պատմական ակնարկ)

Նվիրակության մասին շատ քիչ տեղեկություն ունենք. մեր եկեղեցական պատմության այդ մասը դեռ չէ ուսումնասիրված: Նվիրակության պատմության վերաբերյալ շատ ու քիչ նյութ ունենք ԺԸ դարու Բ կիսից—այն էլ տ. Գյուտ քահանա Աղանյանի հրատարակած «Դիւաններից», որոնցից և մեծապես օգտվում ենք: Նվիրակության ծաղկման շրջանն էլ հենց այդ ժամանակամիջոցը պետք է համարել:

ԺԸ դարու նվիրակության պատմության Ա կիսի համար, հակառակ իմ ջանքերի, գրեթե չկարողացա բան գտնել. այնպես որ մի ընդհանուր տեսություն տալուց հետո՝ ինձ մնում է Ղազար Ջահկեցի կաթուղիկոսի ժամանակից (1737—1750) սկսել ու տանել մինչև Ղուկաս կաթուղիկոս (1780—1799):

---

* Սիրով ենք հրատարակում ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երրեմնի ուսանող, վաստակաշատ մանկավարժ, հմուտ գրականագետ-բանասեր և «Էջմիածին» ամսագրի հարգելի աշխատակից, հանգուցյալ Խաչատուր Կանայանի արժեքավոր սույն պատմական ուսումնասիրությունը, որը սիրով խմբագրությանն են տրամադրել հանգուցյալի հարազատները:

I
Ընդհանուր տեսություն նվիրակության մասին

Տասնչորսերորդ դարու վերջերին, Լևոն Զ-ի մահվամբ (1393), հայը կորցրեց մի անգամ ընդ միշտ յուր քաղաքական անկախությունը և կապվեց այն մյուս մեծ կազմակերպության, որ եկեղեցին էր: Եկեղեցին, որ թագավորության գոյության ժամանակ ևս ուներ յուր ներգործական դերը հայ իրականության մեջ, ներկայանում էր որպես զորեղ կազմակերպություն՝ հայերին ի մի ձուլելու:

Քաղաքական անողոք ճակատագրից հալածված հայությունը ցրվում է աշխարհի զանազան կողմերը: Սակայն կար Հայաստանում դեռ մի զորեղ Հաստատություն՝ հայոց եկեղեցին, որ կարող էր յուր ցրված հատվածների հանգույցը դառնալ:

Մեծ է եղել հայոց եկեղեցու դերը մեր պատմության մեջ: Հիմա նա պետք է կարողանար աշխարհի չորս կողմում ցրված հայության համար հանդիսանալ պահապան հրեշտակ՝ զերծ պահելու նրան ամեն արհավիրքներից, պետք է կարողանար կատարյալ տարագիր որդոց մխիթարիչ հանդիսանալ:

Եկեղեցական մեծ հիմնարկության կենտ-

ռոնը ս. Էջմիածինն էր: Նա այն ջահն էր, որից լուսո շողեր էին տարածվում ցրված հայության խավարչտին անկյունները:

Այդ ժամանակվանից սկսած, ահա, ըստ ամենայն հավանականության, առաջ է գալիս մեր եկեղեցական կյանքում մի զորեղ գործոն, որ հայտնի է **նվիրակություն** անունով: Այդ գործոնի շնորհիվ այնուհետև շեշտվում, պայծառանում է Էջմիածինը, սրա հետ կապվում են հայության բոլոր հատվածները, որոնք նրանով ոգևորվում, նրա սիրով արտահայտում էին իրենց ազգային հայրենասիրական զգացումները:

Արդ, ի՞նչ է **նվիրակությունը** և ովքե՞ր էին նվիրակները:

Նվիրակ բառը անտարակույս առաջացել է նվեր բառից, որովհետև նվիրակության պաշտոնի մի մեծ իմաստն էլ այն էր, որ նվիրակներն իրենց շրջագայության միջոցին նվերներ էին հավաքում ժողովրդից Մայր Աթոռի համար. ուրեմն նվիրակ (երբեմն էլ նվիրակող) նշանակում է նվերներ հավաքող: Սակայն, նվիրակ բառը նվեր բառից ծագելով դարձել է արդեն մի հասկացողություն—եզր, որոշ գաղափարի արտահայտություն:

Նվիրակները եպիսկոպոսներ կամ վարդապետներ էին, որոնք ուղարկվում էին կաթուղիկոսի հրամանով տարագիր և Էջմիածնի սահմաններից դուրս գտնված հայերի մեջ՝ նրանց հոգևոր մխիթարիչ լինելու կաթուղիկոսի կողմից և բարեպաշտ ժողովրդի կամավոր տուրքը ժողովելու ի պայծառություն ս. Աթոռի:

Նվիրակները դուրս գալով Էջմիածնից վերցնում էին իրենց հետ **մյուռոն** ժողովրդին բաշխելու: Առանց մյուռոնի նվիրակն Էջմիածնից դուրս չէր գա. նվիրակության պաշտոնի հետ անհրաժեշտորեն կապված է և մյուռոնի բաշխման դերը: Նվիրակները իրենց հետ ունենում են նաև **նվիրական կոնդակ**, որով մի փաստաթուղթ է տրվում հոգևորականի ձեռքին՝ թե նա նվիրակ է և ս. Էջմիածնից, կաթուղիկոսից է ուղարկված: Այդ կոնդակն ևս անհրաժեշտ է, որովհետև բազմաթիվ հոգևորականներ դեսից-դենից դուրս են գալիս և նվիրակության անվան տակ սկսում են շահագործել ժողովուրդը և ս. Էջմիածնի վարկը գցում: Նվիրակներից նրանք, որոնք եպիսկոպոս էին, վերցնում էին իրենց հետ նաև մի-մի վարդապետ կամ սարկավագ որպես օգնական, կամ, ինչպես ասվում է սովորաբար, սպասավոր: Բայց պատահում է, որ վարդապետ նվիրակներն էլ ունենում են իրենց հոգևոր սպասավորները:

Այսպես՝ ծանրաբեռնված մյուռոնով, հայրապետական, սրբատառ կոնդակով, բազմաթիվ թղթերով, որ գրում է կաթուղիկոսը զանազան հայ իշխանների, նվիրակը դուրս է գալիս ս. Էջմիածնից և դիմում դեպի յուր վիճակը նվիրակելու:

Կային նվիրակության համար որոշ թեմեր[1], շրջաններ, որոնց յուրաքանչյուրի համար նշանակվում էր մի-մի նվիրակ: Նվիրակը սովորաբար պետք է իր գործը կատարեր և վերջացներ երեք տարվա ընթացքում, բայց նա երբեմն մնում էր երեք տարուց ավելի:

Գնում էին նվիրակները, սակայն նրանց համար ճանապարհին առաջանում էին դժվարություններ, արգելառիթ հանգամանքներ: Հաղորդակցությունը կատարվում էր կարավաններով, այլ միջոց չկար: Նվիրակները երբեմն ավազակային խմբերի ձեռն էին ընկնում, երբեմն բնության արհավիրքներին ենթարկվում. բայց տանում էին նրանք բոլոր տանջանքները և, հարթելով իրենց առաջ դուրս պրծած խոչընդոտները, մտնում էին վիճակներն՝ իրենց սրբազան պարտքը կատարելու: Նրանց կրած նեղությունների մասին իբրև օրինակ հիշենք այստեղ Հնդկաստանի նվիրակին պատահած դեպքը ծովի վրա՝ Հնդկաստանի ճանապարհին: Հնդկաստանի այդ նվիրակը՝ **Հովհաննես եպիսկոպոս Պոնտացի**, որ ու-

[1] Նվիրակության թեմերի ցանկ կարելի է գտնել «Զամբռում», էջ 44—51 և «Դիւան», Գ, էջ 793—806: «Դիւանի» մեջ եղած ցանկը կազմել է Սիմեոն կաթուղիկոսի նախապատիվ սպասավոր Մկրտիչ արքեպիսկոպոսի սանիկ Երեմիա Օշականցի նոտարը, որը վերջը արքեպիսկոպոս դարձավ: Այս ցուցակը կրում է հետևյալ վերնագիրը. «Աստուածակառոյց մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրակական արդեանց շրջագայելի քաղաքքն հանդերձ գիւղաքաղաքօք նոցին, ըստ յատուկ յատուկ անուանց մի ըստ միոջէ ստորագրին»: Այնուհետև թվում է մեկ-մեկ նվիրական յուրաքանչյուր թեմերը և դրանց մեջ եղած քաղաքները, գյուղերը ևլն: «Զամբռի» և «Դիւանի» ցուցակներն իրարից քիչ տարբեր են ձևի, անունների և մասամբ բովանդակության կողմից:

Նվիրակության թեմերի մեջ կան տեղեր, որ կոչվում են «Տէրունի»: «Տէրունի» կոչվում էին այն գյուղերը կամ քաղաքները և կամ համայնքները, որոնց հասույթն անմիջապես Մայր Աթոռ էր գնում և իրենք պատկանում էին անմիջապես ս. Էջմիածնին: «Տէրունի» կոչվում էին և կաթուղիկոսական թեմերը, որոնց առաջնորդներին ինքը կաթուղիկոսն էր նշանակում ուղղակի՝ և ոչ մի պետության չէին առաջարկվում հաստատության համար. այդ թեմերի եկամուտն էլ ս. Էջմիածնին էր պատկանում:—Ռուսահայոց թեմերից այսպիսի թեմ է հին ժամանակներից սկսած մինչև այժմ Երևանի թեմը (ծանոթ. «Դիւան», Գ, § 56):

դարկված էր Հակոբ Ե Շամախեցի կաթուղիկոսի (1759—1763) կողմից, գրում է մի նամակով յուր գլխովն անցած փորձանքները[2]: 1762 թ. հունվարի 20-ին նվիրակը և յուր ուղեկիցները Բասրայից նավ են նստում և, 40 օր գնալուց հետո, հասնում Հնդկաց Բանտար Սուրաթ քաղաքը, ուր նվիրակը, բավական ժամանակ մնալուց հետո, ավարտում է այնտեղի նվիրակության գործը և ապրիլի 24-ին դուրս գալով Սուրաթից նավ է նստում Կալկաթա գնալու: Նավում բացի նվիրակից կային և բազմաթիվ մարդիկ: 60 օր ծովի վրայով գնում են և հազիվ թե մոտենում են Կալկաթային, այնպես որ «ի հեռաստանէ անմարդաբնակ և ամայի ցամաքն երևիր և նաև այնչափ հեռի կայր ի ցամաքէն, որպէս ի Սրբոյ Աթոռոյն մինչև ի յԵրևան քաղաքն որքան է, նոյնչափ էր հեռի նաև ի ցամաքէն»,—և անա մրրիկ է բարձրանում, ծովն ալեկոծվում է և նավը տաշեղի նման այս ու այն կողմն է շպրտվում. ալեկոծության ժամանակ շատերը փոքրիկ նավակներ կամ գերաններ նստած ազատվում են, իսկ մեր նվիրակը մի քանի մարդկանց հետ դեռ մի քանի օր էլ մնում է անարկու ծովի վրա ընկղմվող նավակի մեջ: Քիչ հետո նավի մասերն էլ բաժանվում են և նվիրակը յուր մարդկանցով, Աստուծո օգնությամբ, մի տախտակի վրա ընկած ցամաք են դուրս գալիս և երեսն ի վայր ընկնելով սաղթում են Ազատարար Աստուծուն: Նավի մեջ եղած մարդկանցից ազատվում են՝ հայերից 5 հոգի, որոնցից մեկը նվիրակն էր: Ծովն են ընկնում նվիրակի սնդուկը, որի մեջ էին գտնվում սրբալույս մյուռոնը, և եպիսկոպոսի գրքերը, կոնդակը և այլ բեռներ: Բայց մյուռոնը վերջը դուրս է գալիս ծովի ափ և գտնվում է. «Բայց մինչ ազատեցաք ի ծովէն զկնի երկուց աւուրց վարդավառի պասին—գրում է նվիրակը—երեքշաբթի օրն, ի յառաւօտեան ժամուն, ի ծագելն արեգական, մինչ օնայաք լեզր ծովուն, յայնժամ անճառաւիրաշ սքանչելեօքն Աստուծոյ, յանկարծակի գտաք զՍրբալոյս Մեռոնն ամբողջ և անաբաւ իւր ամանովն և մուշամպովն կապեալ և լաթով կնքեալ, որպէս որ էր յառաջագոյն, նոյնպէս անարատ գտաք. և ի նմին ժամու եղեալ զնծութիւն մեր ոչ կարեմ գրով պատմել: Արդ՝ նոյն սանտրխտի (=սնտուկ) մէջն բազում գիրք կայր, թող զգեստսն և զայլ ամենայն ինչսն, բայց ամենեին մէկ զատ դուրս ոչ եկն, և ոչինչ գտաք, բայց միայն զՍրբալոյս Մեռոնն գտաք, և առեալ զնա մեծաւ ցնծութեամբ և բազմաւ ուրախութեամբ գնայաք»: 40 օր շրջում են ծովերքում և ճանապարհ են փնտրում որևէ վեզերքում և ճանապարհ են գտնում, սակայն ապարշենքի մոտ գնալու համար, սակայն ապարշենքի մոտ գնալու համար, սակայն ապարշենքի մոտ գնալու համար: Գիշերը մոտիկ անտառից ադրում է դյուն: Գիշերը մոտիկ անտառից ադրում է դյուն: Գիշերը մոտիկ անտառից ադրում է դյուն

համար նվերներ հավաքելով նրանք վերահասու են լինում ժողովրդի ցավերին, քարոզում, մխիթարում են նրանց: Ահա մի տեղ հայտնվել է ճեզվիթ կրոնավորը, որ, պղտորելով ժողովրդի միտքը, ուզում է դավանափոխ անել նրան. իսկույն վրա է հասնում Էջմիածնի նվիրակը և մոլորյալ ժողովրդին ուղիղ ճանապարհի բերում՝ հորդորելով հարազատ և հավատարիմ մնալ իրենց եկեղեցուն, հնազանդ Ամենայն Հայոց կաթուղիկոսության: Որպեսզի նվիրակը կարողանա զերծ պահել ժողովրդին զանազան գառնազգեստ գայլերից, օտար հավատի քարոզիչներից, պետք է որ ինքն էլ քաջ տեղյակ լինի հայոց եկեղեցու դավանության և նրա ուսմունքին:

Ժողովրդի մեջ ծագած վեճերի, կռիվների հանդարտեցնողն է նվիրակը. իսկ եթե վերջինիս հետ է վեճ ունենում ժողովուրդը, այն ժամանակ նրանց դատը հանձնվում է մեկ ուրիշ նվիրակի: Վերջին տեսակի նվիրակը, որ հաճախ ուղարկվում է շատ նվիրակների մոտ՝ նրանցից հավաքում հասույթները, կոչվում է «նուիրակ նուիրակաց»: Այսպիսի «Նուիրակ նուիրակաց» է Ղազար կաթուղիկոսի ժամանակ Աստապատցի Ղազար վարդապետ (Դիւան, Գ, էջ 27):

Նվիրակները հաստատուն բնակավայր չունեն՝ ինչպես առաջնորդները. նրանք շրջում են միշտ և վառ պահում ժողովրդի մեջ հայի հավատը. նրանք ներկայանում են տարագիր հայության մեջ որպես փոխանորդներ կաթուղիկոսի, վերջնիս կողմից բերան են հանդիսանում ժողովրդին:

Չպետք է շփոթել այն ժամանակվա **առաջնորդ** և **նվիրակ** գաղափարները: Առաջնորդը նստում էր վանքում կամ քաղաքում և հանդիսանում էր Մայր Աթոռի ներկայացուցիչ՝ որպես վարչական պաշտոնյա, թե՛ հասարակական և թե՛ եկեղեցական գործերում. իսկ նվիրակները մնայուն վարչական պաշտոն չունեին, այլ նրանք լոկ բարոյական կողմի վերահսկիչներ էին ժողովրդի վրա: Դրանք նաև մի տեսակ վերաքննիչ էին և իրենց քննության եզրակացությունը հաղորդում էին անմիջապես կաթուղիկոսին: Կաթուղիկոսի և նվիրակի միջև եղած թղթակցությունն անպակաս է. նվիրակը յուր ամեն մի քայլի համար պետք է տեղեկություն տա թղթով կաթուղիկոսին:

Յուրաքանչյուր նվիրապետական շրջան ունի յուր գանձարանը, ուր հավաքվում են Մայր Աթոռի անունով ժողովված բոլոր նվերները, թե՛ դրամական և թե՛ այլ տեսակի իրեր: Գանձարաններն ունեն իրենց գանձապետները կամ գանձապահները, որոնք նշանակվում են կաթուղիկոսից անմիջապես կամ նվիրակի միջնորդությամբ՝ տեղացի հայտնի անձերից: Այսպես՝ նվիրակը յուր ժողովված արդյունքները, որ լինում էին փող, երկաթեղեն, ցորեն, գարի, զանազան թանկագին քարեր ու մետաղներ, կենդանիներ՝ ոչխար, ձի, էշ այն հանձնում է գանձապետին, որը և փոխադրում է Էջմիածին, կամ վերադարձին նվիրակը ինքը յուր հետ տանում է Մայր Աթոռ հավաքած նվերները: Նվիրակը լինելով կաթուղիկոսի ներկայացուցիչը՝ շատ անգամ յուր վկայությունն է հայտնում մի ինչ-որ վարդապետի եպիսկոպոս ձեռնադրելու արժանավորության կամ ապիկարության մասին: Նվիրակության միջոցին եպիսկոպոս նվիրակը յուր սպասավոր սարկավագին վարդապետ է ձեռնադրում ժողովրդի բազմության առաջ, որպեսզի այսպիսի հանդեսներից զուրկ չմնա ժողովուրդը: Բացի դրանից՝ նվիրակներն իրենց շրջաններում, թափառական լինելով, ձեռնարկում են զանազան բարեգործությունների: Նրանք օծում են եկեղեցիներ, շատ անգամ դպրոց են հիմնում և դասախոսություններ կարդում, գրել-կարդալ սովորեցնում ժողովրդի տգետ պատանիներին: Նրանք բարեպաշտ ժողովրդի առաջն ընկած ուխտավորական խմբեր են բերում դեպի ս. Էջմիածին: Եվ այդ ուխտագնացությունը շատ հանդիսավոր էր: «Հնումը ս. Իշման տեղը ս. Էջմիածնում այն նշանակությունն ուներ, ինչպես Երուսաղեմի ս. Հարության տաճարում Փրկչի գերեզմանը և հայոց Հակոբյանց վանքում՝ Գլխադիրը: Նվիրակների առաջնորդությամբ ուխտավորները հեռավոր տեղերից ս. Հռիփսիմյանց տոներին ս. Էջմիածին ուխտ գալով, եկեղեցական թափորով առաջնորդվում էին դեպի տաճարը: Փակ դռան առաջ քաղվում էր «Խոստովան եղերուք» սաղմոսը մինչև «Բացէք» տունը. ապա եկեղեցու դուռը բացվում էր. «Զողորմութեանց քոց դուռն» շարականը երգելով՝ մտնում էին տաճար: Ս. Իշման սեղանի առաջ երգվում էր «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը: Հանդիսադիրը, որ լինում էր նվիրակը, քաղում էր փոխ առ փոխ «Ուրախ եղէ ես ոյք ասէին՝ ի տուն Տեառն երթիցուք» սաղմոսը. սարկավագը քարոզում էր «Սուրբ եկեղեցեաս». հանդիսադիրն ասում էր «Ի մէջ տաճարիս» աղոթքը և երկրպագում ս. Սեղանին համբուրելով խաչն ու Ավետարանը. ապա «Պահպանիչ»-ով օրհնում էր ուխտավորներին, որից հետո սկսվում էր նրանց ուխտադրությունը: Նվիրակության դադարելով—ասում է Հուսիկ եպիսկոպոս Մովսիսյան—հետզհետե վերջացավ ուխտավորների խմբովին ս. Էջմիածին գալն էլ, և ուխտավորների տաճար մտնելու այս արարողությունն

էլ դադարած պետք է համարել ԺԹ դարի սկզբից»[5]:

Այսպես տանջանքների, դժվարությունների ենթարկվելով և ժողովրդի մեջ եռանդուն գործելով, բնական է, որ ժողովուրդը պետք է հարգեր, սիրեր Էջմիածնի նվիրակներին և բերկրությամբ ընդուներ նրանց: Նվիրակներն այնպիսի տպավորություն են թողել ժողովրդի վրա, որ նրանց անձը բանաստեղծության, սքանչելի զրույցների նյութ է դարձրել: Նվիրակների թողած տպավորության մասին գաղափար կազմելու համար մեջբերենք ԺԷ դարու սկզբին գրված մի բանաստեղծություն, որ գրել է Հովհաննես անունով մի քահանա[6]:

ԺԷ դարու սկզբին հոռոմեացոց աշխարհն՝ Բյուզանդիոն են գնում ս. Էջմիածնի 3 նվիրակներ՝ Հովհաննես եպիսկոպոս, Սարգիս եպիսկոպոս և Դավիթ աբեղա, որոնք իրենց գործունեությամբ սեր և հարգանք են առաջ բերում ժողովրդի մեջ դեպի իրենց և նույնիսկ նահատակվում են գործի համար, որով և մեծ տպավորություն թողնում ժողովրդի վրա: Բանաստեղծությունը պատմողական ձև ունի և սկսվում է այսպես.

«Ինքն հարիւր Հայոց թուական,
Յիսուն և հինգ թիւ ալեալեան,
Էջմիածնէն նուիրակք եկան,
Բոլոր աշխարհս Հոռոմոց տան:
Յոլով մեռոն կայ ընդ ինքեան,
Մեծ նամակով և օրհնութեամբ,
Եկեալ հասին Բիւզանդիան,
Որ է Ստամպօլ՝ սրբոց կայան»:

Նրանց, ովքեր տեսնում են, իբրև հրեշտակ են ընդունում, ցնծում-զվարճանում են, վանքերն ու անապատներն իսկ ուրախանում են, երբ տեսնում են Էջմիածնից եկած «սրբոց նման» նվիրակներին: Նվիրակները կարդում են իրենց հետ բերած կաթուղիկոսի օրհնության թուղթը, և ժողովուրդը բերկրում է, նրանց անունը տարածվում ամենուրեք:

«Անուանք նոցա համբաւեցան
Սուրբ օրհնութիւնք, որ կարդացուան,
Եկեղեցիք բերկրեալք ցնծան,
Եւ ժողովուրդս, որ օրհնեցան»:

Ամբողջ Կ. Պոլիս քաղաքը նվիրակում են և ապա նավում՝ դեպի Կաֆա քաղաքը, ուր «Կաֆայեցիք խիստ ցնծացան, իբր զառաքեալսն տէրունականն»: Նվիրակները շարունակում են շրջել, մտնում են «Ղարապօղտան», «Սէչով» քաղաքը, «Իլով». այդ բոլոր տեղերում ցնծությամբ ընդունում են և հանապարհ դնում: Նրանք գալիս են «Աղքերման» և ապա դառնում են Կ. Պոլիս.

«Հիւրեր եկին մեզ աննրման,
Զինչ ըզհրեշտակք Աբրահամեան,
Ոնց Ստամպօլցիք զնոսա տեսան,
Տեառն Աստուծոյ շատ գոհացան»:

Այնուհետև նվիրակները դավադրության զոհ են գնում և փաշայից գլխատման դատապարտվում.

«Յովհաննու պէս գլխատեցան
Կամ Յակոբու առաքելեան,
Որ է մարմինն ի ըսպանման,
Զաւուրս երրորդ անթաղ մընան:
Սրբոց մարմինքը, որ հոն կեցան,
Ոչ յերեսներն թարշամեցան,
Լոյսն էր իջեալ աստղանման,
Զայն լոյս տեսքով շատ մըսըլման»:

Հետո հայերը գնում են, Վեզիր Ալի փաշայից խնդրում, որ թույլատրի սրբերի մարմինը թաղելու մեր եկեղեցական ծեսով. ստանում են թույլտվություն, ու կատարվում է հուղարկավորության մեծ հանդես. թաղման հանդեսին ներկա են և լալկան կանայք, եղերամայրեր:

«Կանայք բազում ժողովեցան,
Լալկաններ ողբերգական,
Շատ լացուցին զամենեսեան,
Մինչ սար ու ձոր ի լաց եղան»:

Երեք նահատակ նվիրակների աճյունները մի դամբարանի մեջ ամփոփում են:

Մովսես Գ Խոտանանցի կամ Տաթևացի կաթուղիկոսը (1629—1632) վարդապետական գավազան է տալիս Փիլիպպոսին (հետո կաթուղիկոս) և եպիսկոպոս ձեռնադրելով ուղարկում է նվիրակության «Յունաց աշխարհը»: Նա յուր առաքինի վարք ու բարքով և յուր գործի հմտությամբ մեծ տպավորություն է թողնում ժողովրդի վրա, որով և նրա նկատմամբ կազմվում է հետևյալ զրույցը, որ լսել է Զաքարիա սարկավագը Կարինում:

Փիլիպպոսի նվիրակության ժամանակ Կարինում գտնվում էր Մինաս անունով մի վարդապետ, որ երաժշտության մեջ հմուտ էր, սակայն խիստ գոռոզ, հանդուգն, ինք-

[5] «Տարազ», № 30, 1904 թ., Հուսիկ եպիսկոպոսի հոդվածից:

[6] Ոտանավորը տպված է «Հայոց նոր վկաները» գրքում, հատոր Բ, էջ 17. կազմեցին Մանանդյան Հակոբ և Աճառյան Հրաչյա, նաև Կ. Կոստանյանի «Նոր ժողովածու», Ա պրակ, Միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ, էջ 31:

նահավան և բնավ չէր խոնարհվում ոչ ոքի առաջ: Մի օր երեկոյան ժամասացությունն է կատարում, ներկա է և նվիրակը, որը նկատում է Մինաս վարդապետի սխալը, զգուշացնում է նրան, սակայն նա յուրն է անում և դուրս գալիս եկեղեցուց: Ժամասացության վերջում նվիրակը մի պատշաճին քարոզ է խոսում և ակնարկում Մինաս վարդապետի տգիտությունը եկեղեցական խորհուրդների մեջ և նրա քմահաճորեն վարվելը: Մինասը լսում է դուռն մոտից այդ և նախանձով լցված գնում է իշխանի մոտ և Փիլիպպոսին չարախոսում, զրպարտում է ասելով. «Պարսից աշխարհից մի աբեղա է եկել այստեղ ու մեր երկրից շատ դրամ է հավաքել պարսիկներին տալու, որ գան ավերեն մեր աշխարհը. բացի դրանից անիծում և հայհոյում է ձեր ազգությունը. թե Օսմանին, թե Օմարին նզովում է»: Զայրանում է փաշան, ուղարկում է 3 ենիչարի գինվոր, որ քարշ տալով բերեն նվիրակին: Ենիչարիները գալիս են, տեսնում Փիլիպպոսին շրջապատված քաղաքացիներով. հայտնում են փաշայի հրամանը. նա առնում է 2 մոմ՝ պահելով փիլոնի տակ գնում է, նրա հետ և բազմությունը. նվիրակը ներս է մտնում, գլուխ տալիս փաշային. սա հայտնում է Մինասի ասածները: Փիլիպպոսը, որ դժվարանում էր տաճկերեն խոսել, թարգմանի բերանով ասում է, որ ինքը յուղավաճառ է և այդ միջոցով է փող հավաքել, իսկ Մինաս վարդապետի հաղորդածը՝ զրպարտություն միանգամայն. ապա փիլոնի տակից հանում-տալիս է փաշային 2 մոմը, որոնք փաշայի ձեռքին կպչում են ու վառվել սկսում «սուրբ հոգու շնորհիս»: Փաշան այդ հրաշքի վրա սոսկում է և վարդապետին ազատ արձակում. սակայն իսկույն հետ է կանչում՝ երբ շրջապատողներից իմանում է, որ նա սուրբ մարդ է և շատ հրաշքներ է գործում: Փաշան ասում է, որ երաշտ ժամանակ է, բոլոր երկիրը չորացել է, եթե կարող է, թող անձրև թափե: Վարդապետը պատասխանում է. «Ողորմութիւնն Աստուծոյ բազում է, բայց տաճիկք ոչ թողուն զմեզ աղօթել ըստ օրինաց մերոց»: Փաշան ապահովում է նրա աղոթքի ազատությունը: Փիլիպպոսը մտնում է «Միաբանից Աստուածածին» եկեղեցին. հրամայում է բոլոր եկեղեցականներին զգեստավորվել, ինքն էլ պատարագի զգեստներն է հագնում,—առնում է վրան եմիփորոնը, թագը դնում գլխին և ձեռն առնում խաչը. Ավետարանով, խաչով, ծնծղայով, զանգակների հնչմամբ դուրս են գալիս եկեղեցուց ու սկսում շարական ասելով շրջել քաղաքում: Դուրս են գալիս քաղաքի հյուսիսային կողմը, որ ասվում է «Սուրբ Նշանի բլուր»: Երբ երգում են՝ երկինքն սկսում է ամպել. հենց որ հասնում են սահմանված տեղը, «սկսում է ցօղել». երբ կարդում են Ավետարանը՝ 3 անգամ ամպը գոռում է. երբ թափորն սկսում են, երկինքը բացվում է և հորդ անձրև թափվում. թափորի ավարտմամբ՝ արդեն դաշտը ծով է դառնում: Այս երկու հրաշքները տեսնելով փաշան բռնում է չարախոս Մինաս վարդապետին և տուգանքի ենթարկում, որ մյուս անգամ զրպարտությունից հեռու մնա[7]:

Թե՛ վերոհիշյալ բանաստեղծությունը, թե՛ այս զրույցը, գալիս են ապացուցելու, թե նվիրակներն ինչ սիրելի և օգտավետ գործիչներ էին մեր հավատացյալ ժողովրդի համար:

Սակայն մեր բոլոր նվիրակներն էլ հիանալի, օրինակելի անձնավորություններ չեն եղել, նրանց մեջ ևս պատահել են ապիկար հոգևորականներ, որոնք «նուիրակ» նվիրական անվան տակ գործել՝ են շատ անհեթեթություններ, այդ անունով շահագործել են ժողովուրդը և բազմաթիվ զեղծումներ գործելով իրենց անձնական շահն են ի նկատի ունեցել: Դրանք, սակայն, չեն կարող, հարկավ, նսեմացնել «նուիրակությեան» պատվական նշանակությունը:

Մեր մեջ գլխավորապես ավելի ապիկար նվիրակներ հանդես են գալիս Մելքիսեթ կաթուղիկոսի ժամանակ. այն Մելքիսեթի, որ անձնական շահի համար տխրահռչակ Նիկոլ Թորոսովիչին եպիսկոպոս ձեռնադրեց ու լեհահայոց վրա առաջնորդ կարգեց, որն և եղավ պատճառ հայերի դավանափոխության ու կորստյան: Մելքիսեթի ժամանակ ս. Էջմիածինը վատ դրության էր հասել. զարդերն, անոթները վաճառված էին կամ պարսիկ խաների մոտ գրավ դրված. եկեղեցականներն իրենց կոչման հակառակ ամեն գործի մեջ մտնում էին ու ձեռնարկում. գավառներումն էլ դրությունը նույնն էր: Սակայն համատարած թշվառության խավարի մեջ մեկ-մեկ ճրագներ էին պլպլում: Վասպուրականում, օրինակ, դեռ իրենց կոչման վրա բարձր կանգնած հոգևորականներ կային, որոնք ժողովրդի ներկայացուցիչների հետ միասին մի մեղադրական թուղթ են ուղարկում Մելքիսեթին: Ի միջի այլ մեղադրական կետերի հիշված է և հետևյալը. «...Եւ երկրորդ անկարգութիւն այն է, որ թէ յինչ երկիր, որ նուիրակ յուղարկես՝ նա կու ընտրես՝ յոր տեղ, որ չար և լիրբ, անզգամ, անամօթ և ամբարտաւան

[7] Այս զրույցը պատմում է Զաքարիա սարկավագին հիշյալ Մինաս վարդապետի աշակերտ Կարնեցի Հովհան վարդապետը: Զաքարիա սարկավագ, հատոր Բ, Վաղարշապատ, 1870 թ., էջ 29:

մի կայ, որ ոչ յԱստուծոյ երկնչի և ոչ ի մարդկանց ամաչէ, զայնպիսիքն կու առաքեա, որ զարդարեալ երիվարօք և պճնեալ հանդերձիւք և կրկին պաշտօնէիւք գան և գոռոզաբար խրոխտան, և բազում ցոփութեամբ և անկարգութեամբ և արբեցողութեամբ զաշխարհս վրդովեն:

... Գրոց ամենևին անտեղեակ են և օրինեաց բնաւին անծանօթ, և բոլորովիմբ ոչ ճանաչեն զհաւատս քրիստոնէութեան, թէ զինչ է: ... Զարդարն և զանմեղն դատապարտեն վասն ընչից, և զանիրաւն իրաւացուցանեն վասն կաշառաց, և ազգապղծութեան հրաման տան վասն արծաթոյ: ...Գիտեմք թէ սոքա ի՞նչ կու հաստատանեն ի ս. Աթոռդ ի ձեռս Վեհիդ, զի վասն ագահութեան իւրեանց շրջին և ոչ վասն օգտի սուրբ Տանդ, զի զինչ որ ժողովեն, ի գինս այնպիսի երևելի հանդերձի տան, որ ոչ վայել է քրիստոնէի և ոչ իշխանի, թող թէ կարգաւորի... Շրջին իբրև զբռնաւորս և պճնին, և ի կերակուրս և յըմպելիս ծախեն զժողովեալսն իւրեանց, յոլով կաշառս տան բռնաւորաց և բազում տուգանս այլազգաց վասն հակառակաւէր բարուց իւրեանց, վասն որոյ ազգս Հայոց տաղտկացեալ է ի գարշահոտութենէ վարուցն այսպիսեացս»[5]:

Այդ ընդհանուր տեսությունից հետո, տեսնենք, յուրաքանչյուր կաթուղիկոսի գործունեությունը նվիրակության ասպարեզում առանձին-առանձին:

(Շարունակելի)

---

[5] **Լեո**, Հայկակ. տպագր., հատ. Ա, էջ 144—146: Այս մասին տես նաև **Առաքել պատմագիր**, գլ. ԻԹ, նաև **Լեո**, Հայկ. տպ., Բ տիպ, էջ 82:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՅԱՅԱՆ

ԽԱՉԻ ԶԱՐԴԱՄՈՏԻՎՆԵՐԸ ԿԱՊԱԴՈՎԿԱՀԱՅ ԳՈՐԳԱՐՎԵՍՏՈՒՄ (13—15-ՐԴ ԴԴ.)

Կապադովկիան հայաշատ շրջան է եղել հնուց ի վեր: Այդ իսկ պատճառով հունական աղբյուրներում՝ ἡ μικρὰ Ἀρμενία[1], հռոմեականում՝ Armenia Minor[2], բյուզանդականում՝ Thema Armeniacon—Հայկական բանակաթեմ[3], իսկ հայկական աղբյուրներում ՓՈՔՐ ՀԱՅՔ է անվանվել իր Առաջին և Երկրորդ Հայքերով[4]:

11-րդ դ. Վասպուրականից Արծրունիների, ապա Անիից և Կարսից Բագրատունիների զանգվածային բռնագաղթերով հայերն առավել ևս շատացան պատմա-աշխարհագրական լայն տարածքով Կապադովկիայում: Հետևաբար, սելջուկյան ներխուժումից առաջ, նրանց տիրապետության շրջանում (1074—1307 թթ.) և նրանց իշխանության քայքայումից հետո տվյալ տերիտորիայում թե՛ գերակշռող ազգաբնակչությամբ և թե՛ աշխատանքային ձեռներեցությամբ երկրի բազմաճյուղ արհեստների, արվեստների և ներքին ու արտաքին առևտրի բնագավառներում հայերն ունեցել են զգալի մասնակցություն և մեծ դեր խաղացել դրանց հետագա զարգացման գործում: Տեղում հայերը զարգացրին նաև ինքնատիպ մի գորգարվեստ, որը հայ մշակույթի անբաժան մասն է կազմում, բայց անտեսված է մինչև օրս: Կոնիայում, Սեբաստիայում, Կեսարիայում և այլ շրջաններում հայերի կողմից պատրաստված բարձրարվեստ գորգերի մասին ականատեսի հանգամանքով հիշատակում են 13-րդ դ. եվրոպացի ճանապարհորդ Մարկո Պոլոն[5] և ուրիշներ: Մասնագիտական գրականության մեջ 13—15-րդ դդ. վերագրվող այդ գորգերից որոշ թվով հայտնաբերվել են Կոնիայի և Բելշեհիրի մզկիթներում, ինչպես նաև Ֆուստատի (հին Գահիրե) պեղումներից: Բայց կապադովկահայ այդ գորգերը վերագրում են սելջուկ-թուրքերին և եվրոպական թանգարաններում դասակարգում իսլամական արվեստի բաժնում[6]:

Վերոհիշյալ գորգերի պատմա-համեմատական ուսումնասիրությունը բացահայտում է, որ նրանց հորինվածքը, զարդամոտիվների արտաքին ձևն ու բովանդակությունը, ինչպես նաև նախշերի տեղադրության իմաստավորումը սերտ առնչություն ունեն հայկական ոճով և հայ վարպետ-արհեստավորների ձեռքով շինված սելջուկյան աշխարհիկ ու հոգևոր բնույթի բազմաթիվ

---

[1] **Պրոկոպիոս Կեսարացի**, Պատերազմների մասին, թարգմ. Հ. Բարթիկյան, Երևան, 1970, էջ 22, 44, 95, 193, 299:

[2] **Полибий**, Всеобщая история, 1895: **Նաև Марк Туллий**, Речи в двух томах, 1962, I, § 14:

[3] **Կոստանդին Միրանածին**, Բանակաթեմերի մասին, թարգմ. Հ. Բարթիկյան, Երևան, 1970, էջ 167: Նաև **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.

[4] **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 96 և 117: Նաև **Ս. Երեմյան**, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1968, էջ 100:

[5] **Марко Поло**, Путешествие, Ленинград, 1940, стр. 17.

[6] **Oktay Aslanapa ve Yusuf Durul**, Selçuklu halıları, Istanbul, 1973. **Նաև Kürt Erdman**, Oriental carpets, Tübingen (Germany), 1960, p. 17.

կառույցների հետ[7]: Դրանց համար որպես նախօրինակ ծառայել են պատմական Հայաստանի ավելի վաղ շրջանի շինարարական ավանդույթները, վարպետությունն ու ոճերը[8]: Հետևաբար, այդ գորգերի զարդաձևերում, որոնք նախորդում են սելջուկյան ներխուժմանը: Վերոհիշյալ գորգերի զարդամոտիվների արտաքին ձևերը, գաղափարական բովանդակությունն ու նրանց տեղադրման իմաստավորումը բացահայտում



Նկ. 1.

ձևերի բնօրինակներին հանդիպում ենք վաղ միջնադարյան հայկական ճարտարապետական զարդաքանդակներում, խաչքարային արվեստում, հայկական մագաղաթյա ձեռագրերի մանրանկարչության և կիրառական այլ արվեստների բուսական, կենդանական և երկրաչափական զարդաձևերի բնօրինակներն հանդիպում ենք նրանց հայկական բովանդակությունը և հայկական ձեռարվեստի ստեղծագործություններ լինելը:

Սելջուկյան անվանված կապադովկահայ այդ գորգերի էական հատկանիշներից մեկն էլ այն է, որ դրանց մեջ հաճախակի են օգտագործված բազմատեսակ ոճավորված բազմաթիվ ԽԱՉԱՋԱՐԴԵՐ (տես գորգանկարներն ու գծանկարները): Չկա մի գորգ, որի վրա օգտագործված չլինի ԽԱՉԸ: Ճիշտ է, խաչանիշը միայն քրիստոնեության սեփականությունը չի եղել, և

[7] A. Saladin, Manuel d'Art Musulman: L'Architecture, Paris, 1907, t. 2, p. 456.

[8] N. F. Lynch, Armenia, vol. 2, 1901, London, page 289.

հնուց ի վեր այն իմաստավորել է բնության չորս ուժերը, բայց քրիստոնեությունը հեթանոսական բազմաթիվ սովորույթների հետ մեկտեղ յուրացրեց նաև խաչանիշը: Այն սրբագործեց և իմաստավորեց Քրիստոսի խաչելության խորհրդով: Նոր բովանդակություն հաղորդեց նրա ձևին և խաչը դարձրեց իր խորհրդանիշը: Ողջ միջնադարը հագեցված է քրիստոնեական գաղափարախոսությամբ, որի աչքի ընկնող կենտրոններից էր հայաշատ Կապադովկիան:

Շրջափակված օտար տարրերով և ենթակա քոչվորական հորդաների հանախակի արշավանքներին, ճնշմանն ու թալանին, իր ազգային գոյությունը շարունակելու համար որպես պայքարի միջոց անպաշտպան հայն ապավինեց խաչին՝ գոյության կռվում որպես նեցուկի: Ինչպես քրիստոնեությունը, այնպես էլ նրա սիմվոլիկ արտահայտությունը հանդիսացող խաչը հայը խորապես ազգայնացրեց՝ նրան հաղորդելով ազգային նոր ձև և նոր բովանդակություն:

Օտարության մեջ թե հայրենիքում, իր



Նկ. 2.

անձնական թե հավաքական կյանքում, բազմապիսի դժվարությունների և արհավիրքների դեպքում հայը, որպես գոյության և ինքնապաշտպանության միջոց, հավատաց խաչի աստվածային գերհզորությանը, նրանով ամրապնդեց ու համախմբեց իր ազգային ֆիզիկական ու հոգեկան ուժերը՝ կյանքի անհավասար պայքարում:

Միջնադարում ազգային պետականությունը կորցրած և հանախ իսլամի տիրապետության տակ բռնի հպատակեցված հայ ազգաբնակչության համար խաչանիշի հանախակի օգտագործումը միաժամանակ տիրապետողից տարբերվելու գործնական նպատակ է ունեցել և այն դրոշմել է իր



Նկ. 3.

ստեղծագործություններում: Ավելին՝ հայ եկեղեցին ունի խաչաձև հատակագիծ: Հայ շինականն իր դաշտերի բարիքը հանդիսացող ցորենից խաչքուռ է կազմում: Հայ մամիկն իր ամենօրյա հացը թխելիս խմորի վրա խաչանիշ է անում: Հայն իր որդիների ամուսնությունը նվիրագործում է խաչանիշով՝ որպես սերունդների ժառանգության և հավերժության նշան: Խաչ է քանդակում եկեղեցիների պատերի և պատմական այլ հուշարձանների վրա: Խաչքարային բազմաբովանդակ ստեղծագործություններ է կերտում որպես ազգային յուրահատուկ արվեստ: Փայտի, մետաղի և հախճապակու մշակման ժամանակ խաչանիշն է օգտագործում որպես զարդամոտիվ: Եկեղեցական անոթների և այլ առարկաների վրա խաչանիշ է դրոշմում: Քրիստոնեացած խաչին բազմաչարչար հայ ժողովուրդը նույնիսկ տվեց ազգային յուրահատուկ նկարագիր՝ հավատակից այլ ժողովուրդներից ևս տարբերվելու, չձուլվելու նպատակով: Իր ողջ պատմական կյանքի ընթացքում հայ ժողովուրդը ձգտել է ամեն կերպ պահպանել իր ազգային ինքնությունը, առանց սակայն այլամերժ լինելու:

Հայ ժողովրդի համար խաչը չի խորհրդանշել միայն չարչարանքներ, այլ միաժամանակ նրա մեջ տեսել է ապագայում հարության, հույսի և ազգային վերածննդյան գաղափարի անխորտակ հավատքն ու գոյատևելու համառ պայքարի վճռականությունը: Այս պայմաններում հայն իր դրոշմած, քանդակած և գործած խաչանիշին տալիս է ազգային յուրահատուկ իմաստավորում. հետևաբար ազգային բովանդակություն է հաղորդում նրան և լայնորեն կիրառում իր կենցաղում:

Հայ ազգային բնորոշ սիմվոլիկ այս մտածողությունն իր լայն արտահայտությունն է գտել ազգային զարդարվեստում և կիրառական արվեստի բոլոր բնագավառներում, տվյալ դեպքում հատկապես գորգարվեստում: Գորգն իր ամբողջական հորինվածքով, զարդաձևերի ընտրությամբ և նրանց տեղադրության իմաստավորումով, ինչպես նաև գույների ընտրությամբ և հարստությամբ իր ժամանակի և միջավայրի գեղարվեստական մտածողության, պատկերացման ու ճաշակի մարմնավորումն է. հետևաբար, գաղափարական ասպեկտները սինթեզվում են կոնկրետ ոճական և արտահայտչական ձևերի մեջ:

Որպես հայկական գորգերի ամենակարևոր հատկանիշներից մեկը ստիլոուբանայ բանասեր Ա. Սագզյանը նշում է. «...այդ գորգերի վրա գոյությունն է որոշապես գծված խաչերի զոր ի զուր փնտրելու ենք պարսկական գորգերի վրա և որոնց շատ քիչ ենք հանդիպում կովկասյան այն գորգերի վրա, որոնք հայկական շրջաններից չեն»[9]: Կապադովկահայ գորգերում խաչանիշների բազմազանությունն օրինաչափորեն արդյունքն է գեղարվեստական տարբեր մտածողության և հնարքների: Հայը պատմության տարբեր ժամանակներում և միջավայրերում իր քաղաքական տերերի համար, ինչպես և առևտրական նպատակով ստիպված է եղել գործել բազմաթիվ գորգեր: Բայց գործել է իր գիտեցած ձևով՝ ազգային ոճով և զարդարվեստի ավանդույթներով, անշուշտ հաշվի է առել նաև տիրապետողի և պատվիրատուի ճաշակն ու ցանկությունները: Այժմ սելջուկյան ան-

[9] A. Sakisian, Pages d'Art Arménien, Paris, 1940, page 27. Նաև Հ. Քյուրդյան, *Գորգը Հայոց մոտ, Վենետիկ, 1947։*

վանված կապադովկահայ այդ գորգերում խաչազարդերի տիրապետող առկայությունն ինքնին մատնում է իր իսկական տերերին:

Կապադովկյան այդ գորգերում ֆանատիկ իսլամ տիրապետողների զայրույթից խուսափելու համար հայը հաճախ ոճավորել և անճանաչելի դարձնելու չափ ձևափոխել է խաչը, նույնիսկ հաճախ համադրել է այլ զարդաձևերի հետ. բայց ուշադիր դիտողը կտեսնի էական զարդաձևը՝ խաչանիշը: Սելջուկյան կոչված բոլոր գորգերն էլ, առավել թե պակաս չափով, իրենց զարդաձևերում անպայման ունեն խաչ: Բայց առհասարակ զարդարվեստում և տվյալ դեպքում կապադովկահայ գորգարվեստի ազգային նկարագիրը չի բացահայտվում միայն տարբեր ձևերի բազմաթիվ խաչազարդերի հաճախակի օգտագործումով, այլ ամենակարևորն այն է, որ նրանք իմաստավորվում և ազգային յուրահատուկ բովանդակություն են ստանում իրենց օգտագործման տեղով և նրանց հատկացված դերով: Դժվար թե իսլամ արհեստավորը, մոռացության տալով իր բուռն ատելությունը, խաչին հատկացներ այնքան կարևոր տեղ...:

Սելջուկյան անվանված կապադովկահայ այդ գորգերի արտաքին ու ներքին գոտեզրերում խաչազարդերի շարանը հաճախ է օգտագործված որպես պահպանիչ: Նրանց դեր է վերապահված գորգը՝ հայի տունը, պահպանել դժբախտ պատահարներից ու չար աչքերից (գծանկարներ՝ 1, 2, 3, 4, 6, 7, 8, 10):

Կենտրոնական գորգադաշտում տեղադրված բուսական, կենդանական և երկրաչափական հարաբերություններով հարստացած խաչանիշ զարդամոտիվները ներկայացնում են մեկ-մեկ կենաց ծառեր: Դրանք իմաստավորված են կյանքի հավերժության և անմահության գաղափարով (գծանկարներ՝ 21, 22, 23, 24):

Ոճավորված եռագնդաձև զարդամոտիվները և վարսանդապտղային գծայնացված զարդաձևերը նվիրագործված են խաչանիշերով (գծանկարներ՝ 14, 15, 16, 17): Թեվատարած արծիվ հիշեցնող ոճավորված քառանկյունը կամ ութանկյունը զարդարված է կովկասյան կեռազարդերով. իսկ վրան էլ դրոշմված է սովորական խաչանիշը կամ կեռ խաչը, մի դեպքում պոչին (գծանկար 18), այլ պարագային՝ կրծքին կամ կոնակին (գծանկարներ՝ 19 և 20): Տարբեր տիպի խաչեր են պատկերում գծանկարներ 5, 9, 11, 12 և 13-ը:

Ոճավորված վիշապը ամենահատկանշական զարդամոտիվն է սելջուկյան անվանված կապադովկահայ գորգարվեստում, որը հետագայում շարունակվել է ոչ միայն կովկասյան-հայկական վիշապագորգերում, այլև 16—18-րդ դարերի անատոլյան ընդհանուր անվան տակ ծանոթ հայկական գորգերում: Հաճախ հեթանոսական վիշապազարդը, իր վրա ընդունելով խաչանիշը, քրիստոնեական բովանդակություն է ստացել: Արևմտյան որոշ հեղինակներ, գծայնացված վիշապները նմանեցնելով արաբական քյուֆի գրաձևին, զարդամոտիվները անհիմն կերպով վերագրում են սելջուկներին և գորգերն էլ դասակարգում իսլամական արվեստի բաժնում:



Նկ. 4.

Վերոհիշյալ գորգերում հաճախ նկատվում է բուսական և կենդանական զարդաձևերի համադրում և դեպի երկրաչափական ղեկորատիվ զարդամոտիվի անցում (գծանկար 25): Կենտրոնում բարձրանում է ոճավորված կենաց ծառը: Նրա երկու կողմերում դեմ-հանդիման կանգնած են գծայնացված վիշապներ: Բայց հետագայում քրիստոնեությունը կենաց ծառը սրբագոր-

ծել է իր խաչանիշով՝ այն դրոշմելով նրա բնին: Հետևաբար, այս մեկ զարդամոտիվում հեթանոսական և քրիստոնեական ստածողությունները համադրվել են՝ արտահայտելով նույն գաղափարը: Նման միտքն առավել գծայնացված-դրսևորված ենք տեսնում մի այլ զարդամոտիվում (գծանկար 27): Այստեղ դեմ-դիմաց կանգնած երկու վիշապներից ծնված և դեպի վեր սիտող վիշապների միախառնումը ավարտվում է խաչանիշով: Հետագայում գծանկար 25-ը լրիվ երկրաչափական զարդաձևի վերածված օգտագործվում է անատոլյան ընդհանուր անունով ծանոթ 15—16-րդ դարերի հայկական գորգերում (գծանկար 28): Դեմ-դիմաց վիշապների միջև տեղակայված է նույնպես ոճավորված ձուն, որը խորհրդանշում է կյանքի սաղմը և հավերժությունը: Հետագայում այն նվիրագործված է խաչանիշով. իսկ վերևում նրան հսկում և հովանավորում է ութանկյուն խաչանիշը (գծանկար 26):



Նկ. 5.

Իսլամական սուրբ գիրքը՝ Ղուրանը, իր հավատացյալներին խստորեն արգելում է մարդ կամ կենդանի էակ նկարելը[10]: Գծանկար 29-ը պատկերում է մի թռչուն-վիշապ: Նրա կովկասյան կեռազարդերով ոճավորված թևերը սկիզբ են առնում կենդանու կոնակին դրոշմված հայկական Տ գրաձևի հեթանոսական զարդաձևից, որը խորհրդանշում է վիշապը: Միաժամանակ կենդանու մարմինը զարդարված է խաչանիշերի շարանով: Բայց առավել ուշագրավ է այն, որ կենդանին գլխին կատարի փոխարեն կրում է խաչանիշ, մի հանգամանք, որը նշում է կենդանու մատաղացու լինելը: Տվյալ զարդամոտիվի շարանով զարդարված գորգը հավանաբար պատրաստված է եղել եկեղեցում օգտագործելու նպատակով, բայց հետագայում, ինչ-ինչ պայմանների բերումով, հայտնաբերվել է Կոնիայի մզկիթներից մեկում (գծանկար 29):

Խաչանիշը, գծայնացված այլ զարդաձևերի հետ համադրված, առաջացրել է բարդ երկրաչափական զարդաձևեր: Նրանց հորինվածքում ևս գերակշռում են խաչաձարդերը, որոնք իմաստավորում են այդ զարդամոտիվները (գծանկար 30, 31, 32):

Վիշապագորգերի աստիճանական զարգացման մի ճյուղը մեզ առաջնորդում է դեպի խորանագորգ: Դրա փոխանցման լավագույն օրինակներից է գծանկար 33-ը: Դեմ-հանդիման կանգնած երկու վիշապներից բարձրացող երկու այլ փոքր վիշապների միախառնումից առաջանում է ոճավորված մի կիսաշրջանակ: Որոշ հեղինակներ բռնազբոսիկորեն դա նմանեցնել են փորձում իսլամական մահիկի, անտեսելով տվյալ զարդամոտիվի հորինվածքն ու էությունը: Ավելին՝ վերևից առկախ է հավատքի, լավագույն ապագայի հույսի կանթեղը, իր կողքերից առկախ երկու այլ փոքր կանթեղներով, որոնց վրա ևս դրոշմված են խաչեր: Ներքևում տեղադրված է մի մեծ խաչաձարդ, իսկ նրանից ներքև՝ ութանկյուն աստղաձարդը, որի կենտրոնում դրոշմված է փոքր խաչանիշ:

Նկատի ունենանք, որ խաչը ո՛չ մի երկրում և ո՛չ մի ժամանակ իսլամի համար սիմվոլ չի հանդիսացել: Ոչ միայն սելջուկթուրքերից, այլև իսլամության ծնունդ տվող արաբներից առաջ հայերը գորգեր են գործել, ըստ արաբ պատմիչների վկայության, որոնք որպես կողոպուտ, որպես պետական տուրք կամ հարկ, ինչպես նաև առևտրական նպատակներով ցրվել են աշխարհով մեկ: Այժմ հարց է առաջանում. եթե մաս-

[10] Մարգարեի Սուննա օրինագիրքը և նրա կարծիքների ժողովածուում՝ Հատիսում: Տես՝ **Կ. Պալյան**, Եգիպտոս և արաբական ճարտարապետությունը, 1914, Կահիրե, էջ 192:

նագիտական գրականության մեջ այդ գորգերն ընդունվում են իսլամական, այն էլ «իսլամական աղոթքի գորգեր», ապա ինչո՞վ բացատրել խաչի այնքան բազմազան ու հաճախակի օգտագործումը և նրան հատկացված այնքան կարևոր տեղը: Ավելին՝ ինչպե՞ս հաշտվել այն գաղափարի հետ, որ իսլամ հավատացյալը ամենօրյա իր աղոթքների ժամանակ ծունկի գա խաչի առաջ և երկրպագելու ժամանակ խոնարհի ու իր գլուխը անընդհատ հպի խաչանիշին... այն էլ միջին դարերում, երբ իսլամական մոլեռանդությունն իր գագաթնակետին էր հասել:

Հետաքրքիր է նաև պատմա-լեզվական այն փաստը, որ ԽԱՉ բառը «բնիկ հայերեն բառ է» և հայերենից է փոխառյալ թուրքերեն خاچ haç և ադրբեջաներեն xaч բառը՝ հայ[11] և օտար[12], ինչպես նաև թուրք լեզվաբանների վկայությամբ[13]: Հիշյալ լեզուներում նույն բառարմատից կազմված բազմաթիվ բարդ ու ածանցավոր բառեր կան. դա հետևանքն է երկու ժողովուրդների երկարատև ու փոխադարձ շփման և համատեղ կեցության. օրինակ՝ خاچ ایتمك xač itmek կամ haç çikarmak—խաչ հանել կամ խաչակնքել, خاچلامق xaчламак կամ haçlamak—խաչել, haçlamiş—խաչեցյալ, haçı suya atmak—խաչը ջուրը գցել (հայկական եկեղեցական ջրօրհնեքի արարողությունը): Սակայն առավել հետաքրքրական փաստեր են հայերեն մի շարք բառերի նույնությամբ օգտագործումը թուրքերենում. օրինակ՝ خاچوارس—haçvar—**խաչվար** (խաչաձև) կամ խաչվառ-խաչադրող կամ եկեղեցական դրող[14]: Եվդոկիայի (Թոգատի) շրջանի երբեմնի հայաշատ գյուղերում մինչև օրս օգտագործվում է خاچوك Xačük **«խաչուկ,** գյուղական տների առիքներին խաչաձև դրված գերան», հայերենում նաև **խեչակ:** خاچورکت-Xačürget, Xaчypret-հայերեն **խաչերկաթ** թոնրի բերանին դրված խաչաձև թիթեղը: Գավառական այս բառը, ըստ Ա. Ճառյանի, փոխ են առել Կեսարիայի թուրքերը և հույները, Եվդոկիայի շրջանի թուրքերը և Սղերդի շրջանի արաբները: Հայերեն այս բառն անցել է նաև ռուսերենին кочерга, ուկրաիներենին, լեհերենին, լիթվաներենին և այլ լեզուների: Xaчмар-խաչմար, որը մեղվի կթոցում խաչաձև դրվող փայտն է, իսկ շինարարության բնագավառում хачылыг, որը նշանակում է տան տանիքին գերանի փոխարեն խաչաձև դրվող ձող, նաև хача կամ haча, հայերեն խեչակ, որը երկճղի նեցուկ է նաև բույսերի համար[15]: «Խաչ բառը,—ասում է ակդ. Բ. Առաքելյանը,—որ հայերենից անցել է վրացերենին, ադրբեջաներենին, պարսկերենին, քրդերենին»[16], նաև Կենտրոնական Ասիական ժողովուրդների լեզուներին և աֆղաներենին, որոնք գորգի մի տեսակը խաչանիշ զարդամոտիվի պատճառով անվանում են «խաչլու Յումուտ»[17], «խաչլու Բուխարա»[18], «խաչլու թուրքոման»[19] և «խաչլու աֆղան»[20]: Հնուց ի վեր հայկական կիրառական արվեստների այլ բնագավառներում և հատկապես գորգարվեստում օգտագործված զարդամոտիվների մեջ տիրական տեղ է ունեցել խաչը:

Սելջուկյան անվանված գորգերի զարդամոտիվների հանգամանալից վերլուծությունն ինքնին ընթերցողին հանգեցնում է այն եզրակացության, որ կապադովկյան այդ գորգերը գործվել են միջնադարյան հայկական զարդարվեստի ավանդույթներով և հայ վարպետ-արհեստավորների ձեռքերով:

---

[11] **Հր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, 1973, Երևան, էջ 333:

[12] **Д. А. Магазаник,** Турецко-Русский словарь, Москва, 1945, ст. 225.

[13] **M. Ali Ağakay,** Türkçe sözlük, 1959, Ankara, s. 331.

[14] Հին Հայկազյան բառարան, 1769, Վենետիկ, էջ 242:

[15] **Աճառյան,** Արմատական, հատոր 2, էջ 334:

[16] **Բ. Առաքելյան,** Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., Երևան, 1964, հատոր 1, էջ 162:

[17] **M. Campa na,** Oriental carpets, 1969, Milan p. 136.

[18] **O. Pictus,** Oriental carpets, 1968, Switzerland, pl. XVI.

[19] **H. Haak.** Oriental rugs London, 1960, pl, 35.

[20] **P. Liebetrau,** Oriental rugs in colour, 1970, Denmark, pl. 41.

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1976 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ստորև ամփոփ գծերի մեջ ներկայացնում ենք պատկերն այն կարևոր իրադարձությունների, որոնք տեղի ունեցան Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի կյանքում անցնող տարվա ընթացքում:

1976 թվականի փետրվար ամսին Ֆրիթաուն քաղաքում (Սիեռա-Լեոնե), եղբայրական մթնոլորտում, տեղի ունեցավ աստվածաբանական մի խորհրդակցություն, որին մասնակցեցին Արևմտյան Աֆրիկայի եկեղեցիների ներկայացուցիչները: Այդ խորհրդակցությունում խաղաղության և աֆրիկյան ժողովուրդների զարգացման հեռանկարներին վերաբերող մի շարք հարցերի քննարկումն արժեքավոր ներդրում հանդիսացավ Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի աշխատանքներում: Հանդիպման ընթացքում աֆրիկյան եկեղեցիների կողմից առաջարկություն բերվեց ստեղծելու աֆրիկյան երկրների համար Խաղաղության քրիստոնեական մի կոնֆերանս, որով աշխատանքի նոր հեռանկարներ կարող են բացվել ԽՔԿ-ի առաջ այդ ցամաքամասում: Ամենայն հավանականությամբ առաջիկա տարի հնարավոր կլինի իրականացնել այդ խոստումնալից ծրագիրը:

1976 թվականի ապրիլ ամսին Նյու-Վինդսորում (ԱՄՆ) ԽՔԿ-ի Աշխատանքային կոմիտեի հերթական նստաշրջանն իր ուշադրությունը կենտրոնացրեց զինաթափման այժմեական և հրատապ հարցերի վրա: Աշխատանքային կոմիտեի վերոհիշյալ հանդիպմանը զուգընթաց կազմակերպվեց մի երրորդ հանդիպում ամերիկյան եկեղեցիների և սոցիալիստական երկրների եկեղեցիների պատասխանատու ներկայացուցիչների միջև, որոնք հնարավորություն ունեցան առավել լավ ճանաչելու միմյանց և առավել սերտացնելու իրենց փոխհարաբերությունները:

Նյու-Վինդսորում գումարված Աշխատանքային կոմիտեի նստաշրջանը գոհունակությամբ արձանագրեց ժամանակակից աշխարհում տեղի ունեցած այն մեծ փոփոխությունը, որով հատկանշվում էր պետությունների միջև անբարեհաճության և առճակատման քաղաքականության փոխարինումը խաղաղ համագործակցության քաղաքականությամբ, որպես վճռական գործոն:

Աշխատանքային կոմիտեի երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ 1976 թվականի հոկտեմբերին ԳԴՀ-ում: Այդ հանդիպումն առաջընթաց կարևոր մի քայլ հանդիսացավ քրիստոնեական հավատի և սոցիալական առաջադիմության համար մղվող պայքարի միջև գոյություն ունեցող հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում: Հանդիպման ընթացքում ընդգծվեց, որ խաղաղության համար քրիստոնյաների պայքարն արդյունավետ կլինի այն դեպքում միայն, եթե այն զուգակցված լինի նույն նպատակի համար այլ համոզմունքների տեր մարդկանց մղած պայքարին: Աշխատանքային կոմիտեի սույն հանդիպմանը հաջորդեց եղբայրական մի բանավեճ ԽՔԿ-ի ղեկավարների և ԳԴՀ-ի ավետարանական եկեղեցիների պատասխանատու ներկայացուցիչների միջև, որի ընթացքում երկու կողմերն էլ ընդգծեցին առավել սերտ մի համագործակցության կարևորությունը:

Անցնող տարվա ընթացքում ԽՔԿ-ի գործունեության մեջ պետք է հիշատակել նաև 1976 թվականի հունիսին Սոֆիայում կազմակերպված սեմինարը, որի թեման էր՝ «Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոնֆերանսի նշանակությունը Երրորդ աշխարհի համար»: Այս հանդիպումն առաջ բերեց լայն հետաքրքրություն: Հանդիպման 70 մասնակիցներ, որոնք ժամանել էին աշխարհի բոլոր կողմերից, ըստ ամենայնի գնահատեցին Հելսինկիի կոնֆերանսի ունեցած համաշխարհային կարևոր նշանակությունը, կոնֆերանս, որի արդյունքը հանդիսացավ քաղաքական մի նոր

կլիմայի առաջացումը Եվրոպայում: Սեմինարի աշխատանքներին մեծապես նպաստեցին, իրենց գործոն մասնակցությամբ, Երրորդ աշխարհի երկրների եկեղեցիների ներկայացուցիչները:

Անցնող տարվա ընթացքում կարևոր միջոցառում հանդիսացավ ԽՔԿ-ի պատվիրակության կատարած այցը Ասիայի մի շարք երկրներ: Շուրջ մեկ ամիս տևած իր ուղևորության ընթացքում պատվիրակությունը հնարավորություն ունեցավ ջերմ հանդիպումներ ու զրույցներ ունենալու Հնդկաստանի, Պակիստանի, Շրի Լանկայի, Հոնգկոնգի, Սինգապուրի, Ֆիլիպինների և Ճապոնիայի եկեղեցիների ղեկավար անձնավորությունների, ինչպես նաև Ասիայի Քրիստոնեական կոնֆերանսի ներկայացուցիչների հետ, որոնք մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին ԽՔԿ-ի աշխատանքների նկատմամբ: Այդ հանդիպումներն առիթ հանդիսացան ԽՔԿ-ի համար սերտացնելու իր հարաբերությունները վերոհիշյալ երկրների քրիստոնյաների հետ և միաժամանակ շփումներ հաստատելու բուդդայական, մահմեդական, հինդու և այլ կրոնների պատասխանատու ներկայացուցիչների հետ:

ԽՔԿ-ի ուսումնասիրությունների հանձնաժողովները նույնպես շարունակեցին կանոնավոր կերպով գումարել իրենց հերթական հանդիպումները: Ցեղային խտրականության հարցով զբաղվող հանձնաժողովի տարեկան հանդիպումը, որը տեղի ունեցավ ԳՖՀ-ում, մանրամասնորեն քննության առավ Հարավային Աֆրիկայում վերջին ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների զարգացումը: Երիտասարդության հանձնաժողովը, որը նմանապես գումարվեց ԳՖՀ-ում, լայն վերլուծության ենթարկեց այն հարցերի ամբողջությունը, որոնք վերաբերում են լարվածության թուլացման քաղաքականությանը և ազգերի ազատագրության համար մղվող պայքարին: Աստվածաբանական հանձնաժողովի՝ Հնդկաստանում գումարված հանդիպումն առաջնորդեց կարևոր քայլ արձանագրեց խաղաղության ի նպաստ քրիստոնյաների ծավալած գործունեության աստվածաբանական հիմքի մշակման գործում: Այս հանդիպումը լավագույն առիթ հանդիսացավ, որ ԽՔԿ-ի աստվածաբան ներկայացուցիչներն օգտակար կարծիքներ փոխանակեն աշխարհի զանազան կրոնների ներկայացուցիչների հետ խաղաղության համար միասնական ջանքերի գործադրման անհրաժեշտության վերաբերյալ:

Միջազգային հարցերի գծով գործող հանձնաժողովը, որի տարեկան նիստը գումարվեց Սովետական Միությունում, իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացրեց լարվածության թուլացման քաղաքականության և աշխարհի տարբեր մասերում նրա ունեցած արդյունքների վերլուծության վրա: Այդ նիստի մասնակիցներն ընդգծեցին այն կարևոր պատասխանատվությունը, որ ծանրանում է եկեղեցիների և քրիստոնյաների վրա՝ ազգերի միջև մերձեցումը խորացնելու և առաջ մղելու գործում: Տնտեսական և քաղաքական հարցերի գծով գործող հանձնաժողովն իր հերթական նիստը գումարեց Չեխոսլովակիայում և պաշտպանեց համաշխարհային մի նոր և արդարացի տնտեսակարգ ստեղծելու վերաբերյալ առաջարկությունը, որով հնարավոր կլիներ վերջ դնել նոր զարգացող երկրների տնտեսական ներկա անբարենպաստ դրությանը: Զինաթափման հարցի գծով գործող ԽՔԿ-ի հատուկ ենթահանձնաժողովի Ճապոնիայում կայացած հանդիպման կարևոր նշանակությունն այն եղավ, որ այդ հանդիպման ընթացքում ոչ միայն շարադրվեց զինաթափման արդի վիճակի վերաբերյալ համակողմանի մի վերլուծություն, այլև միաժամանակ հանրային կարծիքի համար մշակվեցին կոնկրետ առաջարկություններ, որոնց նպատակն էր՝ գործոն օժանդակություն ցույց տալ զինաթափման ուղղությամբ կառավարությունների կողմից գործադրվող ջանքերին:

ԽՔԿ-ի գործակիցներն իրենց կարևոր օժանդակությունը բերեցին նաև Աշխարհի բոլոր կրոնների ներկայացուցիչների համաժողովի նախապատրաստման աշխատանքներին, համաժողով, որը գումարվելու է 1977 թվականի աշնանը Մոսկվայում ի նպաստ խաղաղության:

Անցնող տարվա ընթացքում մեծապես արդյունավետ եղավ նույնպես ԽՔԿ-ի գործակցությունը խաղաղության համար պայքարող աշխարհիկ կազմակերպությունների հետ: ԽՔԿ-ի ներկայացուցիչներ կանոնավոր կերպով մասնակցեցին Միավորված ազգերի կազմակերպության, Խաղաղության համաշխարհային խորհրդի, Խաղաղասեր ուժերի համաշխարհային կոնգրեսի, Աֆրոասիական համերաշխության կազմակերպության, Բրյուսելի ֆորումի և միջազգային այլ կազմակերպությունների զանազան կոնֆերանսներին:

ԽՔԿ-ի Աշխատանքային կոմիտեն որոշել է 1978 թվականին հրավիրել Բոլոր Քրիստոնյաների Խաղաղության Հինգերորդ Համաժողովը, որի նախապատրաստման աշխատանքներին առաջիկա ամիսներից ընկրսած իրենց մասնակցությունն են բերելու ԽՔԿ-ին անդամ բոլոր եկեղեցիները:



ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԶԱՎԵՆ ՔՀՆ. ՄՈՍԿՈՎՅԱՆԻ
(1922—1977)

Փետրվարի 5-ին, կիրակի օրը, իր բնակարանում ի Տեր հանգչավ տ. Զավեն քհն. Մոսկովյանը:

Հանգուցյալը ծնվել է 1922 թվականին Բեյրութում, բանվորի ընտանիքում: Սովորել և ավարտել է տեղի Մարաշ թաղամասի ազգային սրբոց Քառասնից Մանկանց միջնակարգ վարժարանը:

1946-ին նա իր ընտանիքով հայրենիք է վերադառնում և բնակություն հաստատում Կիրովական քաղաքում:

1964 թվականին, Կիրովականի հավատացյալ համայնքի համախոսականով, Շիրակի թեմի նախկին առաջնորդ հանգուցյալ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի ձեռամբ, Կիրովական քաղաքի ս. Աստվածածին եկեղեցու համար քահանա է ձեռնադրվում:

Տ. Զավեն քահանան եղել է անբասիր վարքի և անձնվեր ծառայության ներքոմով հոգևորականի տիպար: Նրա հոգևոր հովվությունը գնահատվել է Շիրակի թեմի այժմու առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաբարյանի կողմից, որի միջնորդությամբ էլ Վեհափառ Հայրապետը 1974 թվականին նրան շնորհում է քահանայական լանջախաչ:

Հանգուցյալ տեր հոր թաղումը կատարվում է փետրվարի 6-ին, երկուշաբթի օրը: Հանգուցյալի վերջին օծումը կատարում է Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաբարյանը:

Հանգուցյալի աճյունը ամփոփվում է Կիրովականի քաղաքային գերեզմանատանը:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Լոնդոնում «Հայ երաժշտական ինստիտուտ»-ի հիմնադրության առթիվ 3
Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց հայոց արևելյան թեմի տարեկան թեմական պատգամավորական ժողովին . . 5
Վեհափառ Հայրապետի ողջույնի և օրհնության գիրը՝ ուղղյալ Միացյալ Նահանգաց հայոց արևելյան թեմի հոգևորականաց համագումարին 7
Սրբոց Վարդանանց զորավարաց տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում 9
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 11
ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ—Սուրբ Ղևոնդյանք 13
ՎԱՉԳԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ, ՍՈՐԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆԴԱԼՅԱՆ—Մեծ պահոց խոհեր 16
Ա. Հ.—Սուրբ Աթանաս Հայրապետ Ալեքսանդրացի 20
ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ—Վազգեն Ա Հայրապետ Հայոց 31
ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱՆԱՅԱՆ—Էջմիածնի նվիրակությունը ԺԸ դարում 48
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱՅԱՅԱՆ—Խաչի զարդամոտիվները կապադովկահայ գորգարվեստում 55
Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի գործունեությունը 1976 թվականի ընթացքում 62
Հանգիստ արժանապատիվ տ. Զավեն քհն. Մոսկովյանի 64

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 23.2.1977 թ.: Ստորագրված է տպագրության 4.4.1977 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 143:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.